



ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ

**20 ՏԱՐԻ**

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ  
ՃԱՆԱԴԱՐՀՈՎ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ  
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

*13 մայրի, 2012 թ.*

32(47.925)  
հ-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



**ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ.**

**20 ՏԱՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ**

**ՃԱՆԱԴԱՐՀՈՎ**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ**

4674

13 մարտի, 2012 թ.



**ՁԱՆԳԱԿ**  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ 327:06  
ԳՄԴ 66.4  
Հ 247

**Խմբագիր՝ Վահան Բայրությունյան**  
**Պատասխանատու ըբարտուղար՝ Գոհար Իսկանդարյան**

Հ 247 Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով: Միջազգային գիտաժողովի նյութեր (13 մարտի, 2012 թ.)՝ ՀՀ ԳԱԱ-եր.: Ձանգակ, 2012.-112 էջ:

Ժողովածուում զետեղված են 2012 թ. մարտի 13-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի կողմից համատեղ կազմակերպված «Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով» միջազգային գիտաժողովի հայ մասնակիցների զեկուցումները, որոնք նվիրված են Հայաստան-Իրան քաղաքական, տնտեսական, գիտամշակութային բարեկամական կապերի հիմնական ուղղությունների համակողմանի վերլուծությանը:

Նախատեսված է հասարակագետների, դիվանագետների, փորձագետների, ուսանողների, ինչպես նաև հայ-իրանական կապերով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 327:06  
ԳՄԴ 66.4

ISBN 978-9939-68-106-1

© «Ձանգակ-97» ՍՊԸ, 2012

**ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Մուտքի խոսք ..... 4  
Սաֆրաստյան Ռուբեն ..... 10

**Պողոսյան Արթուր**  
*Հայաստան-Իրան. 20 փարի համագործակցության ճանապարհով*..... 12

**Բայրությունյան Վահան**  
*Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ.:*  
*Հայացք երկու փասանյակ հետալորությունից*..... 15

**Հովհաննիսյան Նիկողայ**  
*Այսօրվա խոնջնիկ մտքեցումը Խորհրդային Միության հետ հարաբերությունները կարգավորելու հարցում և դիրքորոշումը*  
*Հայաստանի ու հայության համար* ..... 55

**Կոզմոյան Արմանուշ**  
*Իսլամի սուրբ գիրքը քարգանական զարգացումներում*..... 78

**Կոստիկյան Քրիստինե**  
*Հայ-իրանական փոխհարաբերությունների պատմության հարցերն ըստ Մաքենադարանի պարսկերեն վավերագրերի*..... 83

**Իսկանդարյան Գոհար**  
*Հայաստան-Իրան հարաբերություններն*  
*էներգետիկայի ոլորտում* ..... 91

**Փարսադանյան Վրեժ**  
*Հայ-իրանական գրական առնչությունների պատմությունից*..... 97

Արևելագիտության ինստիտուտի՝ իրանագիտության ոլորտին նվիրված հրատարակությունները (1960-2012 թթ.)..... 106

## Մուտքի խոսք

1991 թ. սեպտեմբերի 21-ին, երբ հայ ժողովրդի հավաքական կամբով ծնունդ առավ Հայաստանի երրորդ Հանրապետությունը, հարավային հարևան Իրանի Իսլամական Հանրապետությունն առաջին պետություններից մեկն էր, որ ձանաչեց Հայաստանի անկախությունը (1991 թ. դեկտեմբերի 25-ին): Քիչ անց՝ 1992 թ. փետրվարի 9-ին, երկու երկրների միջև հաստատվեցին լիարժեք դիվանագիտական հարաբերություններ: Հետևաբար 2012 թվականը հիշարժան տարեթիվ է հայ-իրանական դարավոր հարաբերությունների տարեգրության մեջ: Հիրավի, երկու տասնյակ տարի առաջ վերջնականապես բեկվեց հայ և իրանական ժողովուրդների ընդհանուր ձակատագիրը: Երանց սահմանները որոշող Արաքս գետը Հայաստանի դառնում էր ոչ թե նրանց բաժանող, այլ միացնող գետ, իսկ հայ-իրանական սահմանը դառնում էր խաղաղության ու բարեկամության սահմանը: Տարածաշրջանային իրողությունների համատեղատում ծնունդ էր առնում մի այնպիսի իրավիճակ, երբ լայն հնարավորություններ էին ստեղծվում հայ-իրանական տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերությունների ծավալում ու անկաշկանդ զարգացման համար: Այսուհետև շատ հարցերում հայ և իրանական ժողովուրդներն ունենալու էին ընդհանուր կամ իրար չափազանց մոտ երկրաքաղաքական շահեր, բազմաթիվ համանման խնդիրներ, տարբեր տեսակի ընդհանրություններ, իսկ առանձին դեպքերում նաև նպատակների միասնություն:

Նկատի ունենալով Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասի տարածաշրջանում ստեղծված երկրաքաղաքական քարոզ իրադրությունը, երբ հիմնովին խախտվել էին հարևան պետությունների միջև նախկինում եղած տնտեսական ու տրանսպորտային կապերը, երբ Հայաստանի մանուկ Հանրապետությունը

նր շրջափակման օղակի մեջ էր առնվել Ադրբեջանի և Թուրքիայի կողմից, Ղարաբաղում ընթանում էր ծանր պատերազմ, իսկ հյուսիսային հարևան Արաստանում, որը Հայաստանի համար արտաքին աշխարհի դուրս գալու միակ տարանցիկ ձևնապարհն էր, տիրում էր անկայուն վիճակ, քնականաքար Հայաստանի համար իմպերատիվներից մեկն էր Իրանի հետ մերձեցումն ու հարաբերությունների կայուն զարգացումը: Դա նրա համար ոչ միայն կենսական անհրաժեշտություն էր, այլև քնական պահանջ, պատմաաշխարհագրական պարտադրված իրողություն: Ընդ որում, ԻԻՀ-ի հետ միջպետական քաղաքականությունը կառուցելիս նկատի էր առնվում այն հանգամանքը, որ այդ հարաբերությունների համար առկա էր լավ պատմական հիմք. երկու երկրների միջև գոյություն չունեին տարածքային վեճեր, տարբեր քնույթի վիճահարույց խնդիրներ և, առհասարակ, հարաբերությունները մթազնող այլևայլ գործոններ: Երևանում պարզորոշ կերպով գիտակցվում էր նաև այն իրողությունը, որ Իրանը նախ և առաջ պատուհան է Հայաստանի համար քացված դեպի արտաքին աշխարհը, քանի որ այդ երկիրն իր առանձնահատուկ դիրքով, վիթխարի տարածքով, համաշխարհային նշանակություն ունեցող կոմունիկացիաներով և այլև մի յուրահատուկ կապող օղակ է ոչ միայն իր սահմանակից պետությունների, այլև ողջ տարածաշրջանների՝ Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Հնդկական թերակղզու, արաբական աշխարհի հետ: Հիրավի, Իրանը համաշխարհային մասշտաբով մի տարանցիկ կամուրջ է, աշխարհի կարևորագույն ռազմավարական շրջաններից մեկը: Այդ երկիրը նաև Պարսից ծոցի գտնում առանցքային նշանակություն ունեցող պետություններից մեկն է, որի քաղաքականությունից և նշանակալի չափով կախված իրադրությունը ոչ միայն այդ տարածաշրջանում, այլև ամբողջությամբ վերցրած Մերձավոր ու Միջին Արևելքում: Մեր օրերում Իրանն ունի ոչ միայն պատկառելի քնական ու մարդկային ռեսուրսներ, այլև հսկայական տնտեսական, ռազմական, գիտական ու տեխնոլոգիական ներուժ: Անժխտելի է նաև իրանական գործոնի ազդեցությունը միջազգային



հարաբերությունների արդի համակարգի վրա: Մասնավորապես այդ երկիրը հանդիսանում է Մերձավոր ու Միջին Արևելքում ռազմաքաղաքական հարաբերակցությունը հավասարակշռող ազդու ուժ, ինչպես նաև արևմտասիական տարածաշրջանային քաղաքականության վճռական գործոն:

Կասկածից վեր է, որ Իրանի Իսլամական Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատվելուց հետո Հայաստանի համար ստեղծվեցին մի շարք նոր՝ իրենց նշանակությամբ քացառիկ կարևոր և իր նախընթացը չունեցած իրողություններ: Ի տարբերություն խորհրդային շրջանի, երբ ազգային հանրապետությունները զուրկ էին նույնիսկ սահմանակից երկրների հետ անմիջական շփումներ ունենալու հնարավորությունից, Հայաստանը երկար ընդմիջումից հետո նույն տարածաշրջանում գտնվող երկրների հետ կապերի մեջ էր մտնում արդեն որպես անկախ և ինքնիշխան պետություն: Այլ կերպ ասած՝ Հայաստանը հնարավորություն ստացավ ընդգրկվելու տարածաշրջանային քաղաքական կյանքի մեջ՝ որպես հարավկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական համակարգի անդամ:

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումն իրանական ժողովրդի ու պետության կողմից ի սկզբանե ընկալվեց որպես ինքնըստիներյան հասկանալի ու բնականոն մի իրողություն, քանի որ հայ և իրանական ժողովուրդները դեռևս անհիշելի ժամանակներից ապրել են կողք կողքի, պատմական նույն միջավայրում՝ մշտապես գտնվելով սերտ շփումների մեջ:

Շնեց այդ պատճառով Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օրվանից Թեհրանը նրա հետ միջպետական հարաբերություններին տվեց առաջնայնություն ու մեծ կարևորություն՝ նրան համարելով կարևոր քաղաքական գործընկեր:

Բնավ պատահական չէ, որ անցած երկու տասնյակ տարիների ընթացքում հայ-իրանական հարաբերություններն ամենատարբեր

րևազավառներում զարգացել են վերընթաց գծով: Նշված ողջ ժամանակաշրջանի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական դեկավարությունը նորանկախ Հայաստանի նկատմամբ վարել է կառուցողական, քաբիրացիական և լայն համագործակցության քաղաքականություն, որն իրավացիորեն ստացել է «թավաշյին քաղաքականություն» անվանումը: Հայ ժողովուրդը և հայկական պետությունը նույն զգացումներն են տածել իրանական ժողովրդի նկատմամբ: Թեհրանում քաջ գիտակցում են, որ Հայաստանի Հանրապետությունը թերևս Հարավային Կովկասի այն միակ պետությունն է, որը կարևորում է Իրանի ներգրավվածությունը Կովկասում և համարում է, որ տարածաշրջանում կայունության որևէ համակարգի ստեղծումը ամբողջական չի լինի առանց Իրանի մասնակցության և նրա շահերը հաշվի առնելու: Բարիդրացիությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի համար անկասկած արժևորվում է նաև այն հանգամանքով, որ այդ պետությունն իսլամական աշխարհի և մասնավորապես Իսլամական համերաշխության կազմակերպության ծանրակշիռ ներկայացուցիչներից է:

Իրանը նաև սփյուռքահայ խոշորագույն համայնքներից մեկի՝ իրանահայության հայրենիքն է: Իսկ իրանահայությունը մեր սփյուռքի առավել վառ ազգային հայեցի նկարագիր ունեցող հատվածներից մեկն է: Հայ համայնքի հանդեպ իրանական պետության և ժողովրդի վերաբերմունքը շեշտված քայացական է, ավելին՝ եղբայրական: Իրանական ժողովուրդը չափազանց քարձր է գնահատում իրանահայության ավանդը երկրի տնտեսության, լուսավորության մշակույթի զարգացման գործում:

Արդեն քսան տարի է, ինչ Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը համագործակցում են միմյանց հետ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում: ԻԻՀ կառավարությունը Ղարաբաղի հարցում վարում է հավասարակշռված քաղաքականություն՝ համարելով, որ այդ հիմնահարցը պետք է լուծվի արդարության հիմքի վրա: Կարևորելով իր հյուսիսային սահմաններում խաղաղության և կայունության հաստա-

տումը՝ Իրանը մշտապես փորձում է օգտակար լինել հակամարտող կողմերին հարցը խաղաղ կարգավորելու գործում:

Հայտնի է, որ Իրանը քազմազգ պետություն է և շատերին է հրապուրում նրա ապակայունացումը էթնիկական հողի վրա: Գաղտնիք չէ նաև, որ ժամանակ առ ժամանակ Ադրբեջանի Հանրապետության իշխանություններն առաջ են քաշում «Միացյալ Ադրբեջանի» կամ ինչպես իրենք են ասում՝ «երկու Ադրբեջանների» միավորման հարցը՝ նկատի ունենալով Իրանական Ադրբեջանն ու Ադրբեջանի Հանրապետությունը: Նման մտավարժանքները և համաթուրքականության ոգով ծավալվող սանձարձակ ու սադրիչ քարոզչությունն անվերապահորեն դատապարտվում է հայ ժողովրդի կողմից, որը մշտապես հանդիսացել է թուրք ռազմաշունչ նացիոնալիզմի գոհր:

Այսօր Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրն է ապահովել մեր անմիջական միջավայրի կայունությունն ու տևական խաղաղությունը, որը հիմնական երաշխիքն է Հայաստանի անվտանգության ու տնտեսական զարգացման համար: Այդ առումով ներկայումս հատկապես կարևորվում է անմիջական հարևանների ու սահմանակից պետությունների՝ Վրաստանի ու Իրանի հետ արդեն իսկ վերընթաց հարաբերությունների ընդլայնումն ու նոր հեռանկարների մշակումը:

Կասկածից վեր է, որ Հայաստանի անկախացումից ի վեր՝ անցած քսան տարիների ընթացքում, Իրանը մշտապես եղել և մնում է հայ ժողովրդի իրական բարեկամների շարքում: Դրա լավագույն ապացույցը և առիավատչյան նշված ժամանակաշրջանում գնալով ամրապնդվող հարաբերություններն են, որոնք զարգանում են կայուն և հավասարակշռված հիմքի վրա, բարեկամության, համագործակցության, անկեղծության, վստահության և կառուցողական ոգով: Հազարավյակների պատմությամբ շաղկապված մեր երկու երկրների ժողովուրդների առավել խորը փոխըմբռնման և փոխճանաչման անհրաժեշտությունն ապագայում գնալով ավելի ու ավելի է հրամայական դառնում: Հայաստանի Հանրապետությունն Իրանում անցած

քսան տարիների ընթացքում ձեռք է բերել բարձր վարկանիշ և պետական հնդիանություն: Նրա պահպանումը հայ ժողովրդի ազգային ու պետական շահերի տեսակետից ունի կենսական նշանակություն:

Այսօր, երբ աշխարհն ապրում է իր շրջադարձային պահը, երբ այն տարածաշրջանը, որի մեջ ընդգրկված են Հայաստանն ու Իրանը, բառիս բուն իմաստով փոթորկվում են, մեր խորին համոզմամբ՝ հայ և իրանական ժողովուրդների երթը XXI դարի չավիղներով ընթանալու է փոխադարձ հարգանքի, բարեկամության ու համագործակցության այն նույն ոգով, որի հիմքը դրվել է ուղիղ քսան տարի առաջ:

Քաղաքական այս եզրահանգումն անցել է պատմական փորձաքննության մի տևական շրջան և ունի իր համոզիչ ու կուտ տրամաբանությունը:

## ԲԱՅՔՈՒՐԴՅԱՆ ՎԱՀՆՆ

*պ. գ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արևելագիտության  
ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ*

## ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՏՅԱՆ

*Պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արևելագիտության  
ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Հարգարժան պարոն դեսպան, հարգարժան նախագահող, հարգարժան պետական այրեր, հարգելի ներկաներ:

Նախաձեռնելով սույն գիտաժողովը՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը (ՀՀ ԳԱԱ ԱԻ) և Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) դեսպանության մշակույթի կենտրոնը երկու կարևոր նպատակ ունենին:

Առաջինը՝ ի մի բերել 20 տարվա ընթացքում այն ձեռքբերումները, որոնք ի հայտ են եկել հայ-իրանական բարեկամական հարաբերություններում, և երկրորդը՝ այդ հենքի վրա փորձել նախագծել երկու բարեկամ ժողովուրդների և երկրների հարաբերությունների հետագա զարգացման նոր տեսլականը:

Պատահական չէ, որ այս գիտաժողովի նախաձեռնությամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ ԱԻ-ն, որն ունի տասնամյակների խորն ավանդույթներ՝ Իրանի քաղաքականության, տնտեսության, մշակույթի, գրականության, հոգևոր կյանքի ուսումնասիրության քննազննում: Տասնամյակներ շարունակ Արևելագիտության ինստիտուտի մասնագետները ջանափրաբար իրենց ավանդն են ներդրում երկու երկրների միջև գիտական ու մշակութային համագործակցության զարգացման քննազննում:

Պատահական չեմ համարում նաև այն հանգամանքը, որ այսօր մեր ինստիտուտի երկու առաջատար իրանագետներ՝ Վահան Բայբուրդյանը և Արմանուշ Կոզմոյանը, որոնք, չեմ չափազանցնում, հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլ նաև մեր երկրի սահմաններից դուրս, Իրանի Հանրապետության դեսպանի կողմից ստացան պատվավոր պարգևներ:

Ընդգծեմ, որ անցած 20 տարիների ընթացքում մեր երկրների հարաբերություններն ապացուցեցին, որ հիմնվում են բարեկամության

և կայունության սկզբունքի վրա: Բարձր եմ գնահատում այդ ժամանակահատվածում Իրանի օգնությունը հայ ժողովրդին, նորանկախ Հայաստանին:

Չեմ կարող չնշել Իրանի տարածաշրջանային կարևոր նշանակությունը: Նա հանդես է գալիս որպես կայունացնող գործոն, որն անց է կացնում հավասարակշռված և զգուշավոր քաղաքականություն Հարավային Կովկասում, հաջողությամբ դիմակայում է Թուրքիայի վտանգավոր գործողություններին՝ նպաստելով մեր տարածաշրջանում խաղաղության պահպանմանը:

Հաջողություն եմ մտղթում այսօրվա գիտաժողովի աշխատանքներին: Համոզված եմ, որ կարդացվելիք զեկուցումները ոչ միայն հանգամանալից և գիտական բարձր մակարդակով կներկայացնեն հայ-իրանական համագործակցության համարյա րոլոր կարևոր ոլորտները, այլ նաև կնպաստեն մեր ժողովուրդների միջև բարեկամության հետագա ամրապնդմանը:

*Շնորհակալություն*



## ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ մշակույթի փոխնախարար

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ.

## 20 ՏԱՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԳԱՐՀՈՎ

ԻՒՀ մեծարգո՛ դեսպան, հարգարժան ակադեմիկոսներ, պատգամավորներ, գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ, ինձ համար շատ հաճելի է այսօր գտնվել այստեղ, մասնակցել գիտաժողովի աշխատանքներին և հայ-իրանական մշակութային հարաբերությունների վերաբերյալ ՀՀ կառավարության մոտեցումները բարձրաձայնել: Ընդհանրապես հայ և իրանցի ժողովուրդների բարեկամության արմատները ձգվում են դեպի դարերի խորքը, և, ապրելով կողք կողքի, դարերի ընթացքում երկու ժողովուրդներն իրենց կյանքի ճանապարհը միախույսել են, դիմակայել են քաղում փորձությունների, փոխհարաբերվել են իրար հետ: Այս փոխհարաբերություններում կարևոր և ուրույն տեղ են ունեցել, ինչպես պրն դեսպանը նշեց, մշակութային հարաբերությունները երկու երկրների ժողովուրդների միջև, որոնք, կարելի է ասել, վերջին տարիներին տարեցտարի ավելի են ամրապնդվում, տարբեր ձևաչափերով զարգացում են ապրում: Անկախ Հայաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո՝ 1992 թ.–ից սկսած, այդ հարաբերությունները, մշակութային առումով, նոր որակ են ստացել: Արձանագրվել են բարձրաստիճան պաշտոնյաների փոխաջեկություններ, ընդլայնվել է երկու երկրների միջև մշակութային համագործակցության իրավապայմանագրային դաշտը, ուղղակի համագործակցություն է ձևավորվել մշակութային տարբեր հաստատությունների միջև: Ցանկանում եմ տեղեկացնել, որ ՀՀ մշակույթի նախարարությունը ԻՒՀ հետ, յուրաքանչյուր 2–3 տարին մեկ ստորագրում է կոնկրետ գործողությունների պայմանագիր և մշակույթի ոլորտում իրականացնում համագործակցություն՝ խոր գիտակցումով, որ այդ համագործակցու-

թյունն, իսկապես, մշակութային առումով մշակույթների յուրօրինակ երկխոսություն է և փոխհարստացում է և՛ հայկական հնամենի մշակույթը, և՛ իրանական մշակույթը: Այս քսան տարիների ընթացքում մշակութային հարաբերությունների դիմամիկան ուղղակի շնչտակի է արձանագրվել: Դժվար է այսօր թվարկել այն բոլոր միջոցառումները և համագործակցության ձևաչափերը, որոնք իրականացվում են մեր երկրների միջև: Քսան տարվա համագործակցության ընթացքում իրենց հետքն են թողել հայաստանյան և իրանական քաղմաթիվ թատերախմբեր, ազգային և ժամանակակից երաժշտարավեստի նվիրյալներ, անվանի նկարիչներ, ձևագործ վարպետներ, քանդակագործներ, շատ ակտիվ է գրողների միջև համագործակցությունը, թարգմանչական գործունեությունը և այլն: Հայ-իրանական մշակութային հարաբերություններում արձանագրված կարևորագույն ձեռքբերումներից ենք համարում ԻՒՀ կառավարության ցանկերի շնորհիվ Իրանում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանները ՅՈՒՆԵՍԿՕ–ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում գրանցումը: Իսկ անցած տարի՝ 2011 թ.–ին, հայ-իրանական մշակութային հարաբերությունները, կարելի է ասել, թանկարժեքի են նոր որակական փուլ, ինչի արդյունքում մենք իրականացրինք մի միջոցառում, որը մշակութային համագործակցության քնազավառում էր, բարձր մակարդակի ձևաձափ էր. այն անվանվում էր *հայ-իրանական բարեկամության օրեր*: Իրանցի մեր գործընկերների հետ անցկացրինք բարեկամության օրեր, որոնք անցած տարի կայացան Սյունիքի մարզում՝ Մեղրիում, և, օգտվելով այս առիթից, ուզում եմ մեծ բավականությամբ նշել, որ իրանցի մեր գործընկերները մեծ մշակութային այսպես ասած, դեսանտով էին գտնվում Մեղրիում և ներկայացնում էին իրանական հնագույն մշակույթի ողջ ներկայատվը: Իհարկե, միջոցառմանը միացան նաև մեր հայկական խմբերը, կատարողական արվեստի, կերպարվեստի ներկայացուցիչներ, և Մեղրիում բացվեց նաև հայ-իրանական բարեկամության հուշարձանը: Մենք պայմանավորվածություն ունենք իրանցի մեր գործընկերների հետ, որ նշված հայ-իրանական



քարեկամության օրերի ձևաչափը շարունակվելու է նաև Իրանում՝ Իրանի տարածքում: Նշեմ, որ այս ձևաչափը լայն արձագանք գտավ նաև ողջ Իրանում և մասնավորապես Մյունխաց աշխարհում: Յուրաքանչյուր տարի թե՛ Հայաստանում, թե՛ Իրանում համագործակցության ձևաչափով կազմակերպվում են մշակութային բազմաթիվ միջոցառումներ՝ հնարավորություն ընձեռնելով հայ և իրանցի արվեստասերներին ծանոթանալու և շփվելու երկու երկրների հնագույն մշակույթի պատմականների հետ: Նորանկախ Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև մշակութային հարաբերությունների կայուն, դինամիկ զարգացման գործում այսօր մեծ է Հայաստանում Իրանի դեսպանության մշակույթի կենտրոնի դերը: Մեր համագործակցությունը, կարելի է ասել, ամենօրյա է՝ բազմաբնույթ միջոցառումների ձևով, ինչ-որ տեխնիկական խնդիրներ համաձայնեցնելու առումով, և ես, օգտվելով առիթից, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել պրն դեսպանին և մշակույթի կենտրոնին, որ այսքան օպերատիվ ձևով մենք աշխատում ենք միմյանց հետ, և, կարծում եմ նաև, որ այս համագործակցության շնորհիվ է, որ այսօր ողջ դիվանագիտական հարաբերությունների այս համատեղատեսում մշակութային հարաբերությունները ծանրակշիռ դերակատարում ունեն:

Հարգելի՛ ներկաներ, ես չեմ ուզում երկար ներկայացնել այն խնդիրները, որ այսօր կան հայ-իրանական մշակութային հարաբերություններում. դրանք միայն գործնական խնդիրներ են, նաև հաճելի խնդիրներ, որ այսօր շատ հեշտությամբ կարողանում ենք մենք և մեր իրանցի գործընկերները լուծել մշակույթի ոլորտում: Բարձր գնահատելով հայ-իրանական մշակութային համագործակցության ներկա մակարդակը՝ ուզում եմ վստահություն հայտնել, որ հետագա տարիներին ևս այն կպարզանա և կամրապնդվի՝ ի շահ մեր երկու ժողովուրդների քարեկամության և ի քարոթություն ՀՀ-ի և ԻԻՀ-ի: Թույլ տվեք ևս մեկ անգամ ողջունել գիտաժողովի մասնակիցներին և մաղթել բեղմնավոր աշխատանք:

Շնորհակալություն

## ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Պարզանկան զինությունների ղեկավար, պրոֆեսոր,  
 Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի  
 Հանրապետության առաջին արտակարգ և լիազոր դեսպան,  
 ՀՀ ՊԱՆ նախնազորության ինստիտուտի Իրանի քամիի վարիչ

### ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-1998 ԹԹ. ՀԱՅԱՑՔ ԵՐԿՈՒ ՏԱՄՆԱՄՅԱԿ ՀՅՈՒՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ-իրանական հարաբերություններն ունեն դարերի պատմություն: Պատմականորեն ո՛չ մի երկիր և ո՛չ մի ժողովուրդ աշխարհագրական, հոգևոր-մշակութային և այլ առումներով այնքան մոտ չի եղել հայ ժողովրդին, որքան Իրանն ու իրանական ժողովուրդը:

Նորագույն ժամանակներում իրենց վրայից թոթափելով անցյալի քնոը և դիմանալով պատմության քազում փորձություններին՝ հայ և իրանական ժողովուրդներն արձանագրեցին քարեկամության ու փոխադարձ վստահության նոր էջեր: Իրանն առաջին պետություններից մեկն էր, որ պաշտոնապես ձևանաչել էր Հայաստանի առաջին Հանրապետության անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ (1919 թ. հուլիսի 7-ին): Հայաստանի մանուկ Հանրապետության համար այդ դժվարին օրերին իրանական կառավարությունը չզպացավ իր քարյացակամ վերաբերմունքը դրսևորել հայ ժողովրդի նկատմամբ՝ տնտեսական և քարտյական աջակցություն ցուցաբերելով հայկական նորաստեղծ պետությանը:

1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության հռչակումը հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ կմտնի որպես ամենանշանակալի օրը: Այդ իրադարձությունը մեր երկրի համար առաջին հերթին կարևորվում է նրանով, որ տասնամյակների ընթացքում առաջին անգամ Հայաստանը հնարավորություն էր ստանում վարելու անկախ արտաքին քաղաքականություն՝ ելնելով իր ազգային շահերից: Անկախության ձեռքբերումից հետո հայ ժողովրդի առջև

ծառացած էր մի վզեմ նպատակ՝ սեփական և լիարժեք կյանքի կառուցումը: Ի պատիվ հայ ժողովրդի՝ պետք է ասել, որ նա չհապաղեց օգտվելու այդ քարեպատեհ հնարավորությունից: Այդ մեծ առաքելության իրականացման գործում իր խոշոր դերակատարությունն ուներ հայ դիվանագիտությունը, որին վիճակված էր քար առ քար շարելու հայոց դիվանագիտության շենքը:

Երկու տասնամյակ առաջ հայոց անկախ պետականության վերականգնումն ուղեկցվում էր դիվանագիտության մեջ իրատեսական դիրքորոշման գերակայությամբ, որի նպատակն էր հավասարակշռված մոտեցումներ մշակել ինչպես հարևան պետությունների, այնպես էլ համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների նկատմամբ:

Անկախության ձեռք բերումից հետո Հայաստանի արտաքին քաղաքականությունը հիմնված էր երկու կարևոր դրույթի վրա: Առաջինն այն էր, որ առանց քացառելու այլ գործոններ, ընդունվում էր այն սկզբունքը, որ պետության ու ժողովրդի անվտանգությունը կախված է բոլոր հարևանների հետ հարաբերությունների կայունացումից, առկա հակամարտությունների խաղաղ բանակցությունների միջոցով լուծումից և տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացումից, որոնք մեզ պետք է առաջնորդեն տարածաշրջանում հավաքական անվտանգության համակարգի:

Երկրորդն այն է, որ ճանաչելով հանդերձ հետզհետե փոքրացող աշխարհում միմյանցից կախված պետությունների իրական շահերը մեր տարածաշրջանում՝ Հայաստանը համաշխարհային մրցակցության մեջ չի կարող մաս կազմել իրար հակադրվող բյուկներից որևէ մեկին, որոնք, տեղական հակամարտություններին պարտադրելով միջազգային քնույթ, բարդացնում են արդեն իսկ քարո Վիճակը<sup>1</sup>:

1992 թ. սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 47-րդ նստաշրջանում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարար-

րեց. «Ելնելով վերը նշված երկու հիմնադրույթներից՝ Հայաստանը փորձել է պատմության բեռը առիթի վերածել՝ վերագտնելու հազարամյա արմատներն այս տարածաշրջանում վերահաստատելու տարածաշրջանի ժողովուրդների հետ մշակույթների ընդհանրությունը և էթնիկական ու կրոնական տարբերությունները վերածելու հարստության աղբյուրի՝ այնպես, որ այդ տարբերությունները նպաստեն մեր ընդհանուր տան խնդիրների լուծմանը»<sup>2</sup>:

Հայաստանի Հարապետությունն իր գոյության հենց սկզբից իր արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը բևեռել էր իր անմիջական հարևանների հետ հարաբերությունների զարգացման վրա: Դա երա համար ոչ միայն կենսական անհրաժեշտություն էր, այլև քնական պահանջ, պատմաաշխարհագրական պարտադրված իրողություն: Ուստի պատահական չէ, որ ի սկզբանե Հայաստանի նորոգ պետության արտաքին քաղաքականության մեջ սահմանակից ու դարավոր հարևան երկրի՝ Իրանի հետ լիարժեք դիվանագիտական հարաբերությունների հաստատումը գտնվում էր առաջնահերթությունների ցանկում: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթին տված 1990 թ. հոկտեմբերի 9-ի հարցազրույցում Լ. Տեր-Պետրոսյանը նշել է, որ՝ «Իրանի հետ Հայաստանը 1828 թվականից ի վեր որևէ կոնֆլիկտ չի ունեցել, ուստի այս առումով հոգեբանական տեսակետից որևէ արգելք չկա ոչ հայ ժողովրդի, ոչ էլ Իրանի համար: Կրոնական գործոնն այստեղ, ինձ թվում է, որևէ դեր խաղալ չի կարող, որովհետև թե՛ Հայաստանում, թե՛ Իրանում կան ուժեր, որոնք գիտակցում են, որ պետական շահերը վեր են կրոնականից, և հարաբերությունները կարող են հաստատվել պետական այդ շահերի գիտակցությամբ: Ես որևէ արգելք չեմ տեսնում»<sup>3</sup>: Իր հերթին Իրանի Իսլամական Հանրապետության արձագանքը այդ հարցում ակնթարթային էր: Իսկապես, Իրանն առաջին պետություններից մեկն էր,

649

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>2</sup> Լևոն Տեր-Պետրոսյան, Ընտրանի, ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Երևան, 2006, էջ 135:



որ պաշտոնապես ճանաչեց հայ ժողովրդի անկախ գոյության իրավունքը և նրա հետ հաստատեց դիվանագիտական հարաբերություններ: 1991 թ. դեկտեմբերի 25-ին Թեհրանը հատուկ ուղերձով հաղորդեց Հայաստանի իշխանություններին, որ ճանաչում է Հայաստանի անկախությունը: 1992 թ. փետրվարի 8-10-ը պաշտոնական այցով Իրանի Իսլամական Հանրապետությունում էր գտնվում ՀՀ պաշտոնական պատվիրակությունը՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Բաֆֆի Հովհաննիսյանի գլխավորությամբ: Տեղի ունեցած քանակ-ցույցությունների ավարտից հետո՝ 1992 թ. փետրվարի 9-ին (իրանական 1370 թ. Բահման ամսի 20-ին), ՀՀ արտգործնախարարը և ԻԻՀ արտաքին գործերի նախարար Ալի Աքբար Վելայաթին Թեհրանի «Էսթեղլա» հյուրանոցի հանդիսությունների սրահում ստորագրեցին հռչակագիր՝ Հայաստանի և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ: Հռչակագրում նշվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը, առաջնորդվելով բարիդրացիական հարաբերությունների, տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի և միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքներով.

- Նկատի ունենալով եկուստեք ձգտումը ընդլայնելու և զարգացնելու պատմական կապերը,
- Ընդունելով, որ երկու հարևան երկրների երկկողմանի փոխշահավետ հարաբերությունները բարենպաստ պայմաններ կստեղծեն տարածաշրջանում կայունության, խաղաղության և անվտանգության հաստատման համար.

Երկու երկրների միջև քաղաքական, առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային կապերի ամրապնդման, երկու հարևան ժողովուրդների բարեկամական հարաբերությունների զարգացման և ամրապնդման համար հնարավորություններ ստեղծելու նպատակով համաձայնության եկան հաստատել դիվանագիտական հարաբերություններ՝ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև և երևանում ու Թեհրանում

իլմինը դիվանագիտական ներկայացուցչություններ՝ դեսպանատների մակարդակով, ոչ ոչ, քան մեկ ամսվա ընթացքում<sup>4</sup>:

Նույն օրը (փետրվարի 9-ին) ստորագրվեց նաև Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիր, որով կողմերը հավաստում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատելու իրենց մտադրությունը՝ որպես գործունեության ելակետեր ընդունելով փոխադարձ տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի և միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքները<sup>5</sup>: 1992 թ. փետրվարի 10-ին ՀՀ արտգործնախարար Բ. Հովհաննիսյանին ընդունեց ԻԻՀ նախագահ Աքբար Հաշեմի Բաֆասանջանին: Բ. Հովհաննիսյանը հանդիպեց նաև ԻԻՀ մեջլիսի նախագահ Մեհդի Քյարրուբիի հետ:

ԻԻՀ արտաքին գործերի նախարար Ալի Վելայաթիի և ՀՀ արտաքին գործերի նախարարի միջև տեղի ունեցած քանակցություններից հետո կողմերը ստորագրեցին «հռչակագիր հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին», որը 21 հոդվածից բաղկացած համապարփակ մի փաստաթուղթ էր՝ նախատեսված տևական ժամանակների համար: Այն շոշափում էր հարաբերությունների բազմաթիվ ու բազմապիսի քննազավտներ: Առանց չափազանցության կարելի է ասել, որ անցած երկու տասնյակ տարիների ընթացքում մեր երկու երկրների հարաբերությունները գլխավորապես խառնվում էին այդ փաստաթղթի վրա:

Հռչակագրում մասնավորապես կողմերը պայմանավորվում էին հետևյալի մասին, որ մշտական կապեր կհաստատեն տարբեր մակարդակներում, ըստ որի՝ արտգործնախարարները պարբերաբար՝ 6 ամիսը մեկ անգամ, երևանում և Թեհրանում կհանդիպեն միմյանց և կխորհրդակցեն քաղաքական հարցերի շուրջ:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ արտգործնախարարության «Դիվանագիտական քաներ», էջ 19:

<sup>5</sup> ՀՀ արտգործնախարարության «Դիվանագիտական քաներ», էջ 19:

<sup>6</sup> «Հայաստանի Հանրապետություն», 1992 թ., փետրվարի 13:

Երկու երկրների միջև հաղորդակցության գործը դյուրացնելու նպատակով միջոցներ կձեռնարկեն Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև Մեղրու շրջանում սահմանային կետ բացելու ուղղությամբ՝ նկատի ունենալով, որ այն վերածվի միջազգային անցումային կետի: Կողմերը համաձայնության էին գալիս Մեղրիի սահմանագծում մաքսատներ հիմնելու վերաբերյալ և հայտնում իրենց պատրաստակամությունը մաքսային ծառայությունների ասպարեզում համագործակցելու համար:

Պայմանավորվածություն էր ձեռք բերվում հատուկ ուշադրություն դարձնելու տնտեսական երկկողմանի համագործակցության զարգացման հարցերին: Ընդ որում, հատուկ նշվում էր, որ այդ նպատակին հասնելու համար կձեռնարկվեն միջոցներ իրավական և պայմանագրային հիմք ստեղծելու ուղղությամբ:

Ելնելով առևտրական հարաբերությունները զարգացնելու անհրաժեշտությունից՝ կողմերը պայմանավորվում էին Երևանում և Թեհրանում հիմնադրել քանկային, ապահովագրական և առևտրական ձեռնարկությունների մասնաճյուղեր: Երկկողմ առևտրական հարաբերությունների զարգացման նպատակով հայտարարում էին Իրանի Իսլամական Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունում առևտրաարդյունաբերական ցուցահանդեսներ կազմակերպելու անհրաժեշտության մասին, որոնց անցկացումը մշտապես հովանավորվելու էր երկու երկրների կողմից:

Կողմերը հայտարարում էին, որ կձեռնարկվեն համապատասխան միջոցներ Երևանի և Թեհրանի միջև օդային կապ ստեղծելու համար: Հայկական կողմը հայտարարում էր իր համաձայնությունը ապահովելու Հայաստանի տարածքով Իրանի Իսլամական Հանրապետության բեռնատար մեքենաների տրանզիտային անցումը դեպի Սև ծով և հավառակ ուղղությամբ, ինչպես նաև իր տարածքով Իրանի Իսլամական Հանրապետության զազամուղի տարանցիկ անցումը դեպի մյուս երկրներ:

Պայմանավորվածություն էր ձեռք բերվում համագործակցելու նախարարությունաբերության և նախաքիմիայի քննազավառներում: Հայկական կողմն առաջարկում էր Հայաստանի Հանրապետությունում կամ Իրանի Իսլամական Հանրապետությունում նախամշակման համատեղ ձեռնարկություն հիմնել: Իրանական կողմը խոստանում էր դրական մոտեցմամբ քննարկել այդ հարցը:

Այնուհետև հայկական կողմը դիմում էր ներկայացնում, որպեսզի Թուրքմենստանի Հանրապետության էլեկտրոնեղեկահան Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով մատակարարվի Հայաստանի Հանրապետություն: Իրանական կողմը դրական գնահատականի էր արժանացնում այդ առաջարկը և:

Հռչակագրի 15-րդ հոդվածում հայկական կողմը հայտնում էր իր պատրաստակամությունը՝ համագործակցելու Իրանի Իսլամական Հանրապետության հետ Մեղրիի մոտ՝ Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայան կառուցելու գործում:

Հռչակագրում խոշոր տեղ էր հատկացվում թեթև և ծանր արդյունաբերության, լեռնարդյունաբերության, մետաղամշակման, հանքերի հետախուզման ու արդյունահանման քննազավառում համագործակցության, ինչպես նաև երկկողմանի հաղորդակցության կապի զարգացման ուղղությամբ: Կողմերը հայտնում էին նաև իրենց ցանկության մասին գյուղատնտեսության, անասնաբուժության, սննդամթերքի արտադրության և ոռոգման համակարգի քննազավառներում համագործակցության հիմքը դնելու և զարգացնելու վերաբերյալ:

Հռչակագրում մեծ տեղ էր հատկացվում մշակութային ու կրթական քննազավառներում երկու երկրների համագործակցության խնդրին: Մասնավորապես կողմերը պարտավորվում էին մշակութային կապերը զարգացնելու նպատակով փոխանակել մշակույթի, արվեստի, կինոյի քննազավառների վերաբերող հանձնախմբեր, կազմակերպելու լուսանկարների ու գրքերի ցուցահանդեսներ, ֆիլմերի փառատոներ և այլն: Հաշվի առնելով երկու երկրների մշակութային դարավոր անցյալը՝ պայմանավորվածություն էր ձեռք բերվում հնագիտության,



պատմական հուշարձանների, ձեռագիր մատյանների պահպանման ու վերականգնման քննազավառնեբրում հաստատելու սերտ համագործակցություն: Դա հավասարապես վերաբերում էր նաև ռադիոյի, հեռուստատեսության, լրատվական կազմակերպությունների, ինչպես նաև լրատվության փոխանակման քննազավառնեբրին:

Հայաստանի Հանրապետությունը և ԻԻՀ-ը պատրաստակամություն էին հայտնում ձեռնարկելու միջոցներ Իրանի Իսլամական Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հայերեն լեզվի և Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում պարսկերեն լեզվի դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ: Գիտական և քուհական կապերը զարգացնելու նպատակով առաջարկվում էր երկու երկրների միջև փոխանակել դասախոսներ, ուսանողներ և գրականություն:

Հռչակագրում որոշակի տեղ էր հատկացվում նաև սպորտային համագործակցության և գրոսաշրջության հարցերին:

1992 թ. փետրվարի 28-ին իր առաջին պաշտոնական այցով Երևան ժամանեց ԻԻՀ արտաքին գործերի նախարար դոկտոր Ալի Աքբար Վելայաթին: Այցի հիմնական նպատակը փոխադարձ ծանոթությունն էր, միջազգային և տարածաշրջանային քաղաքական հարցերի վերաբերյալ կողմերի տեսակետների շարադրումը և հետագա մտադրությունների վերաբերյալ երկկողմանի ծրագրերի մշակումը: Ծանոթանալով Ադրբեջանի և Թուրքիայի կողմից շրջափակման ենթարկված Հայաստանի ծանր վիճակի հետ՝ ԻԻՀ արտգործնախարարը շեշտեց, որ այսուհետև Իրանը Հայաստանի համար կլինի աշխարհի հետ հաղորդակցվելու ամենակարճ միջոցը, և վերջինիս այլևս չեն սպառնա ցամաքային շրջափակումները: Միաժամանակ նա կարևորեց Իրանի համար Հայաստանի՝ որպես իր անմիջական և հուսալի հարևաններից մեկի հետ համակողմանի հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը:

Բարեկամ երկրի բարձրաստիճան դիվանագիտական և քաղաքական գործչի այդ այցը խանդավառությամբ ընդունվեց հայ ժողովրդի

կողմից: Այն նոր թափ հաղորդեց հայ-իրանական հարաբերություններին: Դոկտոր Վելայաթին Հայաստանում արժանացավ բարձր պատիվների, որի մասին նա ծավալուն տեղեկատվություն հրապարակեց իրանական մամուլում:

Ի դեպ, Ալի Աքբար Վելայաթիի այցի կարևորագույն նպատակներից մեկն էր նաև ԻԻՀ միջնորդական առաքելության շրջանակներում դարաբաղյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման հնարավորություններ ուսումնասիրելու և քաղաքական նախաձեռնությունների շուրջ փոխըմբռնման եզրերի որոնումը:

Երկու երկրների հարաբերությունների զարգացման գործում շրջադարձային նշանակություն ունեցավ 1992 թ. մայիսի 6-8-ը, այն է՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և նրան ուղեկցող պատվիրակության այցն Իրանի Իսլամական Հանրապետություն: Այդ այցը կատարվել էր ԻԻՀ նախագահ, հոչաթ-օլ-էլամ Աքբար Հաշեմի Ռաֆաանջանիի հրավերով: Թեհրանի «Մեհրաբադ» օդանավակայանում Հայաստանի նախագահին դիմավորեցին ԻԻՀ նախագահը, արտաքին գործերի նախարարը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

Դիմավորման արարողությունից հետո Իրանի և Հայաստանի դրոշները ներքո հնչեցին երկու երկրների պետական հիմները, որից հետո նախագահներն ընդունեցին պատվո տղանեցը: Օդանավակայանի ընդունելության հասուկ րաբառում ողջունելով ՀՀ նախագահին և նրան ուղեկցող պատվիրակության անդամներին՝ նախագահ Հաշեմի Ռաֆաանջանին նշեց. «Որոշ երկրներ աշխատում են շահարկել Լեռնային Ղարաբաղի հարցը՝ տարածաշրջանում իրենց ազդեցությունն ամրապնդելու նպատակով. ուստի դա չեզոքացնելու համար հարկ է կառուցողական համագործակցություն ունենալ միմյանց հետ»: Այնուհետև նա ավելացրեց. «Անկեղծվում է, որ սույն այցելությունն իր նպաստը կբերի դարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման համար»:

ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, շնորհակալություն հայտ-

<sup>1</sup> «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 1992 թ., 7 մայիսի:

ենելով ջերմ ընդունելության համար, բարձր գնահատեց Իրանի միջնորդական առաքելությունը դարաքաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման գործում: Նա նշեց, որ «Իրանի և Հայաստանի միջև հարաբերություններն ամուր հիմքեր ունեն և քնավ ապացուցման կարիք չունեն. դա է վկայում մեր հազարամյա պատմությունը և այսօր Հայաստանը՝ որպես անկախ հանրապետություն, իր պարտքն է համարում համագործակցելու Իրանի Իսլամական Հանրապետության հետ»<sup>8</sup>:

Իրանահայությունը, որը արտատրոփ պատում էր Հայաստանի նախագահի այցին, մեծ խանդավառությամբ ու շուքով ընդունեց անկախ հայրենիքի առաջին նախագահին: Վերջինս այցի հենց առաջին օրն իրեն ուղեկցող պատվիրակության հետ այցելեց Թեհրանի Ս. Սարգսի եկեղեցի, որի շուրջ հավաքված բազմահազար իրանցիներ խուռներամ շարքերով ու խանդավառ բացականչություններով դիմավորեցին ՀՀ նախագահին:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու զանգերի դողանջները ներքո Հայաստանի բարձրաստիճան այրերը մուտք գործեցին եկեղեցի, որտեղ ՀՀ նախագահն ավանդական աղ ու հացով հաղորդվելուց հետո մասնակցեց կրոնական արարողությանը, որից հետո Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ Կորյուն արքեպիսկոպոս Պապյանը իրանահայության անունից ողջույնի խոսք ասաց անկախ Հայաստանի նախագահին: Պատասխան խոսքով հանդես եկավ Լ. Տեր-Պետրոսյանը. «Այս հոյակերտ տաճարի սուր կամարների հովանու տակ ես ձեզ եմ ուզում փոխանցել ազատ, անկախ Հայաստանի հայրենական ողջույնը: Իրականացավ հայ ժողովրդի, նրա բոլոր բնկորների՝ հայրենիքի և սփյուռքի դարավոր երազանքը: Հայաստանը թոթափեց կոմունիզմի ստրկատիրական լուծը և երկարատև պայքարի գնով ձեռք բերեց իր ազատությունն ու անկախությունը:

Այսօր այս հուզիչ մթնոլորտում կարելի է ասել միացան հայ ժողովրդի երկու բնկորները՝ հայրենիքը և իրանահայությունը՝ շնորհիվ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի պաշտոնական

հրավերի: Պարոն Ռաֆաանջանիի խնամատարությամբ Հայաստանի Հանրապետության նախագահը գտնվում է Իրանի Իսլամական Հանրապետությունում պաշտոնական հրավերով, և ես հուսով եմ, կարելի է ասել՝ համոզված, որ այս այցելությունը շրջադարձային կլինի հայ և իրանցի ժողովուրդների, Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև համագործակցության զարգացման գործում:

Այսօր ես ուրախությամբ պետք է նշեմ, որ Հայաստանի և Իրանի հարաբերությունները զարգանում են համակողմանիորեն, բոլոր մակարդակներով՝ և քաղաքական և տնտեսական, և կարևորն այն է, որ այդ հարաբերություններն արդեն անցել են բանակցությունների մակարդակը և տալիս են գործնական արդյունք»<sup>9</sup>:

Ս. Սարգսի եկեղեցում ընդունելության արարողությունից հետո ՀՀ նախագահն իր շքախմբով առաջնորդվեց դեպի եկեղեցու ընդարձակ բակում գտնվող Մեծ եղևենի բյուրավոր նահատակների հուշարձանը և ծաղկեպսակ դրեց՝ ի հարգանս նահատակների<sup>10</sup>:

Նույն օրը Լ. Տեր-Պետրոսյանն իրեն ուղեկցող պատվիրակության հետ այցելեց Թեհրանի «Արաբառ» մարզավան, որտեղ իրանահայ հայրենակիցներին ուղղված իր ողջույնի խոսքում նշեց. «Իրանահայությունն այսօր հուզիչ, խորին ցնծության մեջ է, որովհետև առաջին անգամ հյուրնկալում է իր դրախտավայր հայրենիքի՝ ազատ, անկախ Հայաստանի նախագահին: Այս հյուրընկալության ընթացքում ամբողջ Թեհրանում փողփողում է հայոց եռագույնը...

Մեզ համար չափազանց կարևոր է Հայաստանի և Իրանի միջև հարաբերությունների զարգացումը, և պատահական չէ, որ Հայաստանի նախագահի՝ փաստորեն երկրորդ պաշտոնական այցը արտասահման տեղի է ունենում մեր բարեկամ Իրանի Իսլամական Հանրապետություն:

<sup>8</sup> «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 1992 թ., 7 մայիսի:

<sup>10</sup> Տե՛ս Լևոն Ախարոնյան, Փորրկոտ կեանքիս օրերը (նասարակական և քաղաքական յուշեր), գիրք Բ, Թեհրան, 2010, էջ 916-917:

<sup>8</sup> Նույն տեղում:



Հայ ժողովուրդն անկախությունը ստացավ ոչ թե որպես նվեր, ոչ թե որպես երկնային շնորհ, այլ ձեռք բերեց իր համառ պայքարի, իր զրկանքների, նաև, որթան էլ ցավալի է դա նշել, մեր անդառնալի կորուստների գնով: Այսօր էլ մեր քաջորդիները, զենքը ձեռքին, պայքարում են Ղարաբաղում՝ իրենց պատվի և արժանապատվության, իրենց սուրբ հողի համար...

Հայաստանի և Իրանի, հայ և իրանցի ժողովուրդների բարեկամությունը գնում է դարերի, հայրուրամյակների խորքը, և մեր ամբողջ պատմությունը միայն ու միայն մեր բարեկամության և համագործակցության վկայությունն է եղել: Օրինյալ լինի այն երկիրը, որտեղ հայությունը չորս հարյուր տարվա գոյությունից հետո կարող է չտարբերվել իր հայրենիքի ժողովրդից ոչ իր ժպիտով, ոչ իր հուզմունքով, ոչ իր մտածողությամբ և ոչ իր լեզվով:

Հայ և իրանական բարեկամությունը, որը երբեք չի դադարել, այսօր պատենություն է ստացել ձևակերպվելու պետական մակարդակով, միջպետական, երկկողմանի հարաբերությունների մակարդակով: Եվ ես այստեղ էլ ուրախությամբ պետք է նշեմ, որ Հայաստանի և Իրանի հանրապետությունների հարաբերությունները զարգանում են չափազանց բնական կերպով, մեզ համար ցանկալի ընթացքով, և այսօր արդեն մենք կարող ենք վկայել այդ հարաբերությունների գործնական արդյունքների մասին...

Այս ցերմ ընդունելությունը ես համարում եմ վկայություն Իրանի իշխանությունների այն ուշադրության, որ տածում են հայ-իրանական բարեկամության և համագործակցության նկատմամբ և նաև այն գնահատականի արտահայտությունը, որ Իրանի իշխանությունները տածում են Իրանի հայ համայնքի վաստակի նկատմամբ՝ այս երկրի բարգավաճման և ծաղկման գործում:

Իրանահայությունը 400 տարի հոգով, սրտով կապված լինելով իր նախնիների հայրենիքի հետ, միաժամանակ եղել է Իրանի լիարժեք քաղաքացին, հավատարիմ քաղաքացին, որն իր բոլոր կարողություններն ի սպաս է դրել Իրանի ծաղկմանն ու բարգավաճմանը:

Եվ ես վստահ եմ ու համոզված, որ հայ-իրանական միջպետական հարաբերությունների ամրապնդումը կնպաստի իրանահայության ցանրերի քաղմապատկմանը և միաժամանակ նաև հայ-իրանական հարաբերություններում իրանահայության դերի ամրագրմանը:

Կեցցե՛ ազատ, անկախ Հայաստանը:

Կեցցե՛ հայ և իրանցի ժողովուրդների, Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության բարեկամությունը<sup>11</sup>:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից որոշված էր մինչև Հայաստանի նախագահի այցը Իրան ավարտել Արաքս գետի վրա՝ Մեղրի քաղաքի Ազարակ ավանի դիմաց ժամանակավոր զինվորական նավակամուրջի (պոնտոնային կամուրջի) տեղադրումը: 1992 թ. մայիսի 5-ին այն արդեն տեղադրված էր<sup>12</sup>, իսկ նրա պաշտոնական քաջումը տեղի ունեցավ մայիսի 6-ին:

Այդ ժամանակավոր կամուրջը դարձավ մի տեսակ արյունատար անոթ, որը կոչված էր սնելու շրջափակման ու պատերազմական վիճակի մեջ գտնվող և դժվարին դրության մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությանը: Իզուր չէ, որ հայ ժողովուրդը այդ կամուրջն անվանեց «հույսի կամուրջ», «փրկության ուղի»: Այդ ժամանակավոր կամուրջի օգնությամբ մեր մանուկ հանրապետությունը հեռավորություն ստացավ երկրի հարավային կողմից ձեռքբերու շրջափակման օղակը և դուրս գալու լայն աշխարհ: Այդ առթիվ ՀՀ առաջին նախագահն իրավացիորեն նշել է, որ «Հայաստանի ամենախիստ շրջափակման տարիներին Մեղրու ճանապարհը եղել է մեր գոյատևման ամենակարևոր պայմաններից մեկը»<sup>13</sup>:

1992 թ. մայիսի 6-ին տեղի ունեցավ քանակությունների առաջին փուլը Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության նախագահների միջև: Բանակցությունների ընթաց-

<sup>11</sup> «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 1992 թ., 7 մայիսի:

<sup>12</sup> «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 1992 թ., 6 մայիսի:

<sup>13</sup> Լևոն Տեր-Պետրոսյան, Ընթերցում, էջ 658:

քում երկու նախագահները փոխըմբռնման մթնոլորտում կատարեցին մտքերի փոխանակություն քաղաքական, տնտեսական, մշակութային, ինչպես նաև տարածաշրջանային ու միջազգային հարցերի շուրջ և փոխադարձ բարեկամության սկզբունքի հիման վրա գծեցին երկու երկրների երկարատև համագործակցության շրջանակները:

Հատուկ քննարկման առարկա դարձավ նաև Լեռնային Ղարաբաղի հարցը: Մտահոգություն հայտնելով այդ հարցի կապակցությամբ՝ ԻԻՀ նախագահը նշեց, որ Իրանի նպատակն է հայ և ադրբեջանցի ժողովուրդներին փրկել պատերազմի աղետից և տարածաշրջանում հաստատել խաղաղություն: Նա ավելացրեց, որ ինչքան ավելի երկրի բախումների շղթան, այնքան ավելի մեծ վնասներ կկրեն այդ ժողովուրդները, և ավելի խոր թշնամանք կառաջանա նրանց միջև, որոնք այդ բախումների իրական զոհերն են: Բացի այդ, էլ ավելի կքարդանա հարցի լուծումը և կխոչընդոտվի երկու երկրների անկախացման ու վերաշինության գործընթացը:

Նախագահ Ռաֆսանջանին նաև շեշտեց, որ խաղաղության ու կայունության հաստատումն օգտակար է և՛ տարածաշրջանի, և՛ Իրանի հարևան երկրների համար և հույս հայտնեց, որ Թեհրանում տեղի ունեցող բանակցությունները տարածաշրջանում բախումների ավարտման շրջադարձային կետ կհանդիսանան»:

Լ. Տեր-Պետրոսյանը նշեց, որ Հայաստանի ժողովուրդը մեծ ակնկալիքներ ունի Իրան կատարած իր այցելությունից և հույս հայտնեց, որ այցը շրջադարձային կդառնա երկու երկրների հարաբերությունների ընդլայնման գործում: Անդրադառնալով դարաքաղյան հարցին՝ ՀՀ նախագահը նշեց. «Ղարաբաղում խաղաղության հաստատման ուղղությամբ ձեռնարկված նախաձեռնություններում մենք վստահել ենք Իրանին, քանի որ Ձեր երկիրն իրապես անկողմնակալ դիրք ունի այդ հարցում և Ձեր նպատակը միմիայն մարդասիրական նկատառումներն են և այդ հարցը կարգավորելու համար մի արդար լուծում գտնելը: Հայաստանի ժողովուրդը շնորհակալություն է հայտնում այդ նախաձեռնությունների համար»:

Հարկ է նշել, որ ՀՀ նախագահի այցից մի քանի օր առաջ Թեհրան էր ժամանել հայկական մեկ այլ պատվիրակություն, որը լուրջ բանակցություններ էր ունեցել իր իրանցի գործընկերների հետ, որի արդյունքում ձեռք էին բերվել բազմաթիվ փոխշահավետ պայմանավորվածություններ տնտեսական, մշակութային, գիտական և այլ բնագավառներում համակողմանի համագործակցության շուրջ: Ռուսիա այդ բանակցությունների արդյունք՝ նախքան երկու երկրների նախագահների կողմից համատեղ հայտարարության ստորագրումը երկու կողմերի համապատասխան նախարարների միջև ստորագրվեցին չորս համաձայնագրեր՝ էներգետիկայի, կապի, հաղորդակցության, տնտեսական և քաղաքական փոխադարձ հարաբերությունների ընդլայնման վերաբերյալ:

1992 թ. մայիսի 7-ին՝ հինգշաբթի օրը, Թեհրանում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և ԻԻՀ նախագահ հոջաթ-օլ-էլսամ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին ստորագրեցին բանակցությունների եզրափակիչ փաստաթուղթը՝ համատեղ հայտարարություն «Համագործակցության, բարեկամության և քարիդրացիության մասին»: Այն դարձավ երկու երկրների միջպետական հարաբերությունների հիմքում ընկած կարևորագույն փաստաթուղթը: Դրանով երկկողմ հարաբերությունները դրվում էին պետական բարձր մակարդակի վրա:

Փաստաթղթում նշվում էր, որ Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ որպես իրավահավասար երկու բարեկամ և դրացի պետություններ, կզարգացնեն երկկողմանի հարաբերությունները: Երկու պետությունները, ելնելով միմյանց ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, ներքին գործերին չմիջամտելու, ուժային սպառնալիքից ձեռնպահ մնալու, տարածայնությունները խաղաղ ճանապարհով լուծելու, փոխադարձ շահերի, միջազգային պարտավորությունների նկատմամբ հարգանքի սկզբունքներից, ձեռնամուխ կլինեն իրենց հարաբերությունների զարգացմանը:

Կողմերը հավաստիացնում էին միմյանց, որ քարիդրացիության, համագործակցության և փոխադարձ վստահության ամրապնդման



համար կգործադրենք քոլոր ջանքերը: Համատեղ հայտարարության մեջ հատուկ շեշտվում էր, որ երկու պետությունները միմյանց ընդհանուր սահմանները դիտում են որպես խաղաղության սահմաններ և կաշխատեն, որպեսզի տարածաշրջանի տարբեր ազգերի հարաբերություններում մշտապես տիրի խաղաղություն, կայունություն և քաղաքացիություն:

Հայտնելով իրենց հավատարմությունը ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին՝ կողմերը անթույլատրելի էին համարում սեփական տարածքը օգտագործել միմյանց նկատմամբ բռնության գործադրման համար:

Անդրադառնալով երկու երկրների փոխադարձ կապերի կարևորությանը և հատկապես հաշվի առնելով պատմական, մշակութային և էթնիկական ընդհանրությունները՝ կողմերը նշում էին երկու երկրների բարձրաստիճան ղեկավարների մշտական և պարբերական փոխալսուցելությունների և հանդիպումների անհրաժեշտության մասին: Հաշվի առնելով յուրաքանչյուր երկրում գոյություն ունեցող հնարավորությունները՝ երկկողմանի հարաբերություններն էլ ավելի զարգացնելու նպատակով կողմերը համաձայնվում էին պատրաստել և կնքել համագործակցության երկարաժամկետ համաձայնագրեր և առավելագույնն օգտագործել միմյանց հնարավորություններն ու ներուժը: \*

Կողմերն անդրադառնում էին նաև տարածաշրջանում խաղաղություն, կայունություն և անվտանգություն հաստատելու անհրաժեշտությանը և համաձայնվում էին, որ երկու երկրների բարձրաստիճան ղեկավարները շարունակաբար և կանոնավոր կերպով կխորհրդակցեն այդ հարցերի շուրջը կայուն ու թշնամանքից զերծ շրջան ստեղծելու նպատակով կգործադրեն իրենց քոլոր ջանքերը, որպեսզի տարածաշրջանի ժողովուրդների տնտեսական զարգացման համար պայմաններ պտեղծվեն:

Կողմերը պայմանավորվում էին իրենց երկրների հնարավորության սահմաններում տարերային աղետների դեպքում՝ միմյանց ցույց տալ համակողմանի օգնություն, ինչպես նաև ջանք գործադրել՝

ստեղծելու համատեղ կառուցվածքներ տարերային աղետների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման համար: Համատեղ հայտարարության այս հոդվածը չափազանց կարևոր էր և Իրանի, և Հայաստանի համար, քանի որ երկու երկրներն էլ աչքի էին ընկնում իրենց երկրաշարժաստեղծությամբ: Կողմերն առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու նպատակով համաձայնվում էին հնարավորին չափ կարճ ժամկետներում ստեղծել տնտեսական և գիտատեխնիկական համատեղ հանձնախումբ, որպեսզի համագործակցության ընթացքը քննարկելու նպատակով ամեն տարի երևանում և Թեհրանում անցկացվեն խորհրդակցություններ:

Կողմերն անդրադարձան Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև նավթի, գազի, տնտեսության և առևտրի, բանկային համակարգի և արդյունաբերության, ինչպես նաև երկու երկրների շահերն արտահայտող այլ բնագավառների վերաբերյալ կնքված համաձայնագրերի իրականացման և ընդլայնման անհրաժեշտությանը և կարևորությանը:

Կողմերը հավաստեցին, որ միջոցներ կձեռնարկեն գիտության, կրթին, արվեստի, գրականության, կրթության, քժվության, ստուգապահության, լրատվության, ռադիոյի և հեռուստատեսության, կինոյի, զրոսաշրջության և սպորտային բնագավառներում կապեր ստեղծելու ուղղությամբ: Կողմերը համաձայնության եկան հանցագործությունների, ահաբեկչության, թմրադեղերի, մաքսանենգության, օդանավերի առևանգման, մշակութային արժեք ներկայացնող իրերի ապօրինի դուրսբերման հարցերում համագործակցելու և փորձի փոխանակման մասին:

Երկու հարևան երկրները պայմանավորվում էին քոլոր ջանքերը գործադրել համագործակցելու կենտրոնի պահպանման բնագավառում, զարգացնել երկու երկրների միջխորհրդարանային կապերը, դիվանագիտական, առևտրական, հյուպատոսական և այլ պաշտոնական ներկայացուցիչների գործունեության համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, զբոսաշրջային, տնտեսական, առևտրա-

կան, սպորտային, մշակութային և գիտական խմբերի համար վիզաների ձևակերպման խնդրի մեջ պարզություն մտցնել, բազմակողմանի համագործակցության համար ստեղծել իրավական, ֆինանսական և առևտրական նպաստավոր պայմաններ և կազմակերպել երկու երկրների միջև գիտատեխնիկական լրատվության փոխանակում:

Հաշվի առնելով փոխհարաբերությունների զարգացման գործում կապի դերը՝ կողմերը համաձայնության եկան գործադրելու բոլոր ջանքերը՝ զարգացնելու և հաստատելու երկու երկրների հաղորդակցության համակարգը՝ տրանսպորտի, հեռախոսակապի, ցամաքային և օդային հաղորդակցությունների տարբեր բնագավառներում:

Կողմերն անդրադարձան նաև Իրան-Հայաստան-սևծովյան նավահանգիստներ տարանցիկ ձանապարհի արագ շահագործման հարցին:

Համատեղ հայտարարության վերջում ցանկություն էր հայտնվում, որ երկու երկրների տնտեսական պաշտոնատարների միջև կնքված բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը շուտափույթ կերպով վավերացվեն և հիշյալ պայմանագրերում ու համաձայնագրերում նշված կետերն իրագործվեն հնարավոր ամենակարճ ժամանակաշրջանում<sup>14</sup>:

Այսպիսով՝ հիմք դրվեցին երկու հարևան և ինքնիշխան պետությունների միջև պաշտոնական հարաբերություններին, որոնք բոլոր նախադրյալներն ունեին արագ և վերընթաց գծով զարգանալու համար: Դրա երաշխիքը նախ և առաջ կայանում էր նրանում, որ հայ-իրանական բարեկամական հարաբերություններն ունեին լավ պատմական հիմք: Այնուհետև այդ պետությունների միջև գոյություն չունեղ որևէ տարածքային կամ էթնիկական հիմնախնդիր, վեճ և այլն:

Մայիսի 7-ին ՀՀ նախագահը և Հայաստանի պատմիկականության անդամները՝ ընկերակցությամբ Կորյուն արքեպիսկոպոս Պապյանի, իսլամական խորհրդարանի հայ պատգամավորներ Վարդան Վար-

<sup>14</sup> Տես Գ արտաքին գործերի նախարարության «Պիվանագիտական քանոն», էջ 22-24:

դականի և Արտավազը Բաղումյանի, Թեհրանի թեմական խորհրդի առենապետ Սերոժ Սուքիասյանի, այցելեցին Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր և Իսլամական հեղափոխության ստացնորդ հանգուցյալ Իմամ Խոմեյնիի դամբարան, որտեղ նրանց դիմավորեց իմամի որդին՝ հոջաթ-օլ-էլամ Ահմադ Խոմեյնին:

Այցելության ընթացքում Հայաստանի Հանրապետության նախագահը, ծաղկեպսակ դնելով, իր հարգանքի տուրքը մատուցեց Իրանի Իսլամական Հանրապետության հանգուցյալ հիմնադիրի հիշատակին, որից հետո հատուկ օթյակում հոջաթ-օլ-էլամ Ահմադ Խոմեյնիի և ՀՀ նախագահի միջև տեղի ունեցավ մտերմիկ զրույց: Այնուհետև Լ. Տեր-Պետրոսյանը ստորագրեց հատուկ հուշատետրում<sup>15</sup>:

Իր այցի վերջում մայիսի 8-ին ՀՀ նախագահը և իրեն ընկերակցող պատվիրակությունը ժամանեցին Սպահան: Սպահանի միջազգային օդանավակայանում նրանց դիմավորեցին Սպահանի նահանգի նահանգապետ Վաղեֆին, գեներալական բարձրաստիճան պաշտոնյաներ, հայ ազգային մարմինների ներկայացուցիչները և հոգևորական դասը:

ՀՀ նախագահը և իրեն ընկերակցող պատվիրակությունն այցելեց Սպահանի արվարձանում գտնվող Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը, ուր արժանացավ հայության ջերմ ընդունելությանը:

Ս. Ամենափրկչյան վանքում Կորյուն արքեպիսկոպոս Պապյանի զվաճարությանը տեղի ունեցած կրոնական արարողությունից հետո ՀՀ նախագահն այցելեց վանքի շրջափակում գտնվող Մեծ եղևնի բյուրավոր նահատակների հուշարձան և ծաղկեպսակ դրեց՝ իր հարգանքի տուրքը մատուցելով հայ անմեղ նահատակների հիշատակին:

Նոր Ջուղայում ՀՀ նախագահը ողջույնի խոսքով դիմեց Ս. Ամենափրկիչ վանքի բակում և շրջակա փողոցներում ծփացող բազմահազար հայությանը. «Սիրելի՛ հայրենակիցներ, սիրելի՛ եղբայրներ, քույրեր, մայրեր, այսօրվան մենք վաղուց էինք սպասում, այսօրվան դուք սպասել եք 400 տարի, և վերջապես ձեր և մեր երազանքն իրականություն դարձավ: Այսօր միացել են հայրենիքը և 400-ամյա Նոր Ջուղան:

<sup>15</sup> «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 1992 թ., 8 մայիսի:



ես նախ և առաջ ձեզ եմ ուղղում ազատ, անկախ Հայաստանի ողջույնը: Հայաստանի երեք ու կես միլիոն ժողովուրդն այս օրերին ապրում է նույն այն զգացումներով, ժպտում է նույն այն ժպիտներով, խոսում է այնպես, ինչպես դուք եք խոսում. և այսօր ոչ թե դուք եք գտել ձեր հայրենիքի նախագահին, այլ նախագահը նույնպես վերագտել է իր ամբատները, որի 400-ամյա ավանդապահն եք եղել դուք...

Իրանն առաջին պետություններից մեկն է, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը և նրա հետ հավասարը հավասարի պես հաստատեց դիվանագիտական հարաբերություններ... Ինչպես պարզվեց իրանական իշխանությունների հետ մեր ունեցած քանակ-ցություններում, Հայաստանի և Իրանի երկկողմ հարաբերությունների զարգացման մեջ որևէ արգելք, որևէ սահմանափակում չի կարող լինել, մեզ համար քաց են Իրանի բոլոր դռները, Իրանի համար էլ քաց են Հայաստանի բոլոր դռները... Հանդիպումը Հայաստանի և Իրանի հանրապետությունների նախագահների միջև կարելի է համարել շրջադարձային և նշանակալի»<sup>16</sup>:

Իր պաշտոնական այցի ավարտից հետո ՀՀ նախագահը վերադարձավ հայրենիք: Հարև է նշել, որ 1992 թ. հանդիսացավ հայ-իրանական հարաբերությունների վերընթաց զարգացման համար խիստ արգասավոր տարի: Եւախ, ի կատարումն և կողմերի միջև կնքված միջպետական համաձայնագրերի, նշված թվականին կյանքի կոչվեցին քաղմաթիվ ձեռնարկումներ, ստորագրվեցին նոր համաձայնագրեր և այլն: Գրանցից հիշատակության արժանի են ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև հյուպատոսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը, երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև կոնսուլտացիաներ անցկացնելու վերաբերյալ փաստաթուղթը, ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև դիվանագիտական և ծառայողական անձնագիր ունեցող անձանց առանց մուտքի վիզայի ելումուտ ապահովելու համաձայնագիրը, ապրանքափոխանակության և ուղևորությունների ընդարձակման ու ծավալման, առևտրատնտեսական և գիտատեխ-

նիկական համագործակցության, 1992-1994 թվականների համար նախատեսված մշակութային և զիտական համագործակցության, ԻԻՀ-ի նավթի նախարարության և ՀՀ վառելիքաէներգետիկայի նախարարության, ԻԻՀ Կենտրոնական բանկի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև համագործակցության հաստատման, տարանցիկ, արտահանվող և ներմուծվող ապրանքների և ուղևորների երթևեկության, մաքսային տարածաշրջանային սեյսմիկ անվտանգության համակարգ ստեղծելու վերաբերյալ և այլ հարցերի առնչվող համաձայնագրերի կնքումը: Այդ նույն օրերին փոխըմբռնման հուշագիր ստորագրվեց Թեհրանի համալսարանի երկրաֆիզիկայի ինստիտուտի և ՀՀ կառավարությանն առընթեր սեյսմիկ պաշտպանության ծառայության միջև<sup>17</sup>:

1992 թ. հաճախակի էին նաև իրանական դիվանագետների, պաշտոնատար անձանց, զանազան պատվիրակությունների այցերը Հայաստան: Այսպես, օրինակ՝ նշված թվականի մարտին Հայաստան այցելեց ԻԻՀ արտաքին գործերի փոխնախարար Մահմուդ Վայեզին: Իրանական բարձրաստիճան դիվանագետը երևանում հանդիպումներ ունեցավ և քանակություններ վարեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի, արտգործնախարար Բաֆֆի Հովհաննիսյանի և այլ պաշտոնատար անձանց հետ: Բանակցությունների ձևաչափը չափազանց ընդգրկուն էր. այն ներառում էր նաև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Երևանում ունեցած իր պաշտոնական հանդիպումների ժամանակ ԻԻՀ արտաքին գործերի փոխնախարարը ժխտեց որոշ քաղաքական ուժերի այն պնդումները, թե իբր զարաբաղյան հակամարտությունն ունի կրոնական բնույթ: Միաժամանակ նա հավաստիացրեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության ինչպես բարձրագույն ղեկավարությունը, այնպես էլ հեղինակավոր կրոնական շրջանները նույնպես ժխտում և չեն ընդունում զարաբաղյան հակամարտության կրոնական բնույթ ունենալու վարկածը: Մարտի 31-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում իրանական բարձրաստիճան դիվա-

<sup>16</sup> «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 1992 թ., 9 մայիս:

<sup>17</sup> Մանրաման տեխն. Վ. Բայրության, «Իրանն այսօր», Երևան, 1999:

նագետին ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ը: Զրույցի ընթացքում վնասախառ հայրապետը հավաստիացրեց Վայեզիին, որ թե՛ Հայաստանում և թե՛ հայկական սփյուռքում չկա որևէ հայ հոգևորական, որը տուրք տա դարաբադյան կոնֆլիկտի կրոնական քնույթ ունենալու խիստ վտանգավոր ու անընդունելի տեսակետին:

1992 թ. ապրիլի 22-ին Հայաստան ժամանեց ԻԻՀ պատվիրակությունը՝ իրանական մեջլիսի հայազգի պատգամավոր Վարդան Վարդանյանի գլխավորությամբ: Պատվիրակությունը իի հետ հատուկ ինքնաթիռով երևան էր բերել Իրանի հայ համայնքի կողմից հանգանակված միջոցներով ձեռք բերված և իրանական կառավարության աջակցությամբ ուղարկված 24 տոննա դեղորայք ու սննդամթերք: Երևանում ԻԻՀ պատվիրակությանն ընդունեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բարկեն Արարեջյանը:

1992 թ. ապրիլի 28-ին Երևանի «Հրազդան» հյուրանոցային համալիրում հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության պաշտոնական քացումը: Հայաստանի Հանրապետության ղեկավարության ողջ կազմը նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, հայ մտավորականության, գիտնականների, գրողների, արվեստագետների հարյուրավոր ներկայացուցիչներ մասնակցեցին այդ հանդիսավոր և հիշարժան արարողությանը: Եղան բազմաթիվ ելույթներ՝ նվիրված հայ-իրանական դարավոր կապերին ու բարեկամությանը:

Հայկական և իրանական կողմերը համաձայնության էին եկել միառժամանակ միջպետական դիվանագիտական հարաբերություններ պահպանելու գործերի հավատարմատարի մակարդակով՝ հետագայում այն դեսպանի մակարդակի բարձրացնելու պայմանով: Հայաստանի Հանրապետությունում ԻԻՀ գործերի հավատարմատարի պաշտոնում նշանակվեց իրանական փորձառու դիվանագետ Բահման Դասնմին, որին որոշ ժամանակ անց փոխարինեց Ամսադ Սոքհանին<sup>16</sup>:

<sup>16</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1992 թ., 1 մայիս:

Երևանում իրանական դեսպանատան պաշտոնական քացումից հետո օրակարգի հրատապ հարց դարձավ ԻԻՀ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանության քացումը: Որպես ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար նշանակվեց տողերիս հեղինակը: Այդ նշանակման հարցում ըստ երևույթին վճռորոշ դերակատարություն էր ունեցել այն հանգամանքը, որ պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Վահան Բայրությունը պրոֆեսիոնալ իրանագետ-արևելագետ էր և տարիներ շարունակ զբաղվել էր Իրանի պատմության հարցերով:

1993 թ. սեպտեմբերի 23-ին իրանական «Արիաթուր» օդային ընկերության չարտերային ինքնաթիռով Վահան Բայրությունը ժամանեց Թեհրան: «Մեհրաբադ» միջազգային օդանավակայանում նրան դիմավորեցին ԻԻՀ արտաքին գործերի նախարարության քարձրաստիճան դիվանագետներ, իրանական խորհրդարանի՝ մեջլիսի պատգամավորներ, Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի անդամներ, «Ալիք» հայկական լրագրի խմբագրական կազմի, ինչպես նաև Իրանի հայ համայնքի մի խումբ ներկայացուցիչներ:

Օդանավակայանի պատվավոր հյուրերի սրահում նորանշանակ գործերի հավատարմատարի և իրանական կողմի ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ արարողակարգային քնույթի զրույց, որի ընթացքում շոշափվեցին նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող քաղաքական հարցեր:

Թեհրանում անհրաժեշտ էր նախ ձեռնամուխ լինել կազմակերպչական հարցերի լուծմանը: Այդ քննազավառում ամեն ինչ պետք էր սկսել զրոյից: Ամենալուրջ հարցը, անշուշտ, դեսպանատան շենքի հարցն էր: Հարմար տարբերակ էր նախկին ԽՍՀՄ դեսպանության հսկայական տարածքից մի հատված վերցնելը: Դրա հիմնավորումը կարող էր լինել այն, որ Խորհրդային Հայաստանը հանդիսանում էր Խորհրդային Միության կազմի մեջ գտնվող հանրապետություն և որպես այդ պետության իրավահաջորդ, կարող էր ժառանգել ինչ-ինչ գույքեր ու շինություններ: Սակայն Ռուսաստանի Դաշնության կառավարությունը կտրականապես դեմ էր նշված տեսակետին և հետևա-



քար նաև Ռուսաստանի դեսպանության տարածքից նորաստեղծ Հայաստանի Հանրապետության տարածք տրամադրելուն: ՀՀ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի և ԻԻՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպան Գուդինի միջև Թեհրանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ պաշտոնապես հայտարարվել էր, որ Ռուսաստանը՝ որպես իրավահաջորդ, իր վրա է վերցրել ԽՍՀՄ արտաքին պարտքերը՝ արտերկրում ԽՍՀՄ անշարժ գույքը որպես սեփականություն պահելու պայմանով<sup>19</sup>, հետևաբար բացառվում է Հայաստանին տարածք տրամադրելու հարցը:

Թեհրանում գործերի հավատարմատար Վահան Բայրությունը դեսպան Գուդինի հետ հանդիպման ժամանակ փորձեց վերստին քարձրացնել այդ հարցը: Պատասխանը նույնն էր: Դեսպանը միայն խոստացավ Հայաստանի նոր կազմակերպվող դեսպանությանը տրամադրել որոշ չափով գույք՝ աթոռներ, սեղաններ, գրասենյակային պարագաներ և այլն: Երբ պարզվեց, որ խոսքն արդեն օգտագործված և մաշված գույքի մասին է, Վ. Բայրությունը թողաբավարի ձևով հրաժարվեց այդ նվերից:

Հարկ է նշել, որ Հայաստանի անկախացումից հետո, երբ սկսվեց տարրեր երկրներում դեսպանատներ բացելու գործընթացը, որոշվեց հայկական գաղթօջախ ունեցող երկրներում դեսպանատների շենքի ձեռքբերման և կահավորման ֆինանսական ծախսերը հոգալու համար օգտվել հայկական գաղթօջախների նյութական օժանդակությունից: Այդ նույն ճանապարհն ընտրվեց Իրանում դեսպանատուն բացելու պարագայում: Թեհրանի հայոց թեմի թեմական խորհուրդը սիրահոծար կերպով որոշեց Վահրամ և Ռոզա Ավագյանների կտակած շենքը հատկացնել Իրանում ՀՀ դեսպանությանը: Թեմական խորհուրդը որոշեց շենքը դեսպանատանը հանձնելուց առաջ վերանորոգել և պատշաճ ձևով կահավորել: Այդ գործում մեծ ու անզնախառնի դերակատարություն ունեցան Թեհրանի հայոց թեմի թեմական

խորհրդի ատենապետ Սերոժ Սուքիասյանը և ատենադպիր Ժորժիկ Աղազարյանը, որոնք օրն ի օրն, առանց ջանք ու եռանդ խնայելու զբաղվում էին դեսպանատան շենքի վերանորոգման ու կահավորման գործով՝ դա համարելով առաջին հերթին իրենց հայրենասիրական պարտքը:

Որոշ ժամանակ անց դեսպանատան երկհարկանի 400 քառակուսի մետր տարածք ունեցող շենքը, որը գտնվում էր Թեհրանի կենտրոնական մասում, «Փարքե շահր» հանրային զբոսայգու և Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Իտալիայի, Վատիկանի դեսպանությունների հարևանությամբ, պատրաստ էր բացման արարողությունը կատարելու համար:

ՀՀ դեսպանատան բացումը տեղի ունեցավ 1992 թ. դեկտեմբերի 22-ին: Բացման արարողությանը մասնակցում էին ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանն իրեն ուղեկցող սովարաթվի պատվիրակության հետ, ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Արման Նավասարդյանը, Իրանի Իսլամական Հանրապետության քարձրաստիճան պաշտոնատարներ, արտգործնախարարության ստորաբաժանումների ղեկավարներ՝ փոխնախար Մահմուդ Վայեզիի գլխավորությամբ, Հայաստանում ԻԻՀ գործերի հավատարմատար Սորիանին, իրանական խորհրդարանի՝ Մեջլիսի պատգամավորներ, Թեհրանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ, միջազգային զանազան կազմակերպությունների անդամներ, Իրանի հայ համայնքի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների ներկայացուցիչներ, մասնավորապես Թեհրանի կամ Կենտրոնական թեմի առաջնորդ Գերաշնորի Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը, Սպահանի և Հարավային Իրանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորի Կոլոյուն արքեպիսկոպոս Պապյանը, Անուպատականի թեմի կաթողիկոսական փոխնորդ Նշան վարդապետ Թովուզյանը, հայ կաթողիկե հարանվանության հոգևոր առաջնորդ Գերասպայժատ Վարդան արքեպիսկոպոս Թեքեյանը: Ներկա էին նաև իրանահայ համայնքի պատգամավորական ժողովի ղիվա-

<sup>19</sup> Տե՛ս Գ. Բաղդասյան, Հայաստանի դեսպանություններն Իրանում, «Նախիթ» տարեգիրք, Բ հատոր, Թեհրան, 2008, էջ 417:

նի անդամները, Թեմական խորհրդի ողջ կազմը, Իրանի Իսլամական խորհրդարանի իրանահայության պատգամավորներ Վարդան Վարդանյանն ու Արտավազ Բաղումյանը, «Ալիք» օրաթերթի աշխատակիցները, իրանահայ գործարար շրջանների ներկայացուցիչները (Լևոն Ահարոնյանը, Սեպուհ, Նժդեհ և Վիգեն Ալանյանները և այլք): Դեսպանության շենքի տարածքի փորձության պատճառով այնուամենայնիվ հրավիրվածների թիվը սահմանափակ էր: Դեսպանատան շրջակայքում և կից փողոցներում հավաքվել էին հազարավոր իրանահայեր, որոնք ստիպված էին ունկնդիր լինել դեսպանատան քացման արարողությանը ձայնավիյուտի միջոցով: Տերունական աղոթքի արարողությունից հետո Հայաստանի Հանրապետության օրիններգի՝ «Մեր հայրենիքի» հնչյունների ներքո ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը և գործերի հավատարմատար Վահան Բայբուրդյանը խուռներամ բազմության բուռն ծափահարությունների ներքո դանդաղ քարձարցրին Հայաստանի Հանրապետության պետական դրոշը՝ եռագույնը: Դեսպանատան շենքի կատարին ծածանվեց հայ ժողովրդի իղձերի, նրա ինքնության ու ազատության դրոշը: Իրանահայությունը 70 տարի շարունակ սպասել էր այդ երջանիկ օրվան, և կատարվեց նրա իղձը:

Այսպիսով՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը պաշտոնապես հայտարարվեց քացված: Բացման հանդիսավոր արարողության ժամանակ ելույթ ունեցան ՀՀ գործերի հավատարմատար Վահան Բայբուրդյանը, ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը և ԻԻՀ փոխարտգործնախարար Մահմուդ Վայեգին:

Իր ելույթում ՀՀ գործերի հավատարմատարը Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր իմամ Խոմեյնիի, Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ այաթոլլահ Սեյեդ Ալի Խամենեյիի և ԻԻՀ նախագահ հոջաթ-օլ-Էլայմ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի հասցեին մեծարման խոսքեր ասելուց հետո անդրադարձավ հայ-իրանական դարավոր բարեկամությանը՝ հատուկ շեշտելով, որ առաջին

աշխարհամարտի տարիներին Իրանը ապակցական վերաբերմունք է ունեցել արևմտահայոց՝ Մեծ եղեռնը վերապրած հայության նկատմամբ՝ Իրանի հողում երանց տրամադրելով ապաստան և ստեղծելով կյանքի բարենպաստ պայմաններ: Այնուհետև նա նշեց, որ Հայաստանի անկախացումը նոր էջ է քացելու հայ-իրանական բարեկամության հարուստ տարեգրության մեջ: Վահան Բայբուրդյանը Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպանատան քացման օրը համարեց երկու երկրների ժողովուրդների համար շրջադարձային օր: Նա հույս հայտնեց, որ ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև տնտեսական, քաղաքական և մշակութային կապերը օրըստօրե կգարգանան ի շահ հայ և իրանական ժողովուրդների:

ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանն իր ելույթում նշեց. «Այս վայրկյաններն իրենց մեջ պարունակում են մեծ պատմական խորհուրդ, և սերունդների համար խոսուն վկայություն կդառնա այն իրողությունը, որ հազարամյակների արմատներ ունեցող մեր երկու ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը նոր զարթոնք են ապրում: Ձերբազատվում է վերջին տասնամյակների անբնական ու անբանական խորթություններից և գտնում է իր բնական ճանապարհը»: Իր խոսքի եզրափակիչ մասում ՀՀ փոխնախագահը շնորհակալություն հայտնեց Իրանի Իսլամական Հանրապետության դեկավարությանը Հայաստանի հետ համագործակցելու կապակցությամբ քարի կամք և ակտիվ օժանդակություն ցուցաբերելու համար:

Պրն Գ. Հարությունյանի խոսքից հետո ելույթ ունեցավ ԻԻՀ արտաքին գործերի փոխնախարար Մահմուդ Վայեգին: Նա նշեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականությունը հիմնված է հարևան երկրների հետ սերտ հարաբերություն ստեղծելու վրա և հենց այդ պատճառով Իրանն այն առաջին երկրներից էր, որ 1991 թ. պաշտոնապես ճանաչեց ՀՀ անկախությունն ու տարրերը բնագավառներում սկսեց Հայաստանի հետ զարգացնել փոխշահավետ համագործակցություն: Նա նշեց, որ արդեն իսկ Արաքս գետի



վրա տեղադրված ժամանակավոր կամրջի շնորհիվ երկու երկրների միջև ստեղծվել է ցամաքային կապ: Պրն Վայեզին հույս հայտնեց, որ Իրան-Հայաստան հարաբերություններն օրըստօրն կզարգանան և կհարատենն:

Վայեզիի խոսքից հետո օրինակի խոսք ասաց Թեհրանի թեմի հոգևոր առաջնորդ Տեր Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Դեսպանատան բացումից հետո օրակարգի հրատապ հարց էր դառնում դիվանագետներին բնակելի տարածքով ապահովելու հարցը: Այդ գործում ևս օգնության հասավ հայ համայնքը: Հայ դիվանագետների համար չորսհարկանի նորակառույց շենքում կահավորված անվճար կացարան հատկացվեց «Իրանահայ ազգային և մշակութային միության», Իրանի հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդարանի և մի խումբ հայրենասեր իրանահայերի նյութական աջակցության շնորհիվ:

Առհասարակ դեսպանատան գործունեությունն առավել արդյունավետ ձևով կազմակերպելու համար Վահան Բայրուրյանը ստեղծեց «Դեսպանատան բարեկամների միություն» կառույցը, որի օգտակար գործունեությունը դժվար է մեկ-երկու նախադասությամբ բնութագրելը:

Բնավ պատահական չէ, որ հենց սկզբից հայ-իրանական համագործակցության ամենածավալուն ու ակտիվ քնազավառներն էին դառնալու առևտուրն ու տնտեսությունը: Հայաստանի շրջափակման և տնտեսական դժվարությունների պայմաններում Իրանի հետ համագործակցության մեջ Հայաստանի Հանրապետությունը տեսնում էր իր տնտեսական առկա խնդիրների լուծման կարևորագույն ուղիներից մեկը: Այդ գործը կայուն հիմքերի վրա դնելու և արդյունավետ կերպով զարգացնելու նպատակով 1992 թ. նոյեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց «Հայ-իրանական հարաբերությունները համակարգող պետական հանձնախումբ», որը գլխավորեց ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանը: Երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու նպատակով Թեհրանում ստեղծվեց նաև «Իրան-Հայաստան առևտրական պալատ»՝ իրանա-

հայ հայտնի գործարար, միջազգային բեռնափոխադրումների «Սաթի» ընկերության ղեկավար Լևոն Ահարոնյանի գլխավորությամբ: Պալատի մեջ ընդգրկվեցին ինչպես հայ, այնպես էլ իրանցի աչքի ընկնող գործարարներ: Պալատի գործը վերին աստիճանի ծավալուն էր այն պարզ պատճառով, որ Իրանում Հայաստանի դեսպանատունը չուներ առևտրական բաժին: Իրան-Հայաստան առևտրական պալատը երկու երկրների հարաբերությունների զարգացմանը նպաստող առաջին հաստատությունն էր, որն Իրանում ստացավ պաշտոնական գրանցում: Կարճ ժամանակ անց պալատի անդամության համար դիմողների թիվն օրըստօրն ավելանում էր: Իրանական թեմ մասնավոր և թեմ պետական ընկերությունները դիմում էին պալատին՝ Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների և առևտրական ընկերությունների մասին տեղեկություններ ձեռք բերելու նպատակով<sup>7</sup>:

Երկու երկրների միջև վերընթաց գծով զարգացող առևտրատնտեսական հարաբերություններն օրակարգի հրատապ հարց էին դարձնում Արաքսի վրա մշտական կամրջի կառուցումը, քանի որ ժամանակավոր նավակամուրջը ի վիճակի չէր բավարարելու հարաճուն կերպով զարգացող հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների պահանջները:

Տակավին 1992 թ. մայիսի 14-ին Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև ստորագրվել էր միջպետական համաձայնագիր Արաքս գետի վրա համատեղ մշտական կամրջի նախագծման և կառուցման համար: Շնորհիվ Ավստրալիայի հայության դրամական աջակցության՝ հայկական կողմի համար գործնականում լուծվեց կամրջի շինարարության ֆինանսավորման խնդիրը: Մեղրի-Նորդուզ մշտական կամրջի շինարարությունն ավարտվեց 1995 թ. դեկտեմբերին, իսկ Հայաստանի և Իրանի կողմից պաշտոնական բացումը կատարվեց 1996 թ. հունվարի 9-ին: Այդ կամրջի շահագործման հանձնումը նոր հզոր լիցք հաղորդեց հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերություններին: Անդրա-

<sup>7</sup> Այդ մասին մանրամասն տես Ա. Մալոյնյան, Փորձերու կեանքիս օրերը, էջ 1491-1499:



դառնալով այդ կամրջի նշանակությանը՝ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը նշել է. «Եթե, Աստված մի արասցե, մեկ շաբաթով դադարի Հայաստան–Իրան կամրջի գործունեությունը, ապա գնեը հանրապետությունում կաճեն երկու անգամ, այսինքն՝ տեղի կունենա բնակչության կենսամակարդակի 100 տոկոսանոց անկում»<sup>21</sup>: Այդ նույն հարցի մասին մեկ այլ առիթով ՀՀ նախագահին արտահայտվել է հետևյալ կերպ. «Կյանքը ստիպեց մեզ ապրելու համար տարբերակներ փնտրել և գտանք այդպիսիք. ես նկատի ունեմ հարաբերություններն Իրանի հետ: Մենք սկսեցինք զրոյից, իսկ այսօր (խոսքը վերաբերում է 1997 թվականին – Վ. Բ.) Իրանը մեր առաջին տնտեսական գործընկերն է: Եվ եթե այսօր սահմանային կամուրջը փակվի, մեկ շաբաթ անց այստեղ գնեը կկրկնապատկվեն»<sup>22</sup>:

Մշտական կամրջի շահագործումը հնարավորություն տվեց Իրանի տրաձեթով իրականացնելու նաև տարանցիկ բեռների փոխադրումը Հայաստան: Խոշոր մասշտաբներով սկսեց գործել Պարսից ծոց–Իրան–Հայաստան տրանսպորտային սխեման: Պարսից ծոցի Բանդար–Աքքաս նավահանգիստը սկսեց ծառայել որպես փոխաբեռման կետ ծոցի ավազանի (հատկապես՝ Արաքսական Միացյալ Էմիրությունների), Հնդկաստանի և Հարավարևելյան Ասիայի երկրներից տարանցիկ բեռներ Հայաստան տեղափոխելու համար: Ծայր առավ նաև Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տրանզիտային անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ: Մեղրիի շրջանում գործող սահմանային կետը վերածվեց միջազգային անցումային կետի: Կատարելագործվեց սահմանագծում գործող հայկական և իրանական մաքսատների գործունեությունը:

Այդ բոլորը հնարավորություն ստեղծեց, որ Հայաստանն ու Իրանը դառնան միմյանց համար կարևորագույն առևտրական գործընկերներ: 1997-թ., 1994 թ. համեմատությամբ, Հայաստանի ապրանքաշրջանառությունն Իրանի հետ ավելացավ մոտ երեք անգամ: Իրանի

Իսլամական Հանրապետությունը Հայաստանի արտաքին առևտրի մեջ զբաղեց առաջին տեղը: Երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների մեջ նորը նաև այն էր, որ Իրանի մի շարք խոշոր նահանգների (Ատրպատական, Գիլյան, Քերման, Սպահան և այլն) գործարար շրջաններն ուղիղ և չմիջնորդավորված կապերի մեջ մտան Հայաստանի հետ: Իր առաջին քայլերը սկսեց կատարել նաև սահմանային առևտուրը, որի զարգացմանը երկուստեք մեծ կարևորություն էր տրվում: 1994 թ. Հայաստանի և Իրանի կառավարությունները ստորագրեցին համաձայնագիր Մեղրու շրջանի և Իրանի Մարանդ գավառի միջև սահմանամերձ առևտրի մասին:

1997–1998 թթ. Հայաստան–Իրան առևտրատնտեսական հարաբերությունները հասել էին մի հանգրվանի, երբ անհրաժեշտություն զգացվեց քանակական չափանիշներից անցում կատարելու դեպի որակական չափանիշները: Կյանքը հրամայական խնդիր էր դնում վերացարկվել պարզ առևտուր վարելու քաղաքականությունից՝ որպես համագործակցության գերադաս սկզբունք, և երկու երկրների կապերը դիտարկել տնտեսական ինտեգրացման տեսանկյունից՝ հենված փոխզարգացման վրա: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ էր տնտեսական հարաբերություններն առևտրի ոլորտից ավելի մեծ չափով տեղափոխել արտադրատնտեսական համագործակցության ոլորտ, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության քննադատներ, խորացնել համագործակցությունը գիտության, նորագույն տեխնոլոգիաների, արդյունաբերական սարքավորումների, տեխնիկական գիտելիքների փոխանակման և այլ բնագավառներում:

Հայ–իրանական վերելքաց գծով զարգացող առևտրատնտեսական հարաբերություններն օրակարգի անհետաձգելի լուծման հարց դարձրին նաև քանկային համակարգի քննադատում համագործակցության խնդիրը: Ուստի 1995 թ. հունվարի 12–ին Երևանում բացվեց իրանական հայտնի բանկերից մեկի՝ «Բանկե մեյլաթի» մասնաճյուղը, որը կոչված էր հեշտացնելու երկու երկրների միջև առևտրական գործարքները: Բանկային համակարգում համագործակցությունը

<sup>21</sup> Լ. Տեր-Պետրոսյան, Շնորհանի, էջ 496:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 582:

հնարավորություն տվեց բաց անելու մասնավոր և պետական առևտրական ձեռնարկությունների մասնաճյուղեր, կազմակերպելու առևտրաարդյունաբերական ցուցահանդեսներ և այլն:

Հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունները որակական նոր աստիճանի հասցնելու համար անհրաժեշտ էր մշտապես զարգացնել ու կատարելագործել այդ քնագավառի իրավապայմանագրային դաշտը: Այդ ուղղությամբ կատարված քայլերից հատկապես հիշատակության արժանի է 1994 թ. հունիսի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափաբանության և սերտիֆիկացման վարչության և ԻԻՀ արդյունաբերության նախարարության ստանդարտների և արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի միջև կնքված համաձայնագիրը ստանդարտացման, չափաբանության և սերտիֆիկացման քնագավառում համագործակցության մասին<sup>22</sup>: Այնուհետև 1995 թ. ՀՀ և ԻԻՀ կառավարությունների միջև կնքվեց համաձայնագիր եկամտոտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելու վերաբերյալ: Նույն թվականին ստորագրվեց համաձայնագիր կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին:

Հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման ու ծավալման գործում չափազանց կարևոր դեր էին խաղում արդյունաբերական ապրանքների ցուցահանդեսների կազմակերպումը: Մինչև 1997 թվականը Հայաստանում կազմակերպվել էր իրանական արտադրանքների երեք ցուցահանդես: 1997 թ. Երևանում կազմակերպված իրանական արդյունաբերական և լայն սպառման ապրանքների խոշոր ցուցահանդեսը վերստին գալիս էր վկայելու այն իրողությունը, որ հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունները թևակոխել են զարգացման մի նոր էտապ: Իսկ 1994 թ. Հայաստանի Հանրապետությունը մասնակցել էր Թավրիզում տեղի ունեցած միջազգային ցուցահանդեսին: 1993 թ. օգոստոս-

սի Թեհրանում բացվեց ՀՀ արդյունաբերության նախարարության ցուցահանդեսը, որն ունեցավ մեծ հաջողություն:

Հայաստանի և Իրանի միջև հարաբերությունների սկզբնավորման առաջին իսկ օրերից երկու երկրների մշտական ուշադրության կենտրոնում է եղել միմյանց միջև ցամաքային և օդային հաղորդակցության հաստատման, զարգացման ու կատարելագործման խնդիրը: Հայաստանի անկախության ձեռքբերումից որոշ ժամանակ անց երկու երկրների միջև հաստատվեց օդային կապ: Մինչև 1993 թ. այդ կապն իրականացնում էր իրանական մասնավոր «Արհաթուր» ընկերությունը՝ կազմակերպելով Թեհրան-Երևան և Երևան-Թեհրան յարտերային թռիչքներ: Իսկ 1993 թվականից սկսած՝ այդ նույն չվերթով կանոնավոր թռիչքներ սկսեց իրագործել «Հայկական ավիաուղիներ» օդային ընկերությունը: 1996 թ. հոկտեմբերի 31-ից Թեհրան-Երևան չվերթով շարաթական մեկ թռիչք սկսեց կատարել նաև իրանական «Քասպիան Ելրլայեզ» ավիաընկերությունը:

Հայաստանի և Իրանի քաղաքացիների համար երկու երկրների միջև երթևեկությունն ավելի մատչելի ու էժան դարձնելու նպատակով 1994 թվականից սկսած՝ Երևանի և Թեհրանի միջև սկսեց գործել նաև կանոնավոր ավտորուսային երթևեկություն, որը սպասարկվում էր հայկական և իրանական տրանսպորտային ընկերությունների կողմից: Ծամաքային ավտոմոբիլային երթևեկությունն աննախընթաց կերպով զարկ տվեց զբոսաշրջությանը և փոխադարձ այցելություններին:

1990-ական թվականներից սկսած՝ մեծ կարևորություն ձեռք բերեցին և հեռանկարային դարձան հայ-իրանական համագործակցության ծրագրերն էներգետիկայի քնագավառում: Այդ ուղղությամբ առաջընթաց գրանցելու նպատակով 1994 թ. հունվարի 11-ին Երևան ժամանեց ԻԻՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության պատվիրակությունը նախարար Մոհամմադխանի գլխավորությամբ: 1995 թ. կնքվեց համաձայնագիր Իրան-Հայաստան գազամուղ կառուցելու վերաբերյալ: Ստորագրվեցին նաև համաձայնագրեր Իրանից հեղուկ գազ Հայաստան առաքելու, Իրան-Հայաստան քարձավաղտ

<sup>22</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1994 թ., 4 հունիսի:



Էլեկտրոնհաղորդման գծի կառուցման, Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրոկայանի կառուցման վերաբերյալ և այլն: 1997 թ. շահագործման հանձնվեց Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրոհաղորդման առաջին գիծը:

Տարեցտարի կատարելագործվում էին նաև երկու երկրների միջև կապի միջոցները: 1992 թվականից սկսած՝ սկսեց գործել Իրան-Հայաստան ավտոմատ հեռախոսային կապը: Նախագծեր մշակվեցին Հայաստանն օպտիկա-թելքային հեռախոսային գծով Իրանի տարածքի վրայով կապելու եվրոպայի և Ասիայի հետ: 1995 թ. ԻԻՀ փոստի, հեռագրի և հեռախոսային կապի նախարարության և ՀՀ կապի նախարարության միջև կնքվեց փոխըմբռնման հուշագիր թվային օպտիկոնեյային միջազգային հեռախոսակապ հիմնելու մասին:

Մինչև 1998 թ. ընկած շրջանում ստեղծվեցին բազմաթիվ հայ-իրանական համատեղ ձեռնարկություններ: 1997 թ. սովյալներով Հայաստանում արդեն գործում էին 250 այդպիսի ձեռնարկություններ: Երևանում սկսեց գործել իրանական ապրանքների քաշխման տերմինալը, որն ունի մեխանիկական բեռնավորման և բեռնաթափման կառավարողներ և կապված է հայկական երկաթուղային ցանցին:

Որոշակի ձեռքբերումներ էին արձանագրվել նաև ճյուղատնտեսության բնագավառում համագործակցության վերաբերյալ: Այդ բնագավառում կոտպերացումը զարգացնելու նպատակով 1995 թ. երկու երկրների միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր: ՀՀ այն ժամանակվա գյուղատնտեսության նախարար Վլադիմիր Մոլվախյանի այցն Իրան նոր խթան հանդիսացավ գյուղատնտեսության բնագավառում համագործակցությունն էլ ավելի սերտացնելու ուղղությամբ: Հաջողությամբ զարգանում էին նաև երկու երկրների միջև քաղաքական հարաբերությունները: Հարկ է նշել, որ մինչև 1994 թ. երկու երկրների դիվանագիտական հարաբերությունները գտնվում էին հավատարմատարի մակարդակի վրա: Այդ նույն թվականին որոշվեց հարաբերությունների մակարդակը բարձրացնել դեսպանի աստիճանի: Այդ առթիվ ՀՀ և ԻԻՀ արտաքին գործերի նախարարություն-

ների միջև ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում նշանակվեցին դեսպաններ: ԻԻՀ դեսպանի պաշտոնում Երևան ժամանեց Համիդ Ռեզա Նիքբար Էսֆահանին: 1994 թ. նոյեմբերի 9-ին ՀՀ նախագահի հրամանագրով Վահան Բայրությունյանը նշանակվեց ԻԻՀ-ում Հայաստանի Հանրապետության առաջին արտակարգ և լիազոր դեսպան: Նրան շնորհվեց նաև արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան: 1994 թ. դեկտեմբերի 20-ին նորանշանակ դեսպանը իր հավատարմագրերը հանձնեց ԻԻՀ նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիին: Դեսպանի պաշտոնով Վահան Բայրությունյանը Իրանում պաշտոնավարեց մինչև 1998 թ. հուլիսի 13-ը:

1993-1998 թվականների ընթացքում վերին աստիճանի աշխույժ էին քաղաքական շփումները երկու երկրների ղեկավար շրջանների միջև: Անհնարին է դրանց բոլորի մեկնառնել թվարկումը: Սակայն մի քանիսին այնուամենայնիվ, արժե անդրադառնալ:

Այսպես՝ 1993 թ. հուլիսին Երևան ժամանեց ԻԻՀ խորհրդարանական պատվիրակությունը: Հուլիսի 10-ին պատվիրակության ընդունեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բարկեն Արարցյանը: Հանդիպման ժամանակ նշվեց, որ իշխանության օրենսդիր մարմինների միջև կանոնավոր շփումների նպատակով երկու երկրների խորհրդարաններում ձևավորվելու են հայ-իրանական և իրանա-հայկական բարեկամության պատգամավորական խմբեր<sup>24</sup>:

1994 թ. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և նրան ուղեկցող պատվիրակությունն այցելեցին ԻԻՀ՝ Բանդար-Աբբաս-Քաֆր երկաթուղու քացման արարողությանը մասնակցելու համար: Նույն թվականին Պարսից ծոցի Քիշ կղզում ՀՀ պատվիրակությունը նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ հանդիպում ունեցավ ԻԻՀ նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի հետ: Այդ պատվիրակության կազմում էին նաև պետ. նախարար Վազգեն Սարգսյանը և ՀՀ արտաքին գործերի նախարար Վահան Փափա-

<sup>24</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1993 թ., 13 հուլիսի:



զյանը: Բանակցությունների օրակարգը չափազանց ծավալուն էր՝ սկսած Ղարաբաղի հիմնահարցից, տարածաշրջանային անվտանգության խնդիրներից մինչև հայ-իրանական տնտեսական, քաղաքական և մշակութային համագործակցության խնդիրները:

1994 թ. մայիսի 3-ին ԻԻՀ կառավարության հրավերով Թեհրան ժամանեց ՀՀ պաշտոնական պատվիրակությունը՝ ՀՀ փոխնախագահ Գագին Հարությունյանի գլխավորությամբ: Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանիի և արտգործնախարար Վելայաթիի հետ<sup>25</sup>:

1995 թ. մարտին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և նրան ուղեկցող պատվիրակությունն այցելեց ԻԻՀ՝ Մեշհեդ-Սարախս-Թաջան երկաթուղու քացման հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար: Այդ այցի ընթացքում հիմք դրվեց Իրան-Հայաստան-Թուրքմենստան նռակողմ համագործակցությանը:

1998 թ. հուլիսին ԻԻՀ այցելեց ՀՀ կառավարական պատվիրակությունը՝ օպերատիվ հարցերի գծով նախարար, հայ-իրանական հարաբերությունները համակարգող հանձնախմբի նախագահ Շահեն Կարամանուկյանի գլխավորությամբ:

Քիչ չէին նաև իրանական դիվանագիտական ու պետական գործիչների այցերը Հայաստան: Այսպես՝ 1994 թ. հունվարին Երևան ժամանեց ԻԻՀ արտգործնախարարության Արևելյան Եվրոպայի և ԱԳՀ երկրների գլխավոր վարչության պետ Մահմուդ Բանքին: Նրան ընդունեցին ՀՀ նախագահը և արտգործնախարարը<sup>26</sup>: 1994 թ. հունիսին Երևանում աշխատանքային այցով գտնվում էր ԻԻՀ արտաքին գործերի փոխնախարար Մահմուդ Վայեզին, որին ընդունեցին ՀՀ նախագահը և փոխնախագահը: 1994 թ. պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետություն այցելեցին նաև ԻԻՀ խորհրդարանի՝ Մեջլիսի փոխնախագահ, ԻԻՀ Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ռոհանին, ԻԻՀ արտաքին գործերի նախարար

Ալի Աբբար Վելայաթին, ԻԻՀ արտգործնախարարության ընդհանուր հարաբերությունների և կապերի գծով փոխնախարար Մորթեզա Սարմադին:

1996 թ. դեկտեմբերի 25-29-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանեց ԻԻՀ առաջին փոխնախագահ Հասան Հաբիբի իրեն ուղեկցող սովարաթիվ պատվիրակության հետ: Իրանական քաղաքական վերնախավի աչքի ընկնող այդ բարձրաստիճան գործչի քանակցությունների օրակարգը Հայաստանի Հանրապետության դեկավարության հետ վերին աստիճանի հազեցած ու ծավալուն էր՝ տարածաշրջանի քաղաքական իրադրությանը վերաբերող խնդիրներից սկսած մինչև առևտրատնտեսական քազմապիսի հարցեր: Հատկապես հատուկ քննարկումների առարկա դարձավ Իրան-Հայաստան-Վրաստան-Հունաստան քառակողմ համագործակցությանը վերաբերող հարցը, որն առաջարկվել էր Հայաստանի կողմից և հավանության արժանացել իրանական կառավարության կողմից: Դժբախտաբար Վրաստանը, որը նախապես տվել էր իր համաձայնությունը այդ քառակողմ համագործակցությանը մասնակցելու վերաբերյալ, վերջին պահին Թուրքիայի և Ադրբեջանի ճնշման ներքո ընկրկեց և հրաժարվեց համագործակցությանը մասնակից լինելուց:

Այցի ընթացքում ԻԻՀ փոխնախագահը խստացավ Իրանի ֆինանսական և տեխնիկական օգնությունը Երևանի ավտոդղերի գործարանը վերագործակցելու հարցում: Այդ օգնության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում գործարանը սկսեց աշխատել և թողարկել արտադրանք, որի մի մասը արտահանվում էր Իրան:

1997 թ. հայ-իրանական քաղաքական հարաբերությունների քննազավառում նշանավոր իրադարձություն էր դեկտեմբեր ամսին Հայաստանի, Հունաստանի և Իրանի արտաքին գործերի նախարարների կողմից ստորագրված փոխըմբռնման հուշագիրը նռակողմ համագործակցության վերաբերյալ: Խոսքը վերաբերում է նրան, որ Վրաստանի մերժումից հետո՝ մասնակցելու քառակողմ համագոր-

<sup>25</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1994 թ., 6 մայիսի:

<sup>26</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 1994 թ., 14 հունվարի:

ծակցությանը, այնուամենայնիվ Իրանը, Հայաստանը և Հունաստանը որոշեցին համագործակցության գաղափարը կյանքի կոչել առանց Վրաստանի մասնակցության՝ ստեղծելով եռակողմ՝ Իրան-Հայաստան-Հունաստան համագործակցության կառույց: Այդ համագործակցությունը նրա գոյության առաջին շրջանում գործում էր վերին աստիճանի արդյունավետ կերպով: Համագործակցության շրջանակներում ստեղծվել էին հատուկ աշխատանքային խմբեր, որոնք կորդինացնում էին կառույցի գործունեությունը ամենաբազմապիսի քննազավտաններում, մասնավորապես կապի, տրանսպորտի, արդյունաբերության, էներգետիկայի, քնակառուցողության և այլն: Գերատեսչության, զբոսաշրջության, շրջակա միջավայրի պահպանման և այլն:

Հարաձուռն կերպով զարգանում էին նաև Հայաստանի և Իրանի միջև մշակութային, գիտական, կրթության քննազավտի և այլն կապերը: Հայերն ու իրանցիները երկու հզոր մշակույթ ունեցող ժողովուրդներ են, և նրանց միջև մշակութային համագործակցությունը փոխադարձաբար կարող է հարստացնել երկու ժողովուրդներին և նպաստել ստեղծելու նոր որակներ և արժեքներ: Երկու երկրների միջև գիտական և մշակութային հարաբերությունների հիմքը դրվեց 1992 թ. մայիսի 7-ին՝ կողմերի միջև ստորագրված համաձայնագրով: 1994 թ. Հայաստանի Հանրապետության և ԻԻՀ կառավարությունների միջև ստորագրվեց նոր համաձայնագիր մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, զբոսաշրջության և զանգվածային լրատվության միջոցների քննազավտում համագործակցության վերաբերյալ: 1994 թ. կողմերի փոխադարձ համաձայնությամբ Թեհրանի համալսարանում քացվեց հայագիտական բաժին, իսկ Երևանի Հրաչյան Աճառյանի համալսարանում՝ իրանագիտական բաժին: 1994 թ. փետրվարի 1-12-ը Հայաստանը մասնակցեց Թեհրանում կազմակերպված միջազգային կինոփառատոնին, հունիսին Հայաստանում անցկացվեց իրանական կինոֆիլմերի փառատոն, նույն ամսին Երևանի հանրապետական զեղագիտական կենտրոնի ցուցա-

րահում քացվեց «Նկարում են Իրանի երեխաները» ցուցահանդեսը, սեպտեմբերի 5-15-ը Երևանում կայացավ իրանական կինոֆիլմերի փառատոն, Երևանի տիկնիկային թատրոնը մասնակցեց Թեհրանի տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնին, հունիսի 22-ին Երևանի Հակոբ Պարոնյանի անվան թիվ 59-րդ պարսկերեն թեքունով դպրոցի աշակերտներն այցելեցին Իրան: 1995 թ. երկու երկրների միջև կնքվեց համաձայնագիր սպորտի քննազավտում համագործակցության վերաբերյալ: 1995 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրվեց հուշագիր Երևանում Կապույտ մզկիթի վերանորոգման վերաբերյալ, որը կյանքի կոչվեց կարճ ժամանակամիջոցում: Իրանը հատկապես մեծ հետաքրքրություն էր դրսևորում Հայաստանի գիտատեխնիկական ներուժի, ինչպես նաև հիմնարար գիտությունների քննազավտում նրա ունեցած ձեռքբերումների վերաբերյալ: Այդ քննազավտում կողմերի միջև համագործակցելու նպատակով իրանական կողմի հրավերով ԻԻՀ այցելեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, որն իր այցի ժամանակ արդյունավետ պայմանավորվածություններ ձեռք բերեց ԻԻՀ մի շարք գիտական և ուսումնական հաստատությունների հետ:

ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի մի խումբ նյարդագետ գիտնականներ տևական գործուղման մեջ էին գտնվում Իրանում՝ աշխատելով Թեհրանի Շահիդ Բեհեշթի թժշկական գիտությունների և առողջապահական ծառայությունների համալսարանում, ինչպես նաև Պաստյորի անվան գիտական ինստիտուտում:

Երևանի պետական համալսարանի գեոֆիզիկայի ամբիոնի մի շարք աշխատակիցներ պայմանագրային կարգով ջրի որոնման աշխատանքներ էին կատարում Իրանի ջրագուրկ շրջաններում: Ատրպատականում և Սարչեշեմի պղնձի հանքերի շրջանում օգտակար հանածոների հայտնաբերման և դրանց շահագործման աշխատանքներով զբաղվում էր հայ երկրաբանների մի խումբ: Սերտ համագործակցություն գոյություն ուներ նաև հայ և պարսիկ երկրաշարժագետների միջև:

Իրանի հայկական ճարտարապետական հուշարձանների վերանորոգման նախագծեր կազմելու համար Հայաստանից հրավիրվել էին քարձորրակ ճարտարապետներ, հնագետներ և այլն:

Հայաստանի և Իրանի միջև երկկողմ գիտամշակութային կապերը զարգանում էին պայմանագրային հիմքերի վրա: Այսպես՝ 1995 թ. ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր ՀՀ ատողջապահության նախարարության և ԻԻՀ ատողջապահության, դեղագործության և բժշկական կրթության նախարարության միջև ատողջապահության և բժշկագիտության ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Առհասարակ պետք է նշել, որ գիտա-մշակութային համագործակցության վերաբերյալ հայ-իրանական իրավապայմանագրային քազան վերին աստիճանի հազեցված ու հարուստ է:

Այսպիսով՝ ընդհանրացնելով 1991-1998 թվականների ընթացքում հայ-իրանական հարաբերությունների բնագավառում արձանագրված ձեռքբերումները՝ անվարան կարելի է նշել, որ նշված տարիներին ոչ միայն դրվեցին ապագա համագործակցության կայուն հիմքերը, այլև ձեռք բերվեցին ակնառու խոշոր նվաճումներ:

**ՆԻԿՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍԱՆ**

*Պազմական գիտությունների ղովոր. պրոֆեսոր. ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ, գիտության վասարակալոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր Արևելքի միջազգային հարաբերությունների ուսումնասիրության բաժնի վարիչ, Արևելագիտության ինստիտուտի գիտքնիկ խորիքական*

**ԱՅԱԹՈՒԼԼԱՀ ԽՈՄԵՅՆԻԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ  
ՀԱՐՑՈՒՄ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ  
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ**

XX-րդ դարի 70-ական թվականների կեսերին Մերձավոր Արևելքը կրկին այնկոծվեց: 1973 թ. հեկտեմբերին տեղի ունեցավ արաբա-իսրայելական չորրորդ պատերազմը, որի ընթացքում ամաջին անգամ արաբական-եգիպտական զորքերին հաջողվեց հաղթանակի հասնել պատերազմի նախնական փուլում, ձեռքել իսրայելական անառիկ համարվող «Բարլեի գիծը», անցնել Սուեզի ջրանցքը և լուրջ սպառնալիք ստեղծել Իսրայելի համար: Դա 1960-ականների սկզբների Կարիթյան ձգնաժամից հետո ամենավտանգավոր միջազգային ձգնաժամն էր, երբ աշխարհը կրկին կանգնեց միջուկային պատերազմի վտանգի առջև: 1975 թ. սկսվեց Լիբանանի քաղաքացիական երկրորդ պատերազմը, որը տևեց մոտ 15 տարի, որի մնջ ներգրավվեցին Սիրիան, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, Հորդանանը, Իրաքը, Սուդանը, Մարոկկոն, Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը և այլ երկրներ ու ուժեր: Նասերի մահից հետո Եգիպտոսի նախագահի պաշտոնը ստանձնած Անվար Սադաթը և Իսրայելի վարչապետ Մենահիմ Բեգինը 1978 թ. ստորագրեցին Քեմպ Դևիդի համաձայնագիրը, իսկ 1979 թ.՝ ևս մեկ համաձայնագիր, որով Եգիպտոսը լքեց Իսրայելին դիմակայող արաբական երկրների շարքերը, ինչը ծանր հարված էր արաբական երկրներին և պաղեստ-



տիկյան ազատագրական շարժմանը: Սադաթի այդ քայլն արարական աշխարհը գնահատեց որպես դավաճանություն և նրան քաղաքական մեկուսացման ենթարկեց: 1981 թ. հոկտեմբերի 6-ին Անվար Սադաթն իր դավաճանական քայլի համար սպանվեց ահաբեկիչների ձեռքով և Եգիպտոսի նախագահ դարձավ Հուսնի Մուբարաբը: Սակայն այս շրջանի ամենակարևոր և համաշխարհային նշանակություն ունեցող երևույթը 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունն էր, շահական վարչակարգի տապալումը և Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) հռչակումը, որը, քնականաբար, մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական նոր իրողություններ ստեղծեց:

Հիշենք, որ այդ տարիները սառը պատերազմի և երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի միջև հակասությունների լարվածության ամենավտանգավոր փուլերից մեկն էին: Երկու գերտերություններն էլ ունեին իրենց ռազմաքաղաքական մեծ շահերը մերձավորարևելյան տարածաշրջանում և ակտիվորեն միջամտում էին վերոնշյալ քաղաքական իրադարձություններին: Ստեղծված պայմաններում ԱՄՆ-ի օժանդակությամբ իր գործունեությունն ակտիվացրեց ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան, որը միջամտում էր Լիբանանի և արաբական այլ երկրների ներքին գործերին, ոչ քարենավական դիրք էր գրավել Իրանի շիական-իսլամական հեղափոխության նկատմամբ և լի էր վճռականությամբ սպասարկելու ԱՄՆ-ի ու արևմտյան մյուս պետությունների ռազմավարական շահերը: Անհանգստացած էին նաև ճգնաժամային այդ գոտու անմիջական և մերձավոր հարևան երկրները, որոնք մտահոգ էին, թե իրադարձությունների հետագա զարգացումն ինչպիսի և ինչ աստիճանի ներգործություն կարող էր ունենալ նրանց վրա:

### I. Ի՞նչ առաքելությունը Մերձավոր Արևելքում (1979 թ.)

Ստեղծված իրադարձություններից մտահոգված երկրների շարքում մենք առաջին հերթին դատում ենք Խորհրդային Հայաստանը: Ճիշտ է, Հայաստանը, ինչպես խորհրդային մյուս բոլոր հանրա-

պետություններն այդ ժամանակ, դեռևս անկախ պետություն չէր և մտնում էր ԽՍՀՄ կազմի մեջ, այդուհանդերձ, Խորհրդային Միության հնարավոր ներգրավումը մերձավորարևելյան առձակատումների մեջ չէր կարող վտանգ չներկայացնել Հայաստանին, մանավանդ որ այդ բախումները ծավալվում էին Խորհրդային Միության հարավային, այսինքն՝ հենց Հայաստանի ինչպես անմիջական (իրանական և թուրքական), այնպես էլ մերձակա (լիբանանյան, սիրիական և ընդհանրապես արաբական) սահմաններ մոտ:

Հայաստանին մտահոգող մյուս կարևոր հարցն այն էր, որ մերձավորարևելյան երկրներում քնակվում էր հայության մի հոծ զանգված, որը, քնականաբար, ենթակա էր քաղաքական վայրիվերումների: Նշյալ տարածաշրջանում կենտրոնացված սփյուռքահայերի գլխին մեծ վտանգ էր կախված: Այդ ժամանակ նրանց թիվը հասնում էր մոտ 700-750 հազարի, այդ թվում՝ Լիբանանում քնակվում էր 250 հազար, Իրանում՝ 200 հազար, Սիրիայում՝ 100-120 հազար, Թուրքիայում՝ 80-90 հազար, Իրաքում՝ 20 հազար, Եգիպտոսում՝ 10-12 հազար, Հորդանանում՝ 6-8 հազար, Քուվեյթում՝ 7 հազար հայ և այլն: Եվ եթե ավելացնենք, որ հայության ճնշող մեծամասնությունը հայտնվեց քաղաքական և ռազմական իրադարձությունների ամենավտանգավոր և ակիվներտաններում, ապա ավելի ակնառու կդառնան նրանց սպառնացող վտանգների ծավալները: Այս պարագան մեծապես անհանգստացնում էր Հայաստանի ղեկավարությանը, և այդ իմաստով այն հայտնվել էր քավականին ծանր դրության մեջ: Մերձավորարևելյան երկրների սփյուռքահայերի վիճակն ինչ-որ չափով անհանգստացնում էր նաև Խորհրդային Միությանը: Հանրահայտ ճշմարտություն է սփյուռքահայերի դրական և բարեկամական դիրքորոշումը Խորհրդային Միության նկատմամբ, որն առաջին հերթին պայմանավորված էր այն հանգամանքով, որ նրանց մայր հայրենիքը՝ Հայաստանը, գտնվում էր ԽՍՀՄ-ի կազմում: Մոսկվայում շատ լավ տեղյակ էին այդ մասին և օգտվում էին դրանից ու հիանալի հասկանում, որ նրա շահերից չէր բխում մերձավորարևելյան սփյուռքահայության թուլա-

ցումը, առավել ևս նրա ցարքուցրիվ լինելը: Նա հորհրդային Միության մերձավորարևելյան բաղաձայնության որոշակի գործոններից մեկն էր և ուրոյն դեր էր կատարում:

Ահա այսպիսի պայմաններում հասունացավ Լիբանան պատվիրակություն ուղարկելու հարցը, որի մեջ ներգրավվեցի նաև ես՝ հատուկ առաքելությամբ: Դրան անդրադարձել է 1977–1988 թվականներին Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանն իր ձեռագիր հուշերում<sup>27</sup>: Ուստի նպատակահարմար ենք համարում հղում կատարել նրա Հուշերի այդ հատվածին՝ որպես սկզբնաղբյուրի. «Ն. Հովհաննիսյանին մենք գործուղեցինք Լիբանան (այդ պատրվակի տակ նա պետք է այցելեր Մերձավոր Արևելքի նաև այլ երկրներ) ավելի լայն շրջանակների խնդիրներ լուծելու համար (օգտագործելով նրա լայն կապերն այդ ռեգիոնի շատ հասարակական գործիչների հետ): Այնպես որ նա պատվիրակության կազմում ընդգրկված է հատուկ նպատակների համար: Եվ, ի պատիվ նրա, պետք է ասել, որ նա հենց հատուկ առաջադրանքները կատարեց քավական հաջող: Մեզ՝ Հայաստանի ղեկավարությանը, շատ էր հետաքրքրում հենց հումայնի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ն. Հովհաննիսյանը, իրոք լուրջ աշխատանք տանելով Իրանի տարբեր շրջանների (հասարակական գործիչների) հետ, մեծ հաղորդեց, որ այսթղյախ հումայնի կվարի հայանպաստ քաղաքականություն» (ընդգծումները Կ. Դեմիրճյանինն են):

Երբ Կ. Ս. Դեմիրճյանը նշում է, որ «Ն. Հովհաննիսյանին մենք գործուղեցինք Լիբանան», ապա «մենք» ասելով՝ նա նկատի ուներ ոչ միայն Հայաստանի ղեկավարությանը, այլև Մոսկվային, քանի որ դրանք այնպիսի հարցեր էին, որ առանց Մոսկվայի գիտության և համաձայնության չէին կարող առաջ քաշվել և լուծվել: Դեռ ավելին՝ առանցքային քննարկի մի շարք հարցերի նախաձեռնությունը եկել է

<sup>27</sup> Ձեռագիր հուշերի այդ հատվածը, որը հեղինակի կողմից համարակալված 143–րդ էջն է, 2010 թ. ինձ տրամադրել է Կ. Դեմիրճյանի հարգարժան ավիկներ Ռինա Դեմիրճյանը, ում հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը և երախտագիտությունը:

Մոսկվայից: Դրանով է քացատրվում նաև այն հանգամանքը, որ Լիբանանում գործուղման ընթացքում ես մշտապես վայելել եմ Բեյրութում հորհրդային Միության ղեսպան Սոլդատովի և ղեսպանության մյուս աշխատակիցների ամենալայն աջակցությունը և օժանդակությունը: Իսկ «այլ երկրներ» ասելով՝ Կ. Դեմիրճյանն առաջին հերթին նկատի ուներ Իրանը և շվուսները նրա լիազոր ներկայացուցիչներին: Իմ թեկնածության ընտրությունը պատճառաբանված էր մի շարք հանգամանքներով. դրանց մասին նշում է Հայաստանի կոմկուսի ղեկավարը: Նրա ասածին կցանկանայինք ավելացնել նաև հետևյալ հանգամանքները: Ես այդ ժամանակ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների թածին վարիչն էի, քազմաթիվ արաբագիտական ուսումնասիրությունների հեղինակ, որոնք հրատարակվել էին ոչ միայն Երևանում, այլև Մոսկվայում, Բեյրութում, Հայնպում, Բեռլինում (հայերեն, ռուսերեն, արաբերեն, գերմաներեն, անգլերեն), արաբական երկրների հետ քարեկամության և մշակութային կապերի հորհրդային ստոցիացիայի վիցն պրեզիդենտը, ԽՍՀՄ–Լիբանան բարեկամության ընկերության նախագահության անդամ և Հայ–արաբական բարեկամության ընկերության նախագահը: Մինչ այդ ես արդեն մի քանի անգամ այցելել էի Լիբանան, Սիրիա, Իրաք, Հորդանան, տեղյակ էի արաբական իրողություններին և հանդիպումներ էի ունեցել արաբական քաղաքական, հասարակական, գիտական և մշակութային մի շարք ակաևավոր գործիչների հետ<sup>28</sup>:

Ես, բնականաբար, այստեղ հանգամանորեն չեմ լուսարանի իմ լիբանանյան առաքելությանը: Դա առանձին հարց է, որին ես կանդորադառնամ հետագայում: Կշոշախիմ միայն առանձին դրվագներ, որովհետև առանց դրանց անհավանաբար կլիին իրանական փուլի հայտնվելը իմ առաքելության ոլորտում:

<sup>28</sup> Հարկ եմ համարում նշել, որ Բեյրութ գործուղվեց նաև Հայաստանի կառավարության պատասխանատու մեկ այլ աշխատող՝ ազգային անվտանգության հարցերի մասնագետ: Մեծ, բնականաբար, ի հարկին, համագործակցում էլիք:



## II. Այաթոլլահ Խոմենի. «Իրանը երբեք չի դառնա գեներալ ՄԱԿ-ի ձեռքում՝ ուղղված Խորհրդային Միության դեմ, եթե...»

Մենք արդեն նշել ենք, որ 1975 թ. Լիբանանում սկսվել էր քաղաքացիական պատերազմ, և երկիրը բաժանվել էր միմյանց հակադիր երկու թշնամական ճամբարի՝ աջերի և ձախերի: Աջ ուժերի միջուկը կազմում էին քրիստոնյա մարոնիների<sup>29</sup> այն խումբը, որը գլխավորում էին շեյխ Պյեր Ժմայելը և նրա երկու որդիները: Իսկ ձախերը կազմել էին «Ազգային շարժում» խմբավորումը: Հայերն առաջին օրվանից գրավեցին չեզոք դիրք: Բայց եթե Ազգային շարժում խմբավորումը հարգում էր հայերի դիրքորոշումը, ապա մարոնիները դեմ էին դրան: Նրանք վարում էին հեզմոնիստական քաղաքականություն: Պյեր Ժմայելի մարոնիական խումբը ձգտում էր իրեն ենթարկելու նախ մարոնիական բոլոր խմբավորումները, այնուհետև բոլոր քրիստոնյա համայնքները՝ հույն ուղղափառ, կաթոլիկ և Հայ առաքելական եկեղեցու հետևորդներին, ապա իրենց իշխանությունը հաստատելու ամբողջ Լիբանանում: Հայ համայնքը դեմ էր մարոնիների քաղաքական նկրտումներին և չէր ենթարկվում նրանց պահանջներին: 1978 թ. հոկտեմբերի 1-ին լավ զինված մարոնիական ռազմավորված զորքերը գրծեցին Բեյրութի Բուրջ Համուդ, ինչպես նաև Բիբուսի, Մեթնի, Քեսրվանի և այլ վայրերի հայկական թաղերի վրա: Հոկտեմբերյան արյունալի օրերին զոհվեց 80 և վիրավորվեց 350 հայ, հազարավոր հայեր դարձան փախստականներ: Այդ կերպ մարոնի զինված քանդակները փորձում էին զենքի ուժով իրենց ենթարկել հայ համայնքը: Չնայած ծանր կորուստներին՝ հայերը չենթարկվեցին նրանց և շարունակում էին հավատարիմ մնալ իրենց քաղաքականությանը: Կցականայինը ընթերցողի ուշադրությունը իրավիճակն այն իրո-

ղության վրա, որ քրիստոնյա հայերը հարձակման ենթարկվեցին քրիստոնյա մարոնիների կողմից, մինչդեռ ի պաշտպանություն քրիստոնյա հայերի՝ վճռակառնորեն հանդես եկան Լիբանանի մուսուլմանները, առաջին հերթին՝ շիաները, դրուզները, ինչպես նաև առանձին սուննիական խմբավորումներ: Մարոնիների ավազակային հարձակումը բողոքի մեծ այլք առաջացրեց Լիբանանում, արաբական մյուս երկրներում, Խորհրդային Միությունում, աշխարհի այլ երկրներում և, իհարկե, Հայաստանում:

Լիբանանահայության համար ստեղծված այդ ծանր և վտանգավոր վիճակը օրակարգի հարց դարձրեց նրան օգնություն ցույց տալու և նրա ինքնապաշտպանությունը կազմակերպելու խնդիրը: Ուստի հակիրճ կերպով Լիբանան իմ առաքելության գլխավոր նպատակներն էին՝ օգտագործելով իմ կապերը լիբանանյան պետական, քաղաքական, հասարակական, կուսակցական, կրոնական և հնարավորության սահմաններում նաև զինվորական ու դատաիրավական գործիչների հետ՝ մոբիլիզացնել նրանց հնարավորություններն ու ներուժը լիբանանահայությանը քաղաքական և քաղաքական աջակցություն ցույց տալու, նրա անվտանգությունն ապահովելու և հնարավոր նոր հարձակումները հայ համայնքի վրա կանխելու համար: Այս կարևորագույն խնդիրներն իրականացնելու նպատակով ես 1979 թ. հունվար-փետրվար ամիսներին, ընդհուպ մինչև շահ Մուհամմադ Ռեզա Պահլավի վարչակարգի տապալումը, Խոմենիի վերադարձը Փարիզից Թեհրան և իսլամական հեղափոխության հաղթանակը, ապա նաև նույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գտնվում էի Լիբանանում: Ես բազմաթիվ հանդիպումներ ունեցա Լիբանանի նախկին նախագահ Սուլեյման Ֆրանժիեի, վարչապետ Ռաշիդ Սոլիի և այլ քաղաքատիրական պետական գործիչների, պառլամենտի անդամների, քաղաքական կուսակցությունների և Լիբանանի կրոնական համայնքների ղեկավարների հետ, որի ընթացքում քննարկում էինք հայ համայնքի անվտանգության ապահովման, այդ գործում նրան օժանդակություն ցույց տալու, նրա որդեգրած

<sup>29</sup> Մարոնիները վաղ միջնադարում ձևավորված քրիստոնեական աղանդ էին, որոնք իրենց անվանումը ստացել էին սուր Մարոնից: XVII դարավերջից նրանք ճանաչեցին Հռոմի պապին որպես իրենց հոգևոր պետ, սակայն ունեն մաս իրենց սեփական եկեղեցապետի պատիվարքը:



դրական չնդգոտության դիրքորոշումը հարգելու, հայ համայնքի վրա աջակողմյան ուժերի նոր հարձակումները կանխելու և այլ հարցեր, որոնց մենք այստեղ չենք կարող անդրադառնալ: Եվ պետք է նշեմ, որ նրանք բոլորը դատապարտում էին մարտիների 1978 թ. հոկտեմբերյան հարձակումը հայ համայնքի վրա, հայ համայնքը համարում էին Լիբանանի օրինական համայնքներից մեկը, իրենց համակրանքն արտահայտում հայերի նկատմամբ և խոստանում ամենայնպես ու տարաբնույթ օգնություն ու օժանդակություն լիբանանահայությանը: Կցանկանալիս մեջբերել Լիբանանի նախկին վարչապետ Ռաշիդ Սոլիի՝ տողերիս հեղինակի հետ հանդիպման ժամանակ արտահայտած տեսակետը, որը քնորոշ էր այդ ընթացքում արաբական պետական գործիչների մոտեցումներին. «Մենք՝ արաբներս, խոր հարգանք ենք տածում հայերի նկատմամբ, որոնք շատ քան են արել Լիբանանի տնտեսական և մշակութային զարգացման համար: Հայ համայնքը Լիբանանի օրինական համայնքներից մեկն է, իսկ հայերը՝ այս երկրի օրինական քաղաքացիները և մեր եղբայրները: Ուստի մենք մեր պարտականությունն ենք համարում պաշտպան կանգնել մեր հայ եղբայրներին»: Այդ օրերին «Պաշտպան կանգնել մեր հայ եղբայրներին» ձևակերպումը դարձավ զլխավոր կարգախոսը Լիբանանում:

Խիստ արդյունավետ եղան իմ հանդիպումները Լիբանանի շիա իսլամական համայնքի և նրա հոգևոր առաջնորդ Շամս ալ Դինի հետ, որը ցասումով դատապարտեց մարտիների հակահայկական դիրքորոշումը, իսկ նրանց հարձակումը հայ համայնքի վրա որակեց ավազակային: Միսաժամանակ իմամը հայտարարեց, որ Լիբանանի շիա համայնքը կանգնած է լիբանանահայության թիկունքին և անհրաժեշտության դեպքում նրան կօգնի ամեն կերպ: Ես շիաների դիրքորոշումը կարևորում էի նաև այն առումով, որ նրանք իրենց թվաքանակով արդեն դարձել էին Լիբանանի ամենախոշոր համայնքը և կազմում էին Լիբանանի բնակչության մեծամասնությունը: Հասկանալի է, որ շիաների՝ Լիբանանի ամենամեծ համայնքի հայանապաստ դիրքորոշումը շատ կարևոր էր մղձավանջային այդ օրերին: Մյուս

կողմից հարկ է մատնանշել նաև այն հանգամանքը, որ Լիբանանի շիաները շատ սերտ հարաբերությունների մեջ էին Իրանի շիաների հետ, որն ինձ հայտնի դարձավ լիբանանյան շիաների մեկ այլ ղեկավար Հուսեյն Հուսեյնիի հետ հանդիպման և քննարկումների ժամանակ: Նա շիական «Ամալ» ռազմաքաղաքական կազմակերպության առաջնորդն էր, մեծ հեղինակություն էր վայելում Լիբանանում և շատ չանցած՝ զբաղեցրեց Լիբանանի պառլամենտի նախագահի պաշտոնը, որն իր նշանակությամբ երկրորդն է Լիբանանում՝ նախագահի պաշտոնից հետո: «Ամալ» ուներ իր զինված ջոկատները<sup>30</sup>, որոնք շատ լավ զինված էին, և լիբանանյան այլ ուժերը սովորաբար խուսափում էին նրանց հետ կոնֆլիկտի մեջ մտնելուց: Հուսեյն Հուսեյնին ինձ վստահեցրեց, որ հարկ եղած դեպքում ինքը պատրաստ է «Ամալի» զինված ուժերը ղեկ լիբանանահայերի տրամադրության տակ: Ես Լիբանանում գտնվելու ընթացքում քազմաթիվ հանդիպումներ ունեցա Հուսեյն Հուսեյնիի հետ, և մեր միջև հաստատվեցին գործնական հարաբերություններ, մենք վստահում էինք միմյանց և չնղավ թեկուզ մի դեպք, որ մենք մեր պայանակվորվածությունները չկատարեինք: Հուսեյն Հուսեյնին ինձ տեղյակ պահեց, որ լիբանանյան շիաները, «Ամալ» կազմակերպությունը և անձամբ ինքը սերտ կապերի մեջ են այաթոլլան հոմեյնիի հետ, որն այդ ժամանակ դեռևս գտնվում էր Փարիզի մերձակայքում և այնտեղից ղեկավարում պայթյալը շահին և նրա վարչակարգը տապալելու համար: Ջրույցի հենց սկզբում նա ասաց, որ «Մենք ոչ մի քանի կարիք չեն զգում, քանի որ այաթոլլան հոմեյնին իրենց և «Ամալին» օգնում է ամեն ինչով՝ թե՛ ֆինանսապես, թե՛ նյութապես և թե՛ զենք ու զինամթերք տրամադրելով»: Հուսեյն Հուսեյնին այաթոլլան հոմեյնիի քաղաքական շրջապատից և իրանական նոր ու համեմատաբար երիտասարդ ու

<sup>30</sup> Լիբանանի մեջբողաքական կյանքի յուրաքանչյուր մեկը քաղաքացիական պատերազմի ընթացքում այն էր, որ քաղաքական կուսակցությունների մեծամասնությունն ուներ իր ռազմական խմբավորումները, որոնք պաշտպանական գործառույթներ էին իրականացնում իրենց հսկողության տակ գտնվող քաղաքներում:

կրթված խորհրդատուների մերձավորագույն ընկերներից էր, որոնց թվին էին պատկանում Բանի Սադրը, Մուսթաֆա Չամբանը, Իբրահիմ Յազդին, Քուրթուբ Ջաղեն, Թաբաթաբաին և այլք<sup>31</sup>: Եվ նա հետագայում մեծ դեր խաղաց այաթոլլահի խումբների հետ իմ և իմ միջոցով խորհրդային կողմի հետ շփումների հաստատման գործում, որի շնորհիվ հնարավոր եղավ դրականորեն լուծել խորհրդա-իրանական հարաբերությունների կարգավորման և իրանահայության իրավունքների և անվտանգության ապահովման խնդիրները: Իրանում իրենց ներդրումն ունեցան այաթոլլահի խումբների ներկայացուցիչների հատուկ այցելությունները Բեյրութ և նրանց հետ իմ հանդիպումներն ու բանակցությունները Հուսեյն Հուսեյնիի առանձնատանը: Ընդունված կարգի համաձայն՝ նա իմ հանդիպումների ու բանակցությունների մասին սովորաբար տեղյակ էի պահում Բեյրութում խորհրդային ղեկավարության ղեկավարությանը, առաջին հերթին՝ ղեկավար Սուրյատովին, որը հիանալի էր հասկանում հայ համայնքի կարևորությունը և ցուցաբերում էր մեծ օժանդակություն հայ համայնքի գոյությունը Լիբանանում պահպանելու համար: Հուսեյն Հուսեյնիի հետ իմ հանդիպումների մասին նա նրան պարբերաբար տեղյակ էի պահում, և մենք հանգամանորեն վերլուծում էինք նրա միջոցով այաթոլլահի խումբներից մեզ հասնող առաջարկությունները: Այս անգամ նույնպես նրան տեղյակ պահեցի Հուսեյն Հուսեյնիի և նրա այն կարևոր դերի մասին, որ նա խաղում էր այաթոլլահի խումբների քաղաքականության ձևավորման և կիրառման գործում: Նա շատ տպավորված էր և ինձ շնորհակալություն հայտնեց նման քաղաքական գործի հետ գործնական կապեր հաստատելու համար՝ հորդորելով ավելի խորացնել ու առարկայական դարձնել այդ կապերը և հաշվի առնել, որ այդ կարևոր գործում ոչ մի մանրուք չկա: Եվ այսպես՝ երկու կողմից էլ՝ թե՛ իրանական և թե՛ խորհրդային կողմից, կար համագործակցելու պատրաստակամություն, և երկու կողմն էլ ինձ դիտում էին այդ համագործակցության իրականացման օղակներից մեկը:

<sup>31</sup> Ն. Հովհաննիսյան, Իրան. Այաթոլլահի խումբների դարաշրջանը, Երևան, 2004, էջ 12:

Իմ հանդիպումների ժամանակ նա նկատեցի, որ Հուսեյն Հուսեյնին, ինչքան որ ջերմ էր, երբ խոսքը գնում էր հայությանն օգնելու մասին, նույնքան և սառնություն էր ցույց տալիս, երբ խոսքը վերաբերում էր Իրանի նկատմամբ խորհրդային Միության քաղաքականությանը, ավելի կոնկրետ՝ իր մայրամուտն ապրող շահի վարչակարգի հասնեալ: Դա այն օրերին էր՝ 1979 թ. հունվարի վերջերին և փետրվարի սկզբներին, երբ խաղարկվում էր իրանական քաղաքական դրամալի եզրափակիչ փուլը: Մեր հերթական հանդիպման ժամանակ Հուսեյն Հուսեյնին ինձ ուղղակի քաց տեքստով ասաց, թե զարմացած է խորհրդային կառավարության քաղաքականության վրա, որը կարծես թե չի նկատում, թե ինչ է կատարվում Իրանում, չի հասկանում, որ շահի կառավարման օրերը հաշված են, և շարունակում է շահի հետ պահպանել իր բարեկամական արատավոր քաղաքականությունը: Նա ընդգծեց, որ շահի վարչակարգի տապալումն ու խումբների հաղթանակն անխուսափելի են, և եթե խորհրդային Միությունը շարունակի իր արդեն հնացած քաղաքականությունը, ապա շահի տապալումից հետո նա կարող է շատ լուրջ խնդիրներ ունենալ Իրանի նոր ղեկավարության հետ: Հուսեյն Հուսեյնին շեշտեց, որ դա այաթոլլահի խումբների կարծիքն է և խնդրեց, որ նա այդ կարծիքը փոխանցեմ Բեյրութում խորհրդային ղեկավարությանը, ինչը էր նաև մինչպես կատարեցի: Հուսեյն Հուսեյնիի խոսքերից դժվար չէր կրահել, որ խորհրդային-իրանական հարաբերությունների հետագա զարգացման մեջ սկզբում էր արմատական նոր փուլ, և խնդիրն այն էր, թե արդյոք խորհրդային Միությունը պատրաստ էր դրան: Դեպատմությունում շատ նեղ կազմով այդ հարցի քննարկման ժամանակ, երբ ինձ հարց տրվեց Հուսեյն Հուսեյնիի կողմից մեզ փոխանցված այաթոլլահի խումբների կարծիքի մասին, նա հիմնականում պաշտպանեցի այն՝ ավելացնելով իման խումբների մոտալուտ հաղթանակի և նրա՝ Փարիզից Թեհրան վերադառնալու իրական հնարավորության մասին, և եթե մինչ այդ խորհրդային Միությունը չփոխի իր դիրքորոշումը, ապա նա շատ քան կկորցնի և կունենա լարված հարաբերու-



թյուններ իր հարավային հարևանի հետ, որը չի բխում մեր շահերից: Փաստորեն դա խորհրդային անհեռատես, ոչ ճկուն և քարացած արտաքին քաղաքականության հերթական դրսևորումն էր: Դեսպալությունում մեր հանդիպման վերջում որոշվեց իմ այս տեղեկատվությունը համայնքի կարծիքի մասին անհապաղ փոխանցել խորհրդային ղեկավարությանը: Իմ հաղորդած առաջին տեղեկություններն ըստ երևույթին մտահոգվ էին խորհրդային ղեկավարությանը, որը որոշել էր փոփոխություններ մտցնել Իրանի հանդեպ իր քաղաքականության մեջ: Եվ երբ ինձ հրավիրեցին խորհրդային դեսպալություն, ապա ինձ հանձնվեց «Իզվեստիա» թերթի վերջին թարմ համարը, որը, ինչպես ինձ ասացին, ինքնաթիռով Մոսկվայից հասցվել էր Բեյրութ՝ Հուսեյն Հուսեյնիին և նրա միջոցով համայնքի փոխանցելու համար: Խորհրդային այդ պաշտոնաթերթում տպագրված էր մի ընդարձակ հոդված Իրանում ծավալվող իրադարձությունների և քաղաքականության մասին, որտեղ բավականին քացասական գույներով էր ներկայացված շահի քաղաքականությունը, արդեն համակրանք էր արտահայտվում համայնքի գլխավորած շարժման նկատմամբ և ընդգծվում էր, որ խորհրդային կառավարությունը պատրաստ է հարգելու Իրանի ժողովրդի իրավունքը և որոշումը Իրանի վարչակարգի հարցում: Դեսպալությունն ինձ առաջակեց «Իզվեստիայի» այդ համարը համապատասխան թարգմանությամբ հանձնել Հուսեյն Հուսեյնիին՝ շեշտելով, որ դա խորհրդային կառավարության նոր պաշտոնական դիրքորոշումն է: Հուսեյն Հուսեյնին անթաքույց գոհունակությամբ ընդունեց մեր ներկայացրած այս նոր հաղորդումը և հավաստիացրեց, որ ինքն այդ նյութն անմիջապես կառաքի իման կոմյունիստներին: Հավաստիարար նա չէր անկեկտրում նման արագ պատասխան և քաղաքականության այդպիսի սկզբունքային փոփոխություն: Բայց չպետք է մոռանալ, որ այդ օրերին դեպքերը զարգանում էին այնպիսի արագությամբ, որ խորհրդային կառավարության հապաղում և անկանխատեսելի քացասական հետևանքներ կարող էր ունենալ խորհրդային Միության համար: Մոսկվայում վերջապես սկսել էին գիտակցել դա և ավելի արագ գործել:

Ես կատարեցի խորհրդային դեսպալության ևս մեկ հանձնարարություն: Դիմելով Հուսեյն Հուսեյնիին՝ ես նրան հարցրի՝ «Ինչ կցանկանայիք դուք և այաթոլլահ հոմեյնիին, որ խորհրդային կառավարությունն աներ ձեզ համար»: Դա դիվանագիտության մեջ, հատկապես նորագույն շրջանում, ընդունված մի ձև է, որի օգուտյամբ հարցնող կողմը ցանկանում է իմանալ մյուս կողմի հաջորդ քայլերի մասին: Միաժամանակ դա նրանց կողմից ընկալվում է նաև որպես նրանց միջև վստահության դրսևորման և հարաբերությունների հետագա խորացման ազդանշան: Հուսեյն Հուսեյնին ուրախությունից անակնկալի եկավ, այդ պահին նա իրեն շատ երջանիկ էր զգում: Ի պատասխան իմ հարցի՝ նա նշեց, որ ինքն իրավասու չէ այդ հարցին անմիջապես պատասխանելու, ուստի այդ հարցը նույնպես անհապաղ կողարկի Փարիզ այաթոլլահ հոմեյնիին և պատասխանն ստանալուն պես անմիջապես ինձ տեղյակ կպահի, և մենք կունենանք մի նոր հաղիպում: Իման հոմեյնիի պատասխանն իրեն շատ սպասեցնել չտվեց: Հուսեյն Հուսեյնին ինձ հեռաձայնեց և խեղրեց անհապաղ հանդիպել: Ես, իհարկե, կոահեցի, որ նա շատ կարևոր լուր ուներ ինձ հաղորդելու և մեկնեցի նրա հետ հանդիպման: Հանդիպմանը ներկա էին նա երեք հոգի, որոնք եկել էին Փարիզից, հոմեյնիի հանձնարարությամբ: Դա առաջին դեպքը չէր, երբ հոմեյնիի շրջապատից զանազան խորհրդականներ էին գալիս, որոնք մասնակցում էին Հուսեյն Հուսեյնիի հետ մեր քննարկումներին, հարցեր տալիս, մասնավորապես ինձ, անգամ իրենց կարծիքն արտահայտում: Այս անգամ ներկաների մեջ էր համակրելի արտաքինով, ակնոցներով և մորուքավոր մի անձնավորություն, որին ներկայացնելով՝ Հուսեյն Հուսեյնին ասաց, որ դա Մուսթաֆա Չամրանն է: Ես արդեն գիտեի նրա մասին, տեղյակ էի, որ նա այաթոլլահ հոմեյնիի ամենամերձավոր և վստահելի մարդկանցից մեկն էր: Դրանից մոտ մեկ ամիս անց, երբ հոմեյնին եկավ իշխանության գլուխ, նա Մուսթաֆա Չամրանին նշանակեց պաշտպանության նախարարի, ապա նաև Հեղափոխության պաշտպանության նախագահի խիստ պատասխանատու պաշտոններում:



Ջրույցը սկսեց Մուսաֆա Չամրանը, որով, շնորհակալություն հայտնելով խորհրդային կողմին, հայտնեց հետևյալ տեղեկությունը, թե Հուսեյն Հուսեյնիից ստանալով խորհրդային կառավարության հարցումները՝ այաթոլլահի խումայնի անհապաղ հրավիրում է իր մերձավոր զինակիցներին փակ խորհրդակցություն, որի ժամանակ հանձնարեցին քննարկելու են խորհրդային կառավարությանը տրվելիք պատասխանի բոլոր հանգամանքները և միաձայն ընդունվում հետևյալ որոշումը: Ահա այդ պատասխանը, որը ես նրանց ներկայությամբ գրի առա և այժմ նույնությամբ ներկայացնում եմ հարգելի ընթերցողին: Այաթոլլահի խումայնիի հայտնում էր. «Մենք կցանկանալիք, որ եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները փորձի միջամտել Իրանի ներքին գործերին, ապա խորհրդային Միությունը կանխի դա, հանդես գա դրա դեմ՝ ի պաշտպանություն Իրանի ինքնիշխանության: Եթե խորհրդային Միությունը դա կատարի, ապա Իրանը կվերացնի իր տարածքում տեղակայված ամերիկյան ռազմական բազան, որն ուղղված է խորհրդային Միության դեմ, և Իրանը երբեք զենք չի դառնա ամերիկյան իմպերիալիզմի ձեռքում՝ ընդդեմ խորհրդային Միության» (ընգծումը մերն է-Ն. Հ.): Ընտրահակություն հայտնելով իրանական կողմին արագ և հստակ պատասխանի համար՝ ես գնացի խորհրդային դեսպանություն, որտեղ արդեն սպասում էին ինձ: Այստեղ մեծ գոհունակությամբ ընդունվեցին խումայնիի խտատումները վերացնելու ամերիկյան ռազմական բազան, որը հազեցված էր տեխնիկայի վերջին խոսքով և իր դիտողական տեսադաշտում էր պահում խորհրդային Միության մի վիթխարի տարածք՝ ներառյալ Հարավային և Հյուսիսային Կովկասը, Միջին Ասիան ընդհուպ մինչև Ուրալյան շրջանները, և հավաստիացումն առ այն, որը Իրանը չի դառնա ԽՍՀՄ-ի դեմ ուղղված զենք ԱՄՆ-ի ձեռքում: Դեսպանությունում քննարկման ժամանակ նույնիսկ հնչեցին «կատարյալ հաղթանակ» բառերը և շնորհակալական խոսքեր իմ հասցեին՝ շատ բարձր գնահատելով կատարված աշխատանքը:

Դեսպանությունից ես գնացի հյուրանոց՝ հավատացած, որ խորհրդային ղեկավարության պատասխանը երկու-երեք օրից շուտ չի ստացվի: Ես նույնիսկ Հուսեյն Հուսեյնիին ու Մուսաֆա Չամրանին զգուշացրի, որ նման պատասխանատու որոշումները շատ արագ չեն լինում և ժամանակ են պահանջում: Նրանք համաձայնվեցին ինձ հետ: Սակայն մեծ եղավ իմ զարմանքը, երբ հաջորդ օրը կեսօրին ինձ հրավիրեցին դեսպանատուն: Երբ ես մտա մեր հանդիպումների համար հատկացված հատուկ սենյակը, ապա այնտեղ էր արդեն դեսպանության ղեկավարության շատ նեղ կազմը, որն իրազեկ էր Հուսեյն Հուսեյնիի հետ իմ բանակցությունների մասին, ինչը, հասկանալի է, շատ խիստ էր պահվում: Սկզբում ինձ շնորհավորեցին և տեղեկացրին, որ Մոսկվայի Կենտրոնական հեռուստատեսությունն արդեն հաղորդել է, որ այաթոլլահի խումայնիի հավաստիացրել է խորհրդային կողմին այն մասին, որ Իրանն այլևս զենք չի դառնա ԱՄՆ-ի ձեռքում՝ ուղղված խորհրդային Միության դեմ: Այնուհետև ինձ հայտնեցին, որ ստացվել է խորհրդային կառավարության պատասխանը այաթոլլահի խումայնիի վերջին առաջարկությունների վերաբերյալ և խնդրեցին, որ Հուսեյն Հուսեյնիի հետ հանդիպեմ հենց նույն օրը՝ խորհրդային կառավարության պատասխանը նրան փոխանցելու համար: Ապա դեսպանի անվտանգության հարցերի զոմվ խորհրդականն ինձ բանավոր ծանոթացրեց Մոսկվայից ստացված պաշտոնական պատասխանի բովանդակության հետ: Նա ինձ ասաց, որ ես պետք է Հուսեյն Հուսեյնիի միջոցով խումայնիին փոխանցեմ հետևյալը. «խորհրդային ղեկավարությունը գոհունակությամբ է ընդունում իմամ խումայնիի հավաստիացումն առ այն, որ նրա իշխանության գլուխ գալուց հետո կվերացվի Իրանում տեղակայված ռազմական բազան իր բոլոր սարքավորումներով հանդերձ, և Իրանը երբեք չի դառնա զենք՝ ուղղված իր հյուսիսային հարևանի՝ խորհրդային Միության դեմ: Իրանի ներքին գործերին ԱՄՆ-ի միջամտության դեպքում խորհրդային Միությունը պատրաստ է օգնելու Իրանին և զինված հակահարված կհասցնի ԱՄՆ-ին»: Ապա տիրեց ջար լռություն, հավանաբար նաև

այն պատճառով, որ ոչ ոք Մոսկվայից չէր սպասում նման կտրուկ պատասխան: Քանի որ ինձ էր հանձնարարվում այդ սարսփազդու պատասխանը փոխանցել Խոմենյինին, ուստի խնդրեցի խորհրդակա- նին կրկին կարդալ պատասխան տեքստը և ստուգել՝ արդյոք ճիշտ եմ հասկացել ամերիկացիներին զինված հակահարված հասցնելու հասկածը: Նա նույնությամբ կրկնեց ամբողջ տեքստը՝ ուսերեն շեշտելով հատկապես *bugem* *bum* կիսփնեք քառերը: Այնուհետև ես հարցրի, թե «խորհրդային ղեկավարություն» ասելով՝ ում նկատի ու- նեք: Նա ինձ պատասխանեց՝ «ամենարձարագույնը»: Ես դարձյալ պնդեցի, թե դրա տակ նա ում նկատի ունի: Նա ինձ տվեց հետևյալ պատասխանը՝ «կոմունիստական կուսակցության գլխավոր քարտու- դար և Գերագույն գլխավոր հրամանատար Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին»:

Անցել է այդ օրվանից մոտ 33 տարի, և մինչև հիմա չեմ կարողա- նում հասկանալ, թե ինչպես ասացի, որ հրաժարվում եմ գնալ Հուսեյն Հուսեյնիի մոտ և այդ բոլորը փոխանցել նրան: Բոլորն ապշած ինձ էին նայում, և ես նրանց չստիպեցի երկար սպասել, այլ ուղղակի ասացի հետևյալը՝ «Դա շատ պատասխանատու հայտարարություն է և կվա- յելի, որ նման հայտարարությունը Հուսեյն Հուսեյնիին և նրա միջոցով Խոմենյինին փոխանցի մեկ այլ՝ ավելի բարձրաստիճան պաշտոնա- կան անձ: Իսկ ես ընդամենը մի հասարակ արարագետ–արևելագետ եմ և կարող է նույնիսկ ինձ չհավատան նման պատասխան քերելու համար, որն իր մեջ պարունակում է ԱՄՆ–ին ուղղված հարված հասցնելու, այսինքն՝ ԱՄՆ–ի դեմ պատերազմ սկսելու կետ»: Թե դրանից հետո ինչ կատարվեց, դժվարանում եմ նկարագրել: Ներկա- ները, մեկը մյուսին հերթ չտալով, սկսեցին ինձ համոզել, որ իմ մտա- վախությունն անհիմն է, որ ես նույնիսկ չեմ պատկերացնում, թե ար- դեն ինչպիսի մեծ ու պատասխանատու գործ եմ կատարել, որ իրենք ունեն հավաստի տվյալներ այն մասին, որ Հուսեյն Հուսեյնին, իման Խոմենյինի և նրա այլ զինակիցներ մեծագույն հարգանքով ու վստա- հույությամբ են ինձ վերաբերվում և այլն, և այլն: Եվ կարծես թե ավժո- փելով բոլոր ամալածները՝ դեսպանի խորհրդականն ինձ ուղղակի

ասաց. «Ընկեր Հովհաննիսյան, հարգելի պրոֆեսոր, դուք լիազոր- ված եք այդ բոլորը հայտարարելու Գլխավոր քարտուղարի, այո՛, այո՛, Գլխավոր քարտուղարի անունից»: Ի վերջո ես տեղի տվեցի և հա- մաձայնվեցի գնալ Հուսեյն Հուսեյնիի մոտ՝ նրանց համար այդ քա- ցառիկ նշանակություն ունեցող լուրը փոխանցելու համար: Հուսեյն Հուսեյնին հանդիպման համար դրական պատասխան տվեց, և հենց նույն օրը մենք հանդիպեցինք, ինչպես միշտ, նրա տանը, որտեղ ներ- կա էին ևս երկու–երեք հոգի, որոնց ես առաջին անգամ էի տեսնում: Ես նրանց շատ սպասեցնել չտվեցի և դիմելով Հուսեյն Հուսեյնիին՝ ասացի. «Հարգելի պարոն Հուսեյնի, ես լիազորված եմ խորհրդային բարձրագույն ղեկավարության անունից Ձեզ փոխանցելու հետևյալ կարևոր հայտարարությունը», և այնուհետև քառ առ քառ շարադրեցի այն ամենը, ինչ վերևում արդեն նշել եմ՝ ավելացնելով, որ խորի- դային կողմը կցանկանար, որ իր այս հայտարարությունն անհապաղ փոխանցվեր իման Խոմենյինին:

Հուսեյն Հուսեյնին, որը կանված լսեց այն ամենը, ինչ ես նրան փոխանցեցի, մի պահ կարծես թե քարացավ և, շունչը պահած, անթաքթ ինձ էր նայում: Նա, իհարկե, հասկացավ, որ դա պատմա- կան պահ է: Այնուհետև նա կարծես թե սթափվեց, մոտեցավ ինձ, ամուր սեղմեց ձեռքս, խորին շնորհակալություն հայտնեց Խորհրդա- յին Միությանը և նշեց, որ հենց նույն օրը երեկոյան խորհրդային կա- ոավարության հայտարարությունը կլինի Խոմենյիի սեղանի վրա:

Մնացածն արդեն հայտնի է: 1979 թ. վերջերին Իրանի շահ Մու- համմադ Ռեզա Փահլավին հեռացավ Իրանից, և շահական վարչա- կարգը փլուզվեց: 1979թ. փետրվարի 1–ին այաթոլլահ Ռուհոլլահ Մուսավի Խոմենյին վերադարձավ Իրան, որտեղ նրան ցեմությամբ դիմավորեցին միլիոնավոր իրանցիներ: Իրանը հռչակվեց Իսլամա- կան Հանրապետություն, իսկ Խոմենյին դարձավ Իրանի հոգևոր առաջնորդ<sup>32</sup>: Նա կատարեց իր խոստումը՝ վերացրեց Իրանում

<sup>32</sup> Middle East, From Libya to Iran, Lonely Planet Publications, London, 2000, p. 225.



գտնվող ամերիկյան ռազմական բազան և Իրանը դադարեց ԱՄՆ-ի ձեռքում գեներ լինելուց՝ ուղղված Խորհրդային Միության դեմ: Իսկ Խորհրդային Միությունը մեծաքանակ զորքեր, տանկեր, ինքնաթիռներ և ռազմական այլ տեխնիկա էր կենտրոնացրել հայ-իրանական սահմանի երկայնքով՝ պատրաստ օգնություն ցույց տալու Իրանին՝ ամերիկյան ագրեսիայի դեպքում: Բարեբախտաբար դա տեղի չունեցավ:

Իսկ ես հպարտ եմ, որ ճակատագրին հաճո եղավ, որ ես գտնվեցի խորհրդային-իրանական հարաբերությունների կարգավորման ակտիվներում՝ խոմենիական դարաշրջանում, և իմ համեստ ներդրումն ունեցա այդ կարևոր գործում:

### III. Այաթոլլահ Խոմենի. «Իրանն այն պետությունը չէ, որ հայերի նոր ցեղասպանություն կազմակերպի...»

Լիբանանում գտնվելու օրերին մեզ հայտնի դարձավ, որ զգալի թվով իրանահայեր հեռացել են Իրանից և քնակություն հաստատել այլ երկրներում, այդ թվում և Լիբանանում, մասնավորապես Բեյրութում: Նրանց մեծ մասը լքել էր տունտուեղ, ունեցվածքը, աշխատանքը և համարյա դատարկաձեռն հայտնվել Լիբանանում և գտնվում էր շատ ծանր դրության մեջ: Իմանալով, որ Լիբանանում են գտնվում Հայաստանից մարդիկ, նրանց ներկայացուցիչները հանդիպում խնդրեցին ինձինից, և այդ հանդիպումը կայացավ, մանավանդ, որ ես նույնպես ցանկանում էի իմանալ Իրանից նրանց հեռանալու իրական պատճառները: Նրանց հետ ունեցած զրույցից ես հանգեցի հետևյալ եզրակացությանը: Քանի որ այաթոլլահ Խոմենիի ամբողջ շարժումն ընթանում էր իսլամի դրոշի ներքո և Իրանում աննախընթաց կերպով քարձրացել էին կրոնական զգացմունքները, ապա հայերի մոտ առաջացել էր լուրջ մտավախություն, որ իրենց գոյության համար կարող են վտանգավոր պայմաններ ստեղծվել խոմենիականների իշխանության գլուխ գալուց հետո: Իրանահայերի մի խավն էլ՝ մանր և միջին

գործարարները, առևտրականները, խանութպանները, ինչպես նաև ազատ մասնագիտության տեր մարդիկ, վախենում էին, որ նոր ուժերը, այսինքն՝ խոմենիականներն իրենց կարող էին մեղադրել շահական վարչակարգի հետ առնչություններ ունենալու և նրա նկատմամբ լույս գտնվելու մեջ, և վրեժխնդրի լինել նրանցից, ունեզրկել և պատժել նրանց: Ինձ հետ ունեցած հանդիպման ժամանակ նրանք, իրենց մտահոգությունը հայտնելով, հետաքրքրվեցին, թե արդյոք Հայաստանի կառավարությունը չի կարող որևէ քայլ ձեռնարկել իրանահայերին պաշտպանելու և նրանց անվտանգ վերադարձն Իրան ապահովելու համար: Այդ րոլորի մասին ես տեղյակ պահեցի Հայաստանի ղեկավարությանը, որն ինձ հանձնարարեց ամեն ինչ անել նրանց հարցի դրական լուծման համար: Ստեղծվեց շատ ծանր վիճակ, լիբանանյան հայերի խնդրի կողքին հայտնվեց նաև իրանահայերի խնդիրը: Դրությունն ավելի էր քարդանում նրանով, որ ի տարբերություն Լիբանանի, մենք Իրանում ազդեցության լծակներ չունեինք: Ուստի որոշեցի օգտագործել Հուսեյն Հուսեյնիի և Մուսաֆա Չամրանի ծուրակները և այդ ուղիով հարցը ներկայացնել Խոմենիի ուշադրությանը: Ես գիտակցում էի, որ նման հարցերը հնարավոր չէին լուծել Հուսեյն Հուսեյնիի կամ Մուսաֆա Չամրանի մակարդակով և միակը, որ կարող էր այդ հարցը մեզ համար դրականորեն լուծել, այաթոլլահ Խոմենին էր:

Ես Հուսեյնիից խնդրեցի նոր հանդիպում, և մեր զրույցի ժամանակ նրան ներկայացրի իրանահայերի ճակատագրի հարցը՝ հոմենիի իշխանության գլուխ գալու պարագայում: Ես միաժամանակ տվեցի հավելյալ պարզաբանումներ՝ մատնանշելով, որ այդ հայերը մեծմասամբ հասարակ մարդիկ են՝ քանվորներ, արհեստավորներ, առևտրականներ, բժիշկներ, իրավաբաններ և այլն, և ոչ թե պետական պաշտոնյաներ, շահական վարչակարգի ծառայողներ կամ քաղաքական-կուսակցական գործիչներ: Նրանք իրենց սեփական աշխատանքով են վաստակում իրենց ընտանիքների ապրուստի մի-



ջոցները: Մատնանշեցի նաև, որ նրանք լույս են եղել վարչակարգին, քայց դա հանցանք չէ, և Հայաստանի կառավարությունը մշտապես հորդորում է սփյուռքահայերին լինել ազնիվ և օրինապահ քաղաքացիներ, հարգել տվյալ երկրի օրենքները և ավանդույթները: Խոսքս վերջացրի՝ ավելացնելով, որ դուք էլ, ես էլ գիտենք, որ շահական վարչակարգը հոգևորքի մեջ է, և շուտով իշխանության գլուխ կգան խոմենյիականները, և կհաստատվի նոր վարչակարգ: Հայաստանում գտնում են, որ այդ դեպքում ևս իրանահայերը պետք է լինեն օրինապահ և նոր վարչակարգի հանդեպ լույս քաղաքացիներ: Իմ քացատությունն ունեցավ իր ազդեցությունը Հուսեյնի վրա, նա հուսադրեց ինձ և խոստացավ իրանահայերի մտահոգությունը փոխանցել խոմենյիին: Ես չէի կասկածում, որ նա անպայման տեղյակ կպահի խոմենյիին և չափավեցի: Երկու օր անց՝ 1979 թ. հունվարի վերջերին, Հուսեյն Հուսեյնիի առաջարկությամբ մենք կրկին հանդիպեցինք, որին ներկա էր նաև իմ կողմից հիշատակված Մուսթաֆա Չամրանը: Նա անմիջապես անդրադարձավ իրանահայության և նրա մտավախությունների հարցերին՝ ընդգծելով, որ խոմենյիին ստացել է Հուսեյն Հուսեյնի հաղորդումը և տեղյակ է իմ գրույցին նրա հետ՝ իրանահայությանը հուզող հարցերի վերաբերյալ: Մուսթաֆա Չամրանը նշեց, որ այդ հարցը քննարկել են խոմենյին և նրա մերձավոր խորհրդակցանները և լիազորել են իրեն՝ Մուսթաֆա Չամրանին, այդ մասին հաղորդելու հետևյալը: Խոմենյիի կարծիքով իրանահայերի մտավախությունը ոչ մի հիմք չունի. նա գտնում է, որ հայերն Իրանի լիիրավ համայնքներից մեկն են, ունեն իրենց արժանի տեղը Իրանում և օգտակար գործ են կատարում: Հայ համայնքի բոլոր իրավունքները, այդ թվում և կրոնական, կհարգվեն իր կողմից: Այնուհետև Մուսթաֆա Չամրանն ընդգծեց, որ թե՛ խոմենյին և թե՛ իրենք բոլորը շատ լավ ծանոթ են հայերի պատմությանը, այդ թվում և 1915 թ. ցեղասպանությանն Օսմանյան կայսրությունում: Այժմ ես բառացի մեջբերում եմ խոմենյիի խոսքերը, որ հաղորդեց Չամրանը. «Իրանն

այն պետությունը չէ, իսկ պարսիկներն էլ այն մոլորությունը չեն, որ հայերի նոր ցեղասպանություն կազմակերպեն: Հայերը մեր եղբայրներն են»: Իր կողմից Մուսթաֆա Չամրանն ավելացրեց, որ որ հայերին ինքը շատ լավ է ճանաչում. Թեհրանի համալսարանում սովորելիս իր լավագույն ընկերների շարքում շատ հայեր են եղել, հիմա էլ ես շատ լավ հայ բարեկեամբներ ունի, որոնց մտավոր կարողությունը, նվիրվածությունը և հավատարմությունը շատ բարձր է գնահատվում Իրանում: Ես այդ բոլորը գրի առա նրա ներկայությամբ և հարցրի, թե կարող եմ խոմենյիի կարծիքի մասին տեղյակ պահել Հայաստանի բնակչությանը և ղեկավարությանը, Չամրանը պատասխանեց. «Ոչ միայն կարող եմ, այլև դա այսօրվա խոմենյիի ցանկությունն է» (ընդգծումը մերն է-Ն. Հ.): Նա խնդրեց, որ հայերը հավատ չընծայեն չարական լուրերի, որոնց նպատակն է անվստահություն հրահրել հայերի մոտ Իրանի նոր ուժերի քաղաքականության և ղեկավարների հանդեպ: Նա հավաստիացրեց, որ հայերը ոչ մի հիմք չունեն լքելու Իրանը և հեռանալու, և որ նրանք կարող են ապահով վերադառնալ Իրան՝ իրենց տները, և շարունակել իրենց աշխատանքները: Չամրանը տեղեկացրեց, որ իշխանության գլուխ գալուց հետո խոմենյիի առաջին կարևոր օրենքներից մեկը լինելու է Իրանի ազգային-կրոնական փոքրամասնությունների իրավունքների ապահովման վերաբերյալ նոր օրենքի ընդունումը: Եվ, իրոք, նման օրենք ընդունվեց:

Հայաստանի հետ կապված մի հարց ես քննարկվեց Մուսթաֆա Չամրանի հետ, որին այնուհետև դրական լուծում տվեց այսօրվա խոմենյին: Դա Հայաստանին Իրանից գազ մատակարարելու հարցն էր, որը բարձրացրեց Հայաստանի ղեկավարությունը՝ հանձնարարելով ինձ քննարկել դա իրանական կողմի հետ: Այդ կապակցությամբ Կ. Ս. Դեմիրճյանը հետևյալ գրառումն է կատարել իր Հուշերում. «Ն. Հովհաննիսյանը մեր իսկ առաջարկով Մուսթաֆա Չամրանի հետ գրույցում շոշափել է գազի մատակարարման հարցը և ստացել դրական պատասխան 1979 թ. Հայաստան գազ մղելու մասին (4թթ

общий газопровод, конечно)»<sup>33</sup>: Ես մանրամասնություններին ծանոթ չեմ, թե Ռուսաստանից Հայաստանին զազ մատակարարելու րնագավառում ինչ դժվարություններ էին առաջացել, որն անհանգստացրել էր Հայաստանի ղեկավարությանը: Միայն գիտեմ, որ Իրանից Խորհրդային Միությանը մատակարարվող գազի զգալի մասն ընդհանուր զազախտողովակով մղվում էր Հայաստան: Եվ թեև այդ ժամանակ Խոմենյին ղեռնա իշխանության գլուխ չէր եկել, սակայն դա ոչ մի կասկած չէր հարուցում, հավանաբար Երևանում նպատակահարմար էին գտել կանխավ այդ հարցի մեջ հստակություն մտցնել, որպեսզի հետագայում քարդություններ չառաջանային: Ահա այդ հարցն էր, որ ես քարձրացրի Չամբանի հետ հանդիպման ժամանակ: Ես նրա ուշադրությունը հրավիրեցի այն հանգամանքի վրա, որ շահական վարչակարգի ժամանակ անխափան կերպով զազ է մատակարարվել Հայաստանի համար, և այժմ հայերի համար անհասկանալի կլիներ, եթե Իրանի նոր ղեկավարությունը դադարեցներ զազի մատակարարումը: Մուսթաֆա Չամբանը համոզված կերպով ընդգծեց, որ նման տազնալներն անհիմն են և հավաստիացրեց, որ Հայաստանի ժողովուրդը կարող է վստահ լինել, որ Իրանը չի դատապարտի նրան տառապելու 1979 թ. ցրտաշունչ ձմռանը: Նա կենկատակ-կենսուրջ ավելացրեց, որ ավելի շուտ իրենք, այսինքն՝ պարսիկները, կմրսեն, քան թե թույլ կտան, որ իրենց հայ քարենկամները մրսեն, և խոստացավ, որ ինքը այդ հարցը Փարիզում կներկայացնի Խոմենյիի քննարկմանը: Եվ, իրոք, ինչպես ինձ տեղյակ պահեց Հուսենյ Հուսենյին, նման քննարկում տեղի էր ունեցել և ընդունվել էր դրական որոշում: Ամբողջ 1979 թվականի ընթացքում զազի մղումը Իրանից Հայաստան եղել է անխափան:

Ահա այն ամենը, ինչ տասնամյակներ լոություն պահպանելուց հետո հնարավոր եղավ հակիրճ և որոշ նյութեր բաց տեքստով ներ-

<sup>33</sup> Թարգմ.՝ «Իհարկե, ընդհանուր զազամուղով»:

կայացնել հանրությանը: Մեզ մնում է հաստատել այն իրողությունը, որ 1979 թ. Իրանի Իսլամական Հանրապետության կազմավորման հենց սկզբից դրվեցին իրանա-հայկական բարեկամական հարաբերությունների նոր փուլի հիմքերը, որը վերածվեց միջպետական բարեկամական հարաբերությունների, երբ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունը 1991 թ. սեպտեմբերի 21-ին հռչակեց իր անկախությունը, որը Իրանը ճանաչեց 1991 թ. դեկտեմբերի 25-ին<sup>34</sup>: Իրանից հետո մինչև օրս այդ հարաբերությունները զարգանում են վերընթաց ուղիով:

<sup>34</sup> Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության Դիվանագիտական Բանբեր, Երևան, 1993, էջ 4:

## ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈԶՄՈՅԱՆ

Բանասիրական գիտությունների դրկբոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի  
առաջատար գիտաշխատող

## ԻՍԼԱՄԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄՆԵՐՈՒՄ

Իսլամի սուրբ գիրքը՝ Ղուրանը, ավանդականորեն համարվում է Աստծո խոսք՝ անձեռակերտ, երկնաոսք և անկրկնելի: Ահա այդ աննմանության (իջազ – ալ կուրան) գաղափարից էր գալիս Ղուրանի անթարգմանելիության դոկտրինը:

Ղուրանի հազարավոր այաններն ու 114 սուրանները կանոնարկվել են Մուհամադի մահից հետո՝ հալիֆ Օսմանի օրոք, և մինչև օրս ուղեկցում են աշխարհի մոտ մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն իսլամի աղետակներին և հետևորդներին:

Արաբական խալիֆաթի անձայրածիր կայսրությունն 8–րդ դարում հպատակ ժողովուրդների էթնիկական, դավանական, քաղաքակրթական այնպիսի մի քաղաքակրթություն էր ներկայացնում, որ անհնար էր ենթարկվել երկնային ատյաններից եկող խոսքի «անթարգմանելիության» պահանջին և չձանդախանալ և չձանաչել Ղուրանի իրական էությունը:

Պարսիկները, որ Արաբական խալիֆաթի կազմում իսլամն ընդունած ժողովուրդների մեջ առաջիններից էին, նույնպես կանգնեցին Ղուրանը ձյմարիտ հասկանալու և արուսասանելու անհրաժեշտության առջև: Պատմիչ Մուհամադ Նարշահին «Թարիխ-ե Բոխարա» հայտնի երկում մի հետաքրքիր տեղեկություն է թողել պարսիկ նորընծա մահմեդականների մասին: Պարզվում է, որ հիջրայի 94 թվին արաբ զորավար Քութեյբան ստիպված է եղել չորս անգամ դարձի քերել Բուխարայի քնակչությանը, որոնք ընդդիմանում էին իսլամին և

կրկին վերադառնում էին կրոնին: Ըստ Նարշահիի՝ վերջապես ընդունում են իսլամը, սակայն «...սկզբնական շրջանում Ղուրանն արտասանում էին պարսկերեն և չէին կարողանում սովորել արաբերեն լեզուն»: Մինչև օրս հայտնի է Սալման Ֆարսիի (հայ մատենագրության մեջ՝ Սալման պարսիկ) կողմից կատարված Ղուրանի «Ֆարսիայի» թարգմանության առաջին տողը ( բե նամ-է յազդան-է քախշանդե...):

Սակայն պարսիկները միայնակ չէին Ղուրանի ձգքիտ ըմբռնման որոնումներում:

7–րդ դարում հայերը նույնպես ընկան արաբական լծի տակ և չնայած այն քանին, որ չընդունեցին իսլամը, այնուհանդերձ, քախվեցին մի նոր, անծանոթ քաղաքակրթության հետ, որի հիմքը Ղուրանն էր: Քրիստոնեական ջատագովները փորձում էին մի կողմից ձանաչել, մյուս՝ հակաձանոել և հերքել այն: Այսպես թե այնպես, Ղուրանի թարգմանությունը դառնում էր անհրաժեշտություն:

Ի դեպ, հայ պատմիչ Սեբեոսը (7–րդ դ.) առաջիններից մեկն է համաշխարհային պատմագրության մեջ, որ իրական աղբյուրներից բխող գրավոր և լուրջ տեղեկություն է թողել մարգարեի և նրա կողմից ստեղծված նոր «ուխտի» մասին<sup>25</sup>: Անշուշտ, Արաբական խալիֆաթի հետ անմիջական շփումներից հետո հայ պատմիչները (Սեբեոս, Ղևոնդ, Թովմա ևն) և քրիստոնեական մտքի կրողները որոշակիորեն տեղյակ էին իսլամի կայացմանը, Ղուրանի տարրեր եզրերին, նույնիսկ առանձին սուրանների ստեղծման պատմություններին, Մուհամադի վարքին (սիրա) և այլ խնդիրներ: Այդ տեղյակությունից էր ելնում հայտնի արաբագետ, երջանկափիչատակ Արամ Տեր-Ղևոնդյանը, որ եզրահանգում էր, թե 7–8 դդ., ամենայն հավանականությամբ, արդեն կային Ղուրանի՝ մեզ չհասած թարգմանություններ:

Ղուրանի մեզ հայտնի առաջին թարգմանությունը կատարել է 17–րդ դարի կրոնական գործիչ, հմուտ թարգմանիչ, լեզուների փայլուն գիտակ Ստեփանոս Լեհացին: Այդ թարգմանության ձեռագիրը պահպանվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատեն-

<sup>25</sup> Պատմություն Սեբեոսի, աշխ. Գ. Վ Արգաթյանի, Երևան, 1979, էջ 135:



ևաղարանի ձեռագրային հավաքածուում՝ 934 և 3109 համարների տակ: Այն սկսվում է թարգմանչի հետևյալ ծանուցումով. «Այս է գիրք օրինաց հազարացուց կամ իսմայելացուց, որ կոչի Ղուրան: Այսինքն հաւարումն պատփրանաց»:

Հիշատակարանից հայտնի է դառնում, որ Լեհացու համար բնօրինակ է ծառայել ոչ թե արաբերենը, որին նա չէր տիրապետում, այլ լատիներենը: Հասկանալի է, որ Եվրոպան, ուր 8-րդ դարում մտուց էր գործել արաբ ռազմիկը, նույնպես անհրաժեշտություն է ունեցել Ղուրանի թարգմանության, որոնցից առաջինը՝ գուցե ամենաանհաջողը, իսպանացված անգլիացի Ռորերու Կետոնացու և նրա արաբախոս մի փոքր խմբի կողմից իրականացված թարգմանությունն է (12-րդ դ.):

Ձեռագրերի հետ ծանոթությունն ու դրանց ուսումնասիրությունը ցույց տվեցին, որ Լեհացին հենց Կետոնացու լատիներեն «ազատ» թարգմանությունից է օգտվել: Այլապես անհնար էր, որ նա, ում մասին կարելի է ասել, թե թարգմանության արվեստում այնքան հմուտ էր, որ նույնիսկ մեղանչում էր ճշգրտությամբ և ստուգությամբ, Ղուրանի թարգմանության մեջ լինե՞ր այնքան անկաշկանդ, որ փոփոխեր սուրբ գրքի կառույցը՝ սուրաների և այաների թանակը<sup>36</sup>:

Լեհացին տեսել է Ղուրանի լատիներեն թարգմանության անհամապատասխանությունն արաբերեն տեքստի հետ և իր թարգմանության վերջում ավելացրել է. «Ի վերջոյ Ղուրանին թանի մի ոտանաւորք եղեալ կան, որք ոչ են թարգմանեալ ի լատինացուց բարբառ, ոչ գիտեմ զպատճառն»<sup>37</sup>:

Երևանի Մատենադարանում պահպանված է Ղուրանի մեկ այլ թարգմանություն ևս՝ 2826 ձեռագիրը, որը XVIII դ. գործ է. «Գիրք որ կոչի Ղուրան»: Այն չունի հիշատակարան և թարգմանչին մենք չենք կարողացել անձնավորել: Թարգմանությունը չունի ցանկ: Սուրաներում առանձնացված չեն այաները, սակայն ամեն մի նոր սուրա սկսվում է վերնագրի հայերեն թարգմանությունից, այաների թվից և

նրանց ստեղծման վայրից (Մեքքա, Մեդինա): Ղուրանի այս, կարելի է ասել, ավելի հաջողակ թարգմանությունը, վերջանում է 104-րդ սուրայով՝ «Յաղագս փղաց, որ պարունակէ զհինգ տունս», համապատասխանում է Ղուրանի քնագրի 105-րդ սուրային: Դա կարելի է քացատրել նրանով, որ նշված ձեռագրում առաջին սուրան համարվել է մուցե և ըստ երևույթին հաշվի չի առնվել:

Այս ձեռագրում՝ Ղուրանի թարգմանությունից հետո, տեղադրված է մի շատ հետաքրքիր քնագիր, որ վերաբերում է հայերի իսլամական աշխարհի հետ ունեցած հարաբերություններին և կոչվում է «Պայմանագիր մահմեդի ընդ հայոց»: Դա մի հայտնի փաստաթուղթ է, որը որոշակի արտոնություններ էր տալիս հպատակ քրիստոնյաներին<sup>38</sup>:

Այսպիսին է Ղուրանի միջնադարյան մեզ հայտնի ձեռագիր թարգմանությունների պատկերը՝ կատարված 17-րդ և 18-րդ դարերում: Դրանց ավելի ուշ կրկնօրինակները հանգրվանել են աշխարհի տարբեր գրադարաններում:

Ճիշտ է, զանազան տեղեկություններ կան այլ հավանական թարգմանությունների մասին, սակայն գրական փաստը՝ թարգմանությունը, դեռևս չի հայտնաբերվել: Օրինակ՝ պահպանվել է մի հետաքրքիր տեղեկություն Թորգոմ պատրիարք Գուշակյանի հիշողություններից՝ Պարզվում է, որ Մ. Թաղիայանը նպատակ է ունեցել զբարդել Ղուրանի թարգմանությամբ. «Սա (Թաղիայանը – Ա. Կ.) վերջին անգամ Կալկաթայն դեպի Պարսկաստան մեկնած միջոցին, շոգենա մտնելն առաջ, իրեն՝ Պ. Տիմիրիոսյանին, երկու ռուպի տալով՝ դրկեր է մտակալ գրավաճառանոց մը, պատուիրելով իրեն համար գնել Գուրանի անգղիերեն թարգմանութիւն մը, ըսելով. – Շոգենաի երկամենայ կեանքիս մեջ կարելի է, որ զայն թարգմանեմ հայերենի: Այսպես որ, հաւանական է, որ Մ. Թաղիադեանց կատարած ըլլայ իսլամական ս. գրքին հայերեն թարգմանութիւնը, անշուշտ՝ գրաբար»<sup>39</sup>:

<sup>36</sup> Այդ մասին մանրամասն՝ Ա. Կ. Կողմյան, Ղուրանը հայոց մեջ, Երևան, 2004:

<sup>37</sup> Չեռ. 934, էջ 285 ա:

<sup>38</sup> Տես Հ. Ամասյան, Մանր Յերկեր, Լոս Անջելես, 1987, էջ 627-632:

<sup>39</sup> Թորգոմ պատրիարք Գուշակյան, Հնդկաստան, Տպատրութիւններ եւ տեղեկութիւններ (պատկերազարդ), Նրուսաղէմ, 1941, էջ 164:

Այսպիսով, միջնադարից սկսած, հայոց մեջ ձևավորվում էր Ղուրանի թարգմանության ավանդույթը, որն ինքնանպատակ չէր. ճանաչողական, գաղափարական ու քաղաքական նպատակներ էր հետապնդում: Եվ պատահական չէ, որ այսօր հայերն ունեն սուրբ գրքի հինգ լիակատար թարգմանություն՝ կատարված արաբերենից, ֆրանսերենից, պարսկերենից:

Դրանց հրատարակման վայրերն ու թվականներն ի ցույց են դնում խորհրդային շրջանի անտարբեր վերաբերմունքը Ղուրանի նկատմամբ: Արրահամ Ամիրխանյանցը հրատարակել է Վառնայում (1909 թ.), Լևոն Լարենցը՝ Կ.Պոլսում (1911 թ.), Հակոբ Գուրպեթյանը՝ կրկին՝ Վառնայում (1912 թ.), Նուպար Քիլիսյանը՝ Տորոնտոյում (2004 թ.), և Էդվարդ Հախվերդյանը՝ Երևանում (2006 թ.):

Այդ ընթացքում հրատարակվել են նաև հատվածային թարգմանություններ (Գրիգոր Գույումձյան, Վահագն Դավթյան), սակայն այս ամենով հանդերձ, մինչև օրս չունենք իսլամական քաղաքակրթության անկյունաքար հանդիսացող կրթողի գիտական թարգմանություն՝ հազեցած հայտնի գիտակաների և էկզեգետների մեկնաբանություններով:

Ղուրանի կենտրոն-թանգարանը (Ղոմ) ներկայացնում է մոտ 140 լեզուներով իրականացված թարգմանություններ, սակայն մասնագետները պնդում են, որ չկա մեկ տարբերակ, որ համարժեք լինի «Ղուրանին» այդ հավերժ հրաշքին»:

Իհարկե, Ղուրանի թարգմանությունները կարող են լինել հաջող և անհաջող, համարժեք և քարձարովեստ, քայց երբեք՝ կատարյալ: Այն բոլոր սուրբ գրքերի պես կատարելություն է, հետևաբար՝ անկրկնելի:

**ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ**

*Պալմանկան գիտությունների բնկնածու,*

*ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի ավագ գիտաշխատող*

**ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈՒՆՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ՄՏՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ**

Հայերն ու իրանական ժողովուրդները, լինելով հարևաններ, դարեր շարունակ ունեցել են սերտ քաղաքական, տնտեսական ու մշակութային փոխհարաբերություններ, որոնց հետքերը ակնառու են պատմա-մշակութային ամենատարբեր ոլորտներում. լեզու, գրականություն, պատմություն, ազգագրություն, բանահյուսություն և այլն:

Հայ-իրանական փոխհարաբերությունների պատմության փաստերն ու իրողությունները արձանագրված են նաև պարսկերեն վավերագրերում, որոնց մի քաղամաքանակ հավաքածու՝ քաղկացած 1500 նմուշից, պահվում է Երևանի Մատենադարանում: Հավաքածուն ընդգրկում է կալվածագրեր, զեկուցագրեր և շուրջ 300 շահական հրովարտակներ:

Շահական հրովարտակները կարևոր դեր էին խաղում իրանահպատակ հայության ու հայ եկեղեցու իրավունքների պաշտպանության հարցում:

Մահմեդական պետությանը հպատակ քրիստոնյա համայնքների իրավա-քաղաքական վիճակի հարցերը հստակ ամրագրված են Մուհամմադ մարգարեին վերագրվող արտոնագրերում, որոնք դարեր շարունակ պահպանվել ու վերահաստատվել են թե՛ Իրանին և թե՛ Թուրքիային հպատակ հայերի ջանքերով:

Նրանցում որոշակիորեն շնչտվում է, որ գիմմի քրիստոնյաները, մասնավորապես նաև հայերը, որոնք բնակվում են մահմեդական երկրում և վճարում են ջիզիա՝ շնչահարկ կամ գլխահարկ, գտնվում

են մահմեդականների պաշտպանության ներքո, իրավունք ունեն հետևելու իրենց հավատի օրենքներին և կատարելու եկեղեցական արարողությունները: Մահմեդականները իրավունք չունեն զիմմիտե-րին ձևելու, հավելյալ հարկազանձումներ կատարելու, նրանց կա-ցարաններն ու եկեղեցիները ոչնչացնելու:

Մաշտոցյան Մատենադարանում պահպանվել են այս արտո-նագրերի մի քանի արարեր են ու նրանց պարսկերեն թարգմանա-կան տարբերակներ: Ընդ որում, պարսկերեն տարբերակում նշվում է, որ այն թարգմանվել է Իմամ Ալիի անունից զիմմի քրիստոնյա-ների՝ նրանց հավատքն ու անկախությունը հարգելու վերաբերյալ տրված փաստաթղթի<sup>40</sup>: 1694, 1766/67 թվականներին ու XIX դա-րում ընդօրինակված այս արտոնագրերում<sup>41</sup> խալիֆ Ալիի անվան հիշատակությամբ վավերագիրը կազմողները փորձել են այն հար-մարեցնել տեղական պայմաններին ու լրացուցիչ ուժ հաղորդել նրա ազդեցությանը Սեֆյան շիական պետության տարածքում: Թերևս նույն նպատակով փաստաթղթի լուսանցքում առկա կնիքով ու հա-վաստագրով հաստատվում է պատճենի համապատասխանությունը քնագրին և նշվում, որ այն ընդօրինակվել է Սեֆյանների տոհմի նա-խահայր Նեֆիի գրությունից:

Պարսկերեն հրովարտակները թեև հիմնականում արտացոլում են շահական հայեցակետը հայությանը վերաբերող տարբեր հարցերի նկատմամբ՝ անտեսելով տեղական իշխանությունների և պաշտոնյա-ների կամայականություններն ու չարաշահումները, այնուամենայնիվ դրանք պարունակում են հայ-իրանական փոխհարաբերությունների պատմությանը վերաբերող առատ փաստագրական նյութ:

Չնայած վերը նշված փաստաթղթերի գոյությանը՝ այնուամե-նայնիվ, իրանահպատակ հայերի վերոհիշյալ իրավունքները հա-

ձախ ոտնահարվում էին մահմեդական պաշտոնյաների կողմից, այնպես որ, հարկ էր լինում դրանք շահական հրովարտակներով պաշտպանել: Այսպես՝ Մատենադարանի մի քանի վավերագրեր փաստում են, որ տեղական պաշտոնյաները հաճախ հայերից հա-վելյալ գումարներ էին զանձում հայ եկեղեցական օրենքներին հե-տևելու, հավատի արարողությունները կատարելու թույլտվության համար, ուստի Սեֆյան շահերի օրոք մի քանի անգամ հրամա-նագրեր են հրապարակվում արգելելու տեղական պաշտոնյաների նման անօրինականությունները<sup>42</sup>: Հայոց վանքերի վերանորոգումն ու նորերի կառուցումը Իրանին հպատակ տարածքներում ևս կատարվում էր շահի թույլտվությամբ: Այս են վկայում այն քազմաթիվ հրովարտակները, որ մեզ են հասել Սեֆյան ժամանակաշրջանից ինչպես առանձին վանքերի վերանորոգման, այնպես էլ հայկական զանազան տարածքներում ընդհանրապես եկեղեցաշինությունը թույլատրելու կապակցությամբ<sup>43</sup>: Այս շարքից հետաքրքրության է արժանի Շահ Աբաս Բ-ի 1661 թ. հրովարտակը, որով արգելվում է մահմեդական հոգևորականներին ու պաշտոնյաներին նեղել հայերին նրանց եկեղեցիների քարձր ու ընդարձակ լինելու պատճառով: Հրամանագրի տեքստում նշվում է Մակվի Ղարաբլիխա (Ս. Թաղեի) վանքի մասին, որը մեզ հուշում է, որ այն ձեռք է բերվել հատկապես այդ վանքի խնդիրները կարգավորելու նպատակով<sup>44</sup>:

Պահպանված Ֆաթվաթիթից երևում է, որ տարածված երևույթ է եղել այն, որ երբ հայերից որևէ մեկը առևտրական կամ այլ նպատակ-ներով մի տեղից մի այլ տեղ էր գնում, այնտեղ նրանից պահանջում էին կրկին անգամ գլխահարկ վճարել, հակառակ դեպքում ստիպում

<sup>40</sup> Մատենադարան, արարատու ֆոնդ, ճեռ. 357:

<sup>41</sup> Այս վավերագրերի մասին ավելի մանրամասն տե՛ս Բ. Կոտորիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերն ու վավերագրերի ժողովածուները, Մատենադարանի հին ձեռագրերի իրանագիտական արձեք, Երևան, 2011, էջ 75-78:

<sup>42</sup> Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ II, Երևան, 1959, վավ. 25; Բ. Կոտորիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, Երևան, 2005, վավ. 28, 31, 34:

<sup>43</sup> Հ. Փափազյան, Մատենադարանի, պրակ II, վավ. 30; Բ. Կոտորիկյան, Մատենադարանի, պրակ III, վավ. 15, 16, 19, 20, 32, 33:

<sup>44</sup> Բ. Կոտորիկյան, Մատենադարանի, պրակ III, վավ. 11:



էին հավատափոխ լինել<sup>45</sup>: Ուստի պատահական չէ, որ իրանական տարածքներում վաճառականների ազատ երթևեկությունն ապահովելու նպատակով ձեռք էին բերվել հրովարտականեր, որոնցով արգելվում էր նրանցից տարբեր շրջաններում ջիզյա պահանջելը և բռնի մահմեդականացնելը:

Շիա մահմեդականների մոտ Սեֆյան ժամանակաշրջանում լայն կիրառություն ուներ, այսպես կոչված, Իմամ Ջաֆարի օրենքը, ըստ որի՝ գիմմի ույայթների մահմեդականացած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքն ամբողջովին գրավելու և նրանց գրկելու ժառանգությունից<sup>46</sup>։ Հիշյալ օրենքի կիրառությունը մեծ նեղություն էր պատճառում իրանահպատակ հայությանը՝ թույլ տալով անզամ ազգական չհանդիսացող մահմեդականացած անձանց հավակնություններ ունենալ մահացած քրիստոնյայի ունեցվածքի նկատմամբ<sup>47</sup> կամ էլ օտարման ոչ ենթակա վակֆային կալվածքները փորձել հափշտակել Մայր Աթոռ Ս. Էջմիածնից<sup>48</sup>: Սեֆյան պետության անկման շրջանից սկսած՝ հայոց կաթողիկոսներ Աստվածատուր Ա Համադակցուն և Աբրահամ Բ խոշարեցուն հաջողվում է Իրանի գահակալներից այս հարցի վերաբերյալ ձեռք բերել հայ քրիստոնյաների շահերը պաշտպանող հրովարտականեր: 1731 թ. հրովարտակը<sup>49</sup>՝ հրահանգում է Չուխուր Սաադի կառավարչին արգելել նոր մահմեդականացած հայերին ժառանգության վճճ սկսել իրենց հարազատների հետ: Փաստորեն, այն ընդհանրապես արգելում է Իմամ Ջաֆարի օրենքի կիրառությունը հայերի ժառանգական խնդիրներում: Նույն բովանդակությամբ հրովարտականեր են ձեռք բերում Նադիր շահից

նաև Աբրահամ Կրետացի և Ղազար Ջահեկցի կաթողիկոսները<sup>50</sup>: Կարևոր համարելով նշված խնդրի լուծումը հայ ժողովրդի համար՝ Ղազար կաթողիկոսը նույն բովանդակությամբ հրովարտակ է ձեռք բերում նաև Իբրահիմ Միրզայից 1748 թ.<sup>51</sup>:

Հետագայում Աբաս-Միրզայի 1825 թ. մայիսի հրամանագրով<sup>52</sup> մահմեդականացած հայի ժառանգական իրավունքները հավասարվում էին մյուս ազգականների իրավունքներին և համապատասխանեցվում մահմեդականների շրջանում գործող օրենքներին, այսինքն՝ օրինակ, եթե մահանում էր նոր մահմեդականացած տղայի հայրը՝ թողնելով, բացի նրանից, նաև աղջիկ ժառանգներ, ապա նրան հասնելու էր ժառանգության 2/3-ը, իսկ մնացած 1/3-ը քաժանվում էր աղջիկ ժառանգների միջև:

Շահ Աբաս Ա-ի իշխանության ժամանակաշրջանից Եվրոպայի հետ քաղաքական ու առևտրա-տնտեսական կապերի ընդլայնմամբ Իրանում և նրան ենթակա Արևելյան Հայաստանում ակտիվանում է եվրոպացի կաթոլիկ միսիոներների քարոզչությունը, որը որոշակի վտանգ էր ներկայացնում ազգի պատակման տեսանկյունից: Հայոց կաթողիկոսների ու Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդների ջանքերով XVII-XVIII դարերում ձեռք են բերվում հայերի շրջանում նրանց գործունեությունը սահմանափակող շահական հրովարտականեր, որոնցից մի քանիսը պահպանվել են Մատենադարանի կաթողիկոսական դիվանում<sup>53</sup>:

Ինչպես վկայում են պահպանված վավերագրերը, իրանական պետությանը հպատակ տարածքներում հայ բարձրաստիճանի հոգևորականների, կաթողիկոսների, որոշ վանքերի վանահայրերի պաշտոն-

<sup>45</sup> Զ. Կոստիկյան, Մատենադարանի, պրակ III, վավ. 21, 35:

<sup>46</sup> Հ. Փավստյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», երևան 1956, N 3, էջ 87-88:

<sup>47</sup> Զ. Կոստիկյան, Մատենադարանի, պրակ III, վավ. 18:

<sup>48</sup> Նույն տեղում, վավերագիր 51:

<sup>49</sup> Նույն տեղում, վավերագիր 89:

<sup>50</sup> Այս մասին ավելի մամբաման տե՛ս Զ. Կոստիկյան, Նադիր շահի հրովարտակաները Կարաբաղի հայ մեթոքներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVI, երևան, 2007, էջ 257-260:

<sup>51</sup> Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտականեր, պրակ IV, երևան, 2008, վավ. 28:

<sup>52</sup> ՄԻ, Կաթողիկոսական դիվան, քր. 4, վավ. 144:

<sup>53</sup> Զ. Կոստիկյան, Մատենադարանի, պրակ III, 71, 83; պրակ IV, վավ. 18, 23:

ները սովորաբար հաստատվում էին շահական հրովարտակներով: Ընդ որում, հաճախ հրովարտակներ էին ձեռք բերում նաև հակաթոռ կաթողիկոսները և օգտագործում դրանք իրենց հավակնություններին համապատասխան: Շահական հրովարտակներով ապահովագրվում էին հայ եկեղեցու նվիրակների ազատ երթևեկությունն իրանական տարածքներում, Էջմիածնի մեռնո եփելու քացատիկ իրավունքը<sup>54</sup>:

Շահական հրովարտակները մեծ կարևորություն ունեին Էջմիածնի ու հայոց վանքերի տնտեսական ապահովվածության համար: Դրանք օգտագործվում էին Մայր Աթոռի ու մյուս վանքերի կալվածքների ամրագրման և ուսնձգություններից պաշտպանության նպատակով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար կարևոր նշանակություն ուներ նրա հարկերից ազատված լինելու՝ մուաֆուջյան իրավունքի պաշտպանությունը: Հարկերից ազատվածությունը եղել է միայն մասնակի: Մասնավորապես առանձին հրամանագրերով 1647 թ. Էջմիածինն ազատվում է վանքի այգիների ու ջրաղացների մալոցիաթ, մանր եղջերավոր անասուններից գանձվող չորանբեկի հարկերից, 1659 թ.՝ վանքի մեկ սարք գուբանի, իսկ 1712 թ. երկու սարք գուբանի մալին ու 500 ոչխարի չորանբեկի հարկերից<sup>55</sup>: XVIII դարում շուրջ 12 հրամանագիր է հրապարակվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարկերից ազատվածության հարցերի առկառությամբ<sup>56</sup>:

Հայ ազնվականությունն ու հասարակ ժողովուրդը, հիմնականում գերադասելով իրանական տիրապետությունը թուրքականից, աջակցություն էին ցուցաբերում Իրանի տիրակալներ շահ Աբբաս Ա-ին ու Նադիրին նրանց կողմից Հարավային Կովկասում Օսմանյան Թուրքիայի դեմ իրականացվող ռազմական միջոցառումներում: Այս հանգամանքն արտացոլվել է հայ մելիքներին տրված հրովարտակներում, որոնցում շեշտվում է, որ Իրանին ցուցաբերած արժեքավոր ծառայությունների դիմաց հաստատվում են նրանց մելիքա-

կան իրավունքները և կալվածքները: Այս շարքում են Շահ Աբաս Ա-ի կողմից Քաջաթաղի Մելիք Հայկազին<sup>57</sup>, Գեղարքունիքի Մելիք Շահնազարի տոհմից Մելիք Յավրիին ու Քյամալին<sup>58</sup>, Նադիր շահի Գեղարքունիքի նույն իշխանական տնից սերած Մելիք Միանսարին, Ղարաթաղի Դովշանլու գյուղի Մելիք Դավթին ու Մելիք Եգանին տրված հրամանագրերը<sup>59</sup>:

XIX դարի սկզբին Արևելյան Հայաստանի հայ քնակչությունը և նրա հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները, հույսեր կապելով սկզբում Ռուսաստանի հովանու ներքո հայկական պետականությունը վերականգնելու հետ, այնուհետև պարզապես գերադասելով քրիստոնեական պետության տիրապետությունը մահմեդականից, որն անտանելի էր դառնում հատկապես խանական իշխանության կրոնական անհանդուրժողականության ու խտրականության հաճախացած արտահայտումների հետևանքով, հիմնականում աջակցում էին ռուսների առաջխաղացմանը:

Այս շրջանում Իրանի շահական իշխանությունը հայերի նկատմամբ վարում էր հիմնականում սիրաշահող քաղաքականություն: Իրանական իշխանությունները ջանքեր էին գործադրում հայերի վտահությունը վերականգնելու ու ռուսներին չաջակցելու համար:

Յաթիալի շահ Ղաջարը և Ատրպատականի փոխարքա թագածառանգ Աբաս-Միրզան, քնակառարաբ ելնելով Իրանի քաղաքական շահերից, ի նշան հայերի նկատմանը իրենց հատուկ բարեհաճության, վերահաստատում են հայ եկեղեցու իրավունքները ու տեղի հայ ազնվականներին հատուկ արտոնություններ շնորհում, նաև վերականգնում իրանամետ կողմնորոշում ունեցող ազնվականության ժառանգներին իրենց տիրույթներում, մասնավորապես Սյունիքի Օրբելյանների ու Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների ազնվա-

<sup>54</sup> Հ. Փափազյան, Մատենադարանի, պրակ II, վավ. 27:

<sup>55</sup> Զ. Կոտայկյան, Մատենադարանի, պրակ III, վավ. 8, 74:

<sup>56</sup> Զ. Կոտայկյան, Մատենադարանի, պրակ IV, վավ. 5, 6, 9, 11, 35, 38, 39, 40, 41, 45, 47, 49:

<sup>57</sup> Հ. Փափազյան, Մատենադարանի, պրակ II, վավ. 15:

<sup>58</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Զ. Կոտայկյան, Նադիր շահի հրովարտակները Ղարաթաղի հայ մելիքներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVI, երևան, 2007, էջ 257-260:

<sup>59</sup> Զ. Կոտայկյան, Մատենադարանի, պրակ IV, վավ. 1, 2:



կանական տոհմերը՝ կալվածքներ շնորհելով այդ տոհմերից սերած և Իրանում գտնվող իրենց հարմար թեկնածուներին<sup>60</sup>:

Այսպիսով՝ շահական հրովարտակաները փաստում են այն մասին, որ ելնելով Իրանի քաղաքական ու տնտեսական շահերից՝ իրանական իշխանությունները իրանահպատակ հայության նկատմամբ վարում էին ընդհանուր առմամբ քավականին հանդուրժող ու մեղմ քաղաքականություն, որն, այնուամենայնիվ, երբեմն մնում էր թրջի վրա և չէր գործադրվում տեղական պաշտոնյաների կամայականությունների ու անօրինականությունների հետևանքով:

### ԳՈՇԱՐ ԻՍՎԱՆ ԴԱՐՅԱՆ

*Պարթևական գիտությունների քնննաժույղ, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
Մերձավոր Արևելքի միջազգային հարաբերությունների  
նստանմանախորհրդանիստ քառնի ավագ գիտաշխատող*

## ՀԱՅԱՍՏԱՆ–ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈՒՈՐՏՈՒՄ

Հայ–իրանական հարաբերություններն ունեն դարերի պատմություն, սակայն սույն աշխատանքով մենք կանդրադառնանք հայ–իրանական հարաբերություններին Հայաստանի անկախացումից հետո՝ ներկայացնելով էներգետիկ ոլորտում համագործակցությունը, ինչը մեր կարծիքով համագործակցության շարժիչ ուժն է:

ՀՀ և ԻԻՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1992 թ. և հենց այդ ժամանակ էլ նախագծվեց հետագա գործունեության ծրագիրը, երբ փետրվարի 9–ին ՀՀ արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը և ԻԻՀ արտաքին գործերի նախարար Ալի Աքբար Վելայաթին ստորագրեցին հռչակագիր՝ Հայաստանի և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ: Նույն օրը ստորագրվեց նաև հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը<sup>61</sup>, որի մեջ շոշափվում էին նաև էներգետիկայի քնագավառում համագործակցություն սկսելու հարցեր: Դեռևս 1992 թ. ԻԻՀ նախարարության և ՀՀ վառելիքաէներգետիկայի նախարարության միջև ստորագրվեց համաձայնագիր երկու երկրների միջև էներգետիկայի քնագավառում համագործակցություն ծավալելու մասին: Իսկ 1995 թ. ստորագրվեցին համաձայնագրեր Իրան–Հայաստան գազամուղի, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի և Արաքս գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայանի կառուցման վերաբերյալ: Ի

<sup>60</sup> Զ. Կոստիկյան, Հայ–իրանական հարաբերությունները ԺՐՊ դարի առաջին երեսնամյակում, Լևոն Նաչիկյան 90, Նյուքեթր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսուս ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի, Երևան, 2010, էջ 186:

<sup>61</sup> ՀՀ ԱԳՆ Գլխավանագիտական քանրեր, Հայաստան–Իրան, Վենետիկ, 1993 թ.:

ղնա, Իրան–Հայաստան գազատարի կառուցման համաձայնագրով նախատեսվում էր գազատարը շարունակել դեպի Վրաստան՝ այն հաշվարկով, որ հետագայում այն հասցվի Եվրոպա:

2003 թ. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության էներգետիկայի նախարարության միջև առաջին անգամ ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր էներգետիկայի քննազավառում համագործակցության վերաբերյալ: Հուշագրում ցանկություն էր հայտնվում այդ ոլորտում առավել խորացնելու երկկողմ հարաբերությունները: Սակայն էներգետիկայի ոլորտում ձեռքբերված առաջին հաջողությունը կարելի է թվագրել 1997 թվականին, երբ շահագործման հանձնվեց քարձրավուտ էլեկտրահաղորդման առաջին գծը:

Երկար բանակցություններից հետո, Ի վերջո, 2004 թ. մայիսի 13–ին ստորագրվեց Իրան–Հայաստան գազատարի կառուցման վերջնական պայմանագիրը: Բանակցությունների առարկա էր դարձել ինչպես գազի սակագինը, այնպես էլ որակը և մատակարարման ծավալը: Հարկ է նշել, որ այն փոխշահավետ պայմանագիր է, որն առավել ճիշտ կլինի կոչել «Գազ–էլեկտրաէներգիայի դիմաց ծրագիր»:

Հայաստանը և որի որդային Միությունից ժառանգություն է ստացել էներգետիկ լուրջ համակարգ՝ հէկեր, երևանի և Հրազդանի ջէկերը, ատոմակայանը և այլն: Հայաստանում արտադրվող էներգիան երկու անգամ գերազանցում է պահանջարկը. Իրանն ունի քնական պաշարներ, սակայն որոշակի առումով չի հասցնում այն վերածել էլեկտրաէներգիայի: Ըստ պայմանավորվածության՝ սկզբնական շրջանում Իրանը Հայաստանին կմատակարարի տարեկան 1,1 մլրդ մ<sup>3</sup> քնական գազ, իսկ 2019թ–ից սկսած՝ 2,3 մլրդ մլրդ մ<sup>3</sup>: Ընդհանուր հաշվարկով 20 տարվա ընթացքում Իրանը Հայաստանին կմատակարարի 36 մլրդ մ<sup>3</sup> քնական գազ, որի դիմաց կստանա էլեկտրաէներգիա: 1 մ<sup>3</sup> գազի դիմաց ՀՀ–ն ԻԻՀ–ին պետք է տրամադրի 3 կվտ·ժ էներգիա<sup>62</sup>:

Գազատարի կառուցման ընթացքում որոշակի ղեկարություններ առաջացան, որոնք, ըստ համաձայն ԻԻՀ–ում ՀՀ այդ ժամանակվա արտակարգ և լիազոր դեսպան Գ. Ղարիբջանյանի, տնտեսական քնույթի խնդիրներ էին. «Գազատարի անուշխամբ երկու կողմերի միջև քաղաքական խնդիրներ չկան: Խնդիրը զուտ տնտեսական է և լուծելի: Իրանի և Հայաստանի քաղաքական ղեկավարները գազատարի շինարարությունը սկսելու առումով որակյալ որոշում են կայացրել: Պիտի նշել, որ Իրան–Հայաստան գազատարի կառուցումը ոչ միայն տնտեսական առումով է կարևոր, այլև հեռանկարային քաղաքական առումով»<sup>63</sup>:

2007 թ. մարտի 19–ին տեղի է ունեցել ՀՀ և ԻԻՀ նախագահների մասնակցությամբ գազատարի պաշտոնական քացման արարողությունը: 2008 թ. նոյեմբերի վերջին ավարտվել են Իրան–Հայաստան գազատարի երկրորդ հատվածի շինարարական աշխատանքները, և գազատարը շահագործման է հանձնվել: 2009 թ–ից սկսվեցին գազամատակարարման աշխատանքները: Գազամուղի շինարարությունը որոշ հաշվարկներով արժեցել է մոտ 220 մլն դոլար, որից 90–100 մլն դոլարը ծախսվել է Հայաստանի տարածքում, գրեթե 120 միլիոն՝ Իրանի: Գազատարի տրամագիծը 700 մմ է<sup>64</sup>:

Գազի դիմաց Հայաստանը տրամադրում է հոսանք, որը տեղափոխվում է Իրան երկու երկրների միջև կառուցված բարձրավուտ էլեկտրահաղորդման երկու գծերի միջոցով: Այսօր արդեն աշխատանքներ են տարվում քարձրավուտ էլեկտրահաղորդման 3–րդ գծի կառուցման ուղղությամբ, որով էսպես առաջընթաց կգրանցվի երկու երկրների միջև էներգետիկ համագործակցության քննազավառում:

Նշենք, որ այսօր երկու գծերի թողունակությունը միասին կազմում է 300–350 Մվտ: 3–րդ գիծը, որ պատրաստվում է, երկղթա է և ձգվելու է Իրանից մինչև Հրազդան ջէկ: 3–րդ գծի կառուցմամբ հոսանքի

<sup>62</sup> Армения построит газопровод до Ирана, ([http://www.iran.ru/rus/news\\_iran.php?act=news\\_by\\_id&news\\_id=28553](http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=28553)), Газопровод Иран–Армения будет строить «Армросгазпром», <http://www.regnum.ru/news/416094.html>

<sup>63</sup> Այս տարի Իրան–Հայաստան գազատարի շինարարությունը սկսվելու է, «Արար», քիվ 16–17(99–100), մայիս–հունիս, 2001, էջ 28:

<sup>64</sup> Глава компании «АРМОСГАЗПРОМ»: не готовить к росту цен на газ – «недопустимое расточительство», <http://www.armrusgasprom.am/ru/infocenter/publications/102/>



ընդհանուր թողունակությունը կհասցվի մինչև 1100–1200 ՄՎտ–ի: Բնականաբար դրան համարժեք գազ կմտնի Հայաստան<sup>65</sup>: Որոշ տվյալներով՝ այն կարժենա 110 միլիոն դոլար և կունենա 412 կմ երկարություն, որից 312 կմ–ը գտնվելու է Հայաստանի տարածքում:

2011–12 թթ. Իրանից տարեկան 500–600 մլն մ<sup>3</sup> գազ է մտնում Հայաստան և արտահանվում է 1,5–1,8 մլրդ կՎտ-ժ էլեկտրաէներգիա: Ի դեպ, Նորդուգում տեղակայված է գազաչափիչ հանգույց, որը անտաղար ստուգում է իրականացնում գազի քանակի և որակի վերաբերյալ:

Հայաստան–Իրան էներգետիկ համագործակցության մեկ այլ ծրագիր է Հայաստանի տարածքում համատեղ նավթավերամշակման գործարանի կառուցումը: Այն եռակողմ ձևաչաձ ունի՝ Հայաստան–Ռուսաստան–Իրան: Սակայն այս պայմանագիրը առայժմ տարրեր պատճառներով ստեղծված է:

Որոշվեց մեկ այլ ծրագիր իրականացնել՝ պատրաստի նավթամթերքներ տեղափոխել Հայաստան՝ Թավրիզ–Արարատ ձգվող 8 մատնաչափ տրամագծով խողովակաշարով, որը բավարարելու է Հայաստանի պահանջարկը: Քննարկումներն այս ուղղությամբ շարունակվում են:

Իրանական կողմը մեծ ցանկություն ունի ներգրավվելու Հայաստանում հողմակայանների կառուցման գործում, ինչի համար 2,5 մլն դոլար դրամաշնորհ է տրամադրել, որպեսզի փորձնական հողմակայան կառուցեն Պուշկինի լեռանցքում: Հաջողության դեպքում իրանական կողմը պատրաստ է մեծացնելու ներդրումների քանակը<sup>66</sup>:

Պետև 1992 թ. փետրվարի 9–ին ՀՀ և ԻԻՀ միջև հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագրում կողմնորոշ նախատեսում էին ՀՀ և ԻԻՀ էներգետիկ ոլորտում համագործակցել, Մեղրիում՝ Արաքս գետի վրա կառուցելով հեկ: Այդ հռչակագրի 15 հոդվածում նշվում էր. «...Մեղրիի սահմանային կետում Իրանի Իսլամական

Հանրապետության հետ համագործակցել համատեղ հիդրոէլեկտրակայան կառուցելու գործում: Իրանական կողմը յայտնեց, որ այդ հարցը կը քննարկուի»<sup>67</sup>: Մեղրու հեկի շուրջ 2001 թ. դեկտեմբերի 27–ին ստորագրվեց հեկի կառուցման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր, որտեղ առաջարկվում էր ուսումնասիրել Արաքս գետի հիդրոէներգիա:

2007 թ. մարտի 19–ին ստորագրվեց Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու քնագավառում համագործակցության մասին համաձայնագիր, որը վավերացվեց երկու երկրների խորհրդարանների կողմից: Փաստորեն, այն լինելու է երկու հիդրոէլեկտրակայանից բաղկացած կասկադ, մեկը Հայաստանի կողմից՝ Մեղրիում, մյուսը՝ Արաքսիլանում՝ Իրանի կողմից: Հեկերից յուրաքանչյուրի հզորությունը պետք է կազմի 140 ՄՎտ: Յուրաքանչյուր կողմում կառուցվելու է ձևումային թունել հեկի աշխատանքների համար: Այդ թունելով ջուրը քերվում է հեկ, և արտադրվում է էլեկտրաէներգիա: Տարեկան արտադրանքը կկազմի շուրջ 841 միլիոն կՎտ-ժ էլեկտրաէներգիա, կունենա 90 մ ձևում և 18,2 կմ երկարությամբ թունել: Սրա վերաբերյալ վերջնական պայմանագիրը ստորագրվեց 2010 թ. հոկտեմբերի 15–ին ՀՀ էներգետիկայի նախարար Ա. Մովսիսյանի և ԻԻՀ էներգետիկայի նախարար Մ. Նամջույի միջև՝ «Մեղրիի հեկի կառուցման թույլտվության պայմանագիր»<sup>68</sup>:

Երկու կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել, որ շինարարության ամբողջ ֆինանսական խնդիրը կուծի իրանական կողմը: Կկառուցեն, կշահագործեն և արտադրված էներգիայով իրենց ներդրումները հետ կզենեն: Մի խոսքով՝ դա ենթադրում է կառուցում, շահագործում և հետհանձնում սեփականատիրոջը: Մեղրու հեկի շինարարության արժեքը, ըստ Մովսիսյանի, 2009 թվականի գործող գներով

<sup>65</sup> Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարար Ա. Սիմոնյանի հետ, 24. 01. 2012 թ.:

<sup>66</sup> Пути эффективной интеграции энергосистем стран Южного Кавказа, Баку, Ереван, Тбилиси, 2004, с. 43.

<sup>67</sup> ՀՀ ԱԳՆ, Դիվանագիտական բանբեր, Հայաստան–Իրան, Հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը, Կենտրոն, 1993 թ., էջ 21:

<sup>68</sup> Пути эффективной интеграции энергосистем стран Южного Кавказа, 41: Ստորագրված փաստաթուղթը, <http://www.mfa.am/hy/country-by-country/ir/>

կարծենա մոտ 323 միլիոն դոլար: Կառուցման համար անհրաժեշտ է 5 տարի ժամկետ: 15 տարի ժամկետ էլ անհրաժեշտ է, որպեսզի արտադրված էներգիայով փակվի՝ հետ գնվեն ներդրումները, որից հետո հեկը (համատեղ ստուգումներից հետո-Ի. Գ) կհանձնվի Հայաստանի Հանրապետությանը՝ սեփականության իրավունքով:

Քանի որ Հայաստանի շուկան շատ փոքր է, և նման ներդրումները մեր շուկայով փոխհատուցել քավականին ծանր կլինի, պայմանավորվածությունն այնպիսին է, որ արտադրված էլեկտրաէներգիան կառուցումից հետո՝ 15 տարվա ընթացքում արտահանեն: Հայկական կողմն ընդամենը վերահսկելու է, որ շահագործումը նորմալ իրականացվի: «Կայանը Հայաստանի սեփականությունն է լինելու, սակայն շահագործում են նրանք», — հավաստիացրեց էներգետիկայի և քնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանը<sup>99</sup>:

2012 թ. նոյեմբերի 8-ին, ի վերջո, իրականացվեց Մեղրու հէկի հիմնարկների արարողությունը. ըստ պայմանավորվածության՝ երկու հէկերի շինարարությունը կավարտվի հինգը տարուց և միևնույն ժամանակ կհանձնվեն շահագործման:

Լիովին կիսում ենք էներգետիկայի և քնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանի ներբողիչայ կարծիքը. «Անհերքելի է, որ մեր երկու բարեկամ երկրների միջև տնտեսական համագործակցության առաջատարն էներգետիկայի ոլորտն է», սակայն միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ իրականացված բոլոր աշխատանքները չէ. որ գոհացուցիչ արդյունք են տալիս: Իրականում այն տպավորությունն է ստեղծվում, որ Հայաստան-Իրան էներգետիկ ոլորտի վերաբերյալ միայն քննարկումների մասին ենք խոսում, բայց բուն արդյունքները ինչ-ինչ պատճառներով ձգձգվում են, իսկ երբեմն էլ ընդհանրապես կյանքի չեն կոչվում:

<sup>99</sup> Գայանն Սարիբեկյան, երկրորդակ հեկերը շուտով լույս աշխարհ կգամ, 17/09/2010, <http://www.hrparak.am/2010/09/17/erkvoryak-hecke-shutov-luyas-ashxarh-kgal/>

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
Եվրոպական կրթական գրասենյակի գրասենյակի ակադեմիայի, դասախոս

### ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱՌԻԹՅՈՒՆՆԵՐԻ

Հայ-իրանական գրական առնչություններն ունեն ավելի քան երկուսուկես հազարամյակի պատմություն: Դրանք նույնքան հին են, որքան այդ ժողովուրդները, նրանց լեզուն, պատմությունն ու մշակույթը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում հասարակական ու քաղաքական տարբեր պայմաններում հայ և իրանական ժողովուրդների միջև ձևավորված հարաբերություններն ունեցել են տարբեր դրսևտրումներ: Դրանք հանդես են եկել որպես ժամանակաշրջանին քնորոշ ընդհանուր երևույթներ և ուղղություններ, ծառայել են հայ և իրանական ժողովուրդների մշակույթների քնագավառներում որպես փոխադարձ ազդեցությունների և փոխառությունների միջոց:

Հայ ժողովուրդը, երկար ժամանակ գտնվելով Իրանի գերիշխանության ներքո, զգայն ազդեցություն է կրել իրանական ժողովուրդների մշակույթից ու հոգևոր կյանքից: Այդ ազդեցություններն իրենց կնիքն են դրել հայ ժողովուրդի ինչպես քաղաքական ձևակառուցիչ, այնպես էլ նրա հոգևոր կյանքի վրա:

Դրանք շարունակ հայ և իրանական ժողովուրդները, ապրելով հարևանությամբ ու դավանելով տարբեր կրոններ (սկսած այն ժամանակներից, երբ պարսիկները գրադաշտականներ էին, իսկ հայերը՝ հեթանոսներ), ունեցել են հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային միևնույն խնդիրները, ստեղծել են մշակութային ակադեմիական արժեքներ, որոնք ընդհանուր են թե՛ մեկի, թե՛ մյուսի համար:

«Այն ժամանակներից, երբ Արշակունիները գրավեցին Պարսկաստանը, և նրանց կրոնները շատավիճիկ հաստատվեց Հայաստանում»



նում, երկու երկրների հասարակական-կենցաղային կապն ավելի սերտ դարձավ»<sup>70</sup>: Արշակունիները, իշխանության գալով, իրենց հետ բերել են ազդեցությունների մեծ ազդան Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքում:

Հայկական գրեթե ստեղծումից առաջ ինչպես արթունիքում, այնպես էլ երկրի պետական ու հասարակական կյանքում օգտագործվել է պարսկերենը: Այս շրջանում հայերենը մեծապես ազդվել է պարսկերենից, նրանից վերցրել է բազմաթիվ բառեր:

Քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն հայտարարվելուց հետո նոր փուլ է բացվել հայ-իրանական հարաբերություններում:

Արշակունիների տիրապետության օրոք ձևավորված հայ-իրանական հարաբերությունները համեմատաբար թուլացել են Մասանյանների իշխանության օրոք, երբ Հայաստանի և Իրանի միջև լարվել են քաղաքական հարաբերությունները: Անկախ այդ հանգամանքից՝ հայոց մեջ շարունակում են պահպանվել իրանական դիցաբանական առանձին իրողություններ, սովորույթներ, երգեր, գրույցներ, հավատալիքներ և այլն:

«7-րդ դարի մատենագիր Սեբեոսի պատմության մեջ հիշատակություն կա հայոց մեջ լայն ճանաչում գտած իրանական էպոսի հերոս Սպանդիարի վերաբերյալ: Սեբեոսն առաջիններից է, որ անդրադարձ է կատարել խոսքով ու Շիրիկի առասպելին, որը հետագա դարերում մեծ արձագանք ու տարածում է գտել արևելյան շատ ժողովուրդների շրջանակներում, մշակման ենթարկվել վաթսուհից ավելի ստեղծագործություններում»<sup>71</sup>:

10-րդ դարից սկսած՝ հայոց մեջ աշխուժանում է հետաքրքրությունը պարսից գրականության, մշակույթի ու գիտության նկատմամբ: Պարսից լեզուն հետաքրքրել է հայ մտավորականներին: Մխիթար Հերացու և այլ մտավորականների վկայությամբ՝ Հայաստանում

պարսկերենը 11-12-րդ դարերում ոչ միայն ուսուցվել, այլև համարվել է գիտական լեզու: Այս տեսակետից, հատկապես, հիշատակման է արժանի Գրիգոր Մագիստրոսը, ով ազատ տիրապետել է պարսկերենին, ծանոթ է եղել իրանական էպոսին և օգտվել է պարսկական աղբյուրներից: Նրա «Թղթերը» աշխատության մեջ հիշատակված են Ռոստամին, Սպանդիարին, Ամդահակին վերաբերող մի շարք հետաքրքիր տեղեկություններ:

Պատմությանը հայտնի հայ մտավորականներից շատերը, տիրապետելով պարսից լեզվին, կատարել են գիտական արժեք ներկայացնող թարգմանություններ, կազմել են պատմիչ եղիշեի պատմությունում գործածված բառերի՝ «Բառո Վարդան գրոց» բառացանկը, որը պարսկերեն-հայերեն քառարան կազմվելու առաջին փորձն է եղել:

11-րդ դարից հետո հայ ժողովուրդը հաղորդակից է դարձել պարսից նոր մշակույթին, գրականությանը, հատկապես այն ժամանակահատվածում, երբ Հայաստանը գտնվել է սելջուկ-թուրքական, այնուհետև նաև մոնղոլական տիրապետության ներքո:

13-14-րդ դարերում, երբ դեռ աշխարհի շատ ժողովուրդներ չէին լսել իրանական էպոսի մասին, Հայաստանում արդեն ծանոթ են եղել Ֆիրդոսու «Շահնամին»: Հայ բանաստեղծներն իրանական էպոսին նվիրել են բանաստեղծություններ, իրենց ստեղծագործություններում նշել «Շահնամի» հերոսների անունները և սեփական հերոսների համեմատել են նրանց հետ:

Իրանական էպոսի մասին հայ գրականության մեջ եղած հիշատակությունները վառ ապացույց են, որ Թուրանի դեմ մղած Իրանի ժողովրդի հազարամյա պայքարի աքըր հոգեհարազատ է եղել նաև հայ ժողովրդին:

Բարու հաղթանակով ստեղծված իրանական վիպական երգերով ոգեշնչված հայ ժողովուրդը ոչ միայն Իրանի էպոսի հերոսներին տեղափոխել է Հայաստան՝ հարմարեցրել իր աշխարհըմբռնմանը, ամբողջապես հարազատացրել է ստեղծել հայ-իրանական «Ռոստամ Զալ» վեպը, այլև հայ իրականության մեջ գործածության մեջ է

<sup>70</sup> Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, с. 211.

<sup>71</sup> А. Л. Зювцова, Հայ-իրանական գրական ամուլություններ, երևան, 1963, էջ 23:

դրել «Շահնամեի» հերոսների անուններից շատերը, որոնցից ամենատարածվածներն են Ռոստոմը, Առուստամը, Սոհրաբը, Ջոհրաբը, Սպանդարը, Ջալը (Ջալիբեկ), Թեհմինեն և այլն:

Հայ աշխարհիկ բանաստեղծության մեջ նկատվել են պարսկալեզու գրականության անմիջական արձագանքներ: Երևան են եկել նրանց փոխառված առանձին ձևեր, արտահայտություններ, ոճեր:

Միջնադարյան հայ մտավորականության մեծաթիվ ներկայացուցիչներ, տիրապետելով պարսկերենին, օգտվել են պարսից հարուստ գրականությունից, մեծ ակնածանքով են վերաբերվել Իրանի գիտնականներին, օգտվել են նրանց աշխատություններից: Պարսից լեզվի իմացությունը հայ մտավորականների համար դուռ է բացել հարևան Իրանի մշակույթին ծանոթանալու համար, իսկ հայ հոգևորականության համար՝ իրանցի մուսուլման հոգևորականների հետ շփվելու, առանձին հարցերի շուրջ բանավիճելու համար:

«Հայ պատմիչների ու ժամանակագիրների հաղորդումներում տեղ են գտել հայատառ պարսկերեն աղոթքներ, կրոնական քնույթի նյութեր, սուրբ Մարկոսի և սուրբ Մաթեոսի ավետարանների համապատասխանաբար 16-րդ և 28-րդ գլուխների պարսկերեն թարգմանությունները, որոնք համարվում են կրոնական քնույթի հայերենից պարսկերեն կատարված ամենավաղ թարգմանությունները»<sup>72</sup>:

Թարգմանական շարժումը Հայաստանում, որն սկիզբ է առել հայոց գրերի գյուտից անմիջապես հետո (405 թ.) հայ-իրանական գրական հարաբերությունների ծիրում նույնպես մեծ դերակարությունի: Թարգմանական աշխատանքներում իրենց շոշափելի արտահայտություններն են գտել հայ ժողովրդի դարավոր մշակութային հարաբերությունները այլ ժողովուրդների, առաջին հերթին՝ իրենց անմիջական հարևանների հետ: Թարգմանական երկերի միջոցով հայ ժողովրդի սեփականությունն են դարձել անտիկ փիլիսոփայության, քրիստոնեական աստվածաբանության, քնագիտության, գեղարվեստական ու գիտական գրականության, բժշկագիտության

նվաճումները, որոնք մեծ դեր են խաղացել սեփական արժեքների ստեղծման ճանապարհին:

Իրանի միջնադարյան անվանի բժիշկ գիտնականներ Ալիցեննալի (9-րդ դ.) և Արու Բաբր Մոհամմադ իբն Ջաբրիա Ռազիի (11-րդ դ.) աշխատություններից օգտվել է հայ բժշկապետ Մխիթար Հերացին, որոնց մասին խոսել է մեծ ակնածանքով:

Արու Բաբր Մոհամմադ իբն Ջաբրիա Ռազիի բժշկագիտությանը վերաբերող աշխատություններից կատարված թարգմանությունները համարվում են պարսկերենից կատարված մեզ հայտնի առաջին թարգմանություններից:

Իրանցի այդ բժիշկների գիտական ժառանգությանը ծանոթ է եղել նաև նշանավոր հայ բժիշկ Ամիրովլաթ Ամասիացին, ով պարսկերենից կատարել է մեծ արժեք ներկայացնող մի շարք թարգմանություններ:

Մեծ արժեք է ներկայացնում նաև 12-րդ դարում Մխիթար Անեցու կողմից պարսկական աստղաբաշխական մի աշխատության թարգմանությունը:

Ֆրիկի և այլոց կողմից վարպետորեն պարսկերենից հայերեն կատարած թարգմանությունների մասին մեզ հասած տեղեկությունները նույնպես վկայում են, որ հայ մտավորականները տիրապետել են պարսից լեզվին, տեղյակ են եղել այդ լեզվով գրված գիտական և գրական ստեղծագործություններին:

Միջնադարյան իրանական խրատական ժանրի գրվածքների հայերեն թարգմանությունները, որոնք հիմնականում իրենց էությունը աշխարհիկ քնույթի են եղել, արտացոլել են Արևելյում իշխող սոցիալական հարաբերությունները, քարոզական սկզբունքներն ու համոզմունքները: Այդ կարգի թարգմանությունները հայոց կողմից ենթարկվել են համապատասխան խմբագրությունների, լրացվել են քրիստոնեական քնույթի խրատներով և հիմք դարձել հետագայում հայ իրականության մեջ քարոզա-խրատական քնույթի սեփական ստեղծագործությունների համար:

<sup>72</sup> Բ. Լ. Չուգասզյան, Հայ-իրանական գրական առնչություններ, 1963, էջ 36:



17-րդ դարում՝ Սեֆյանների տիրապետության օրոք, Սպահանի շրջակայքում ապաստան գտած բազմահազար հայերի, նրանց և տեղացի բնակչության միջև ստեղծված հարաբերությունների, ինչպես նաև հայ և պարսից մուսուլման հոգևորականների փոխհարաբերությունների և բանավեճերի մասին մեծ արժեք ներկայացնող տեղեկություններ է հաղորդել Խաչատուր Ջուղայեցին իր «Պատմութիւն պարսից» աշխատության մեջ: Խաչատուր Ջուղայեցին այդ աշխատությունը գրելիս օգտվել է ինչպես հայ մատենագրական, այնպես էլ պարսկական աղբյուրներից:

Հայ-իրանական գրական կապերում իրենց ուրույն տեղն են գրահեցնում պարսկերենին ազատ տիրապետող Վահան վարդապետ Ջուղայեցու ութ անուն գրքերը, որոնք հանդիպակաց էջերով գրված են հայերեն և պարսկերեն: Ավելի ուշ հայ մտավորականները գիտական ու պատմական աշխատություններ գրելիս նույնպես օգտվել են պարսկական աղբյուրներից: Այդ շրջանում ստեղծագործած Աքրահամ Պոլսեցին իր «Կենդանաբանություն» աշխատությունը կազմելիս, ինչպես վկայում է ինքը, օգտվել է պարսից աղբյուրներից:

Հայ-իրանական հարաբերությունների ծիրում զգալի է Խաչատուր Կեսարեցու մատուցած ծառայությունը: Նրա ջանքերով 1638 թ. Նոր Ջուղայի վանքում հիմնվել է Իրանում առաջին տպարանը: Այդ տպարանում է լույս ընծայվել առաջին տպագիր գիրքը՝ «Սաղմոսը», որի միակ օրինակն այսօր պահպանվում է Անգլիայի Բոդլեյան գրադարանում: Չորս տարի անց՝ 1641 թվականին, այդ տպարանում տպագրվել է «Հարանց վարք», 1642 թ.՝ «Սորիհրդատեր» և «Ժամագիրք» աշխատությունները:

1768 թ. պոլսահայ մտավորական Գեորգ Դպիր Տեր-Հովհաննիսյանը Կոստանդնուպոլսում պարսկերենից հայերեն է թարգմանել 15-րդ դարի իրանցի հայտնի տոմարագիր ու աստղագետ Արդուլազի իրն Արդուլտահման Թարրիզիի «Բանալի աստեղաց» աշխատությունը:

Գեորգ Դպիր Տեր-Հովհաննիսյանի մահվանից հետո՝ 1826 թվականին, Կոստանդնուպոլսում, Հակոբ Տյուզյանի առաջար-

նով ու հսկողությամբ հրատարակվել է 20 հազար քառ պարունակող «Պարսկերեն-հայերեն» առաջին տպագիր քառարանը, որը մի նոր ճանապարհ բացեց հայ քառարանագրության պատմության մեջ:

14-րդ դարից մինչև 18-րդ դարը հայ գրականության մեջ սակավաթիվ են հիշատակված պարսից գրողների ու նրանց ստեղծագործություններից կատարված թարգմանությունների մասին տեղեկություններ:

19-րդ դարից սկսած՝ հայ մտավորականների ջանքերով Հայաստանում, Իրանում և Սփյուռքում թարգմանվել են հայ և պարսից գրականության լավագույն ստեղծագործություններ, պատմիչներ Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ազաթանզեղուսի և Կորյունի մեծարժեք գործեր, Մատենադարանի 17-18-րդ դարերի պարսկերեն հրովարտականքի քառաստոր ժողովածու:

Հայ-իրանական գրական առեւտրությունները նոր փուլ են մտել Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո: Հայաստանի և Իրանի մտավորականների, գրողների, քանաստեղծների, մշակութային գործիչների միմյանց ավելի լավ ճանաչելու նպատակով 2004 և 2009 թվականներին Հայաստանում, 2007 և 2011 թվականներին Իրանում անցկացվել են գրական կամուջ գիտաժողովներ: Կազմակերպվել են հայ և պարսից գրականության դասական և ժամանակակից պոետների, գրողների, թատերագրերի լավագույն ստեղծագործությունների փոխադարձ թարգմանություններ, դրանց հրատարակություններ:

Հայաստանի Հանրապետությունում 2001 թվականին հիմնադրվել է հայ-իրանական «Միիր» մշակութային հասարակական ակումբը, որը «Միիր» հանդեսով հայ ընթերցողին է ներկայացնում Իրանի մշակույթն ու արվեստը:

2005 թվականին ՀՀ ԻԻՀ դասալստան մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ ստեղծվել է «Պարսից լեզվի և գրականության բարեկամների միություն»-ը, որը, 2006 թվականից սկսած, հայերեն և պարսկերեն լեզուներով հրատարակում է «Փարսիան» պարբերականը:

Իրանահայ մտավորականներն ու բարերարները մեծ ավանդ

ունեն իրանահայ համայնքի երիտասարդ սերնդին հայեցի դաստիարակելու հարցում: Նրանց ջանքերով Իրանում հիմնադրվել են հայկական դպրոցներ, միություններ, հրատարակչություններ, տպարաններ, հրատարակվել են գեղարվեստական գրականություն, հայոց լեզվի դասագրքեր:

1894 թվականի հունվարի 1-ին իրանահայ անվանի քաղաքական գործիչ Հովհաննես խան Մասեհյանի ջանքերով հիմնադրվել է թեհրանահայության առաջին շաբաթաթերթը, որի խմբագրի պատասխանատվությունը նույն թվականին ստանձնել է Վրթանես Փափազյանը: Այնուհետև Թեհրանում, Թավրիզում, Ապահանի Նոր Ջուղայում, Ռաշտում 1896 թվականից սկսած՝ հիմնադրվել են բազմաթիվ օրաթերթեր, շաբաթաթերթեր, արվեստի, գրականության, քաղաքական, տնտեսական ամսագրեր և պարբերականներ<sup>73</sup>: Այսուհանդերձ հայ-իրանական հասարակական, քաղաքական, առևտրատնտեսական, գրական, մշակութային, գիտակրթական հարաբերությունների և համագործակցությունների զարգացման ծիրում խիստ զգացվել է հայերեն-պարսկերեն և պարսկերեն-հայերեն բառարանների կազմված հրամայական պահանջը: Նման բառարանների բացակայությամբ և դրանց կարևորությամբ է պայմանավորված բառարանագրության բնագավառում պոլսահայ մտավորական Գեորգ Դպիր Տեք-Հովհաննիսյանի սկսած գործը շարունակող իրանահայ մտավորականների կատարած առաջին փորձը:

1933 թ. Թեհրանի «Փարոս» հրատարակչությունը հրատարակել է ջուղացի քահանա Գարեգին Հ. Կիրակոսյանի 30 հազար բառաքանակով, պարսկերեն բառերի հայերեն տառադարձությամբ, անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանի նախարանով «Պարսկերեն-հայերեն» բառարանը, որից հետո Թավրիզում, Թեհրանում և Երևանում լույս են տեսել «Պարսկերեն-հայերեն», «Հայերեն-պարսկերեն», «Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն», «Հայե-

րեն-պահլավերեն-գեղերեն և պարսկերեն համանմանությունների», «Արևմտահրանական միջին շրջանի փոխառությունները հայերենում», «Պարսկերեն-դարի-հայերեն և դարի-պարսկերեն-հայերեն», «Իրանի կենտրոնական շրջանների բարբառներ» բառարանները և «Հանրագիտարան իրանահայոց»-ը:

Հայ-իրանական գրական առնչություններում մեծ ավանդ ունեն նաև Հայաստանում և Իրանում իրականացվող գիտահետազոտական ուսումնասիրությունները, գիտական աշխատությունների և ուսումնական ձեռնարկների հրատարակումները:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայաստանում և Իրանում ձեռնարկվող վերը նշված միջոցառումների, իրականացվող թարգմանությունների, գրահրատարակությունների, պարսից և հայոց լեզուների իմացության ուղղությամբ տարվող աշխատանքների զարգացումը կնպաստի օրեցօր ընդլայնվող հայ-իրանական բազմակողմանի համագործակցության զարգացմանը:

<sup>73</sup> Անդրանիկ Հովհաննիսյան, «Իրանցիներն ու հայերը» (պարսկերեն), «Նոյնյա Բարումյան հիմնադրան» հրատարակչություն, Թեհրան, 1383, էջ 95-104:



**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ՝  
ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(1960-2012 թթ.)

**ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ,  
ՄՏԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**1963**

1. Եգալյան Հ. Մ., Ազրաբային հարաբերությունները Իրանում 19-րդ դարի առաջին կեսին: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1963, էջ 195:

**1967**

2. Балаян Б. П., Международные отношения Ирана в 1813–1828 гг. Ер., изд. АН Арм ССР, 1967, 295 с.

**1969**

3. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. IV. Իրան, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 405:

4. Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVIIIв. (Роль Новой Джульфы в ирано – европейских политических и экономических связях), Ер., изд. АН Арм. ССР, 1969, 166 с.

**1970**

5. Բուղալյան Ա Հ., Մովսիսյան Հ. Հ., Շեխոյան Լ. Հ., Սոցիալական մտղիվները ժամանակակից պարսկական արձակում, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 273:

6. Եգալյան Հ. Մ., Ազրաբային հարաբերությունները Իրանում 19-րդ դարի երկրորդ կեսին, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 271:

**1973**

7. Периханян А. Г., Сасанидский судебник. "Книга тысячи судебных решений", Ер., изд. АН Арм. ССР, 1973, 571 с.

**1974**

8. Բայրուրյան Վ. Ա., Թուրք-իրանական հարաբերությունները (1900–1914 թթ.), եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 389:

**1975**

9. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատ. VIII. Իրան, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 404:

**1976**

10. Բայրուրյան Վ. Ա., Սիասաթ-ե թորքին նեսրաթ բե Իրան դար ավայել-ե դարն-ե բիսթոմ, Սպահան, 1976, էջ 81 (պարսկերեն): Թուրքիայի քաղաքականությունը Իրանի նկատմամբ XX դարի սկզբին, Սպահան, 1976, էջ 81:

**1977**

11. Шахед Эпоса "Ростоме Залг" k'ordi, Бэрнвисар, пешготын, нвисарнаси в Н', Шнд. Ер., Нәширәтә Академия РСС Әрмқнистанәйәқ Әлма. 1977, 324 р. (քրդերեն): «Ռաստամն Ջալ» էպոսի քրդական պատումները, կազմեց՝ Հաջին Ջնդի: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 324:

**1978**

12. Դանեղյան Լ. Գ., Առաքել Դավիթեցու երկը որպես Սևֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 234 էջ:

**1980**

13. Եգալյան Հ. Մ., Իրանական պատմագրությունը Իրանում իմպերիալիստական տերությունների գաղութատիրական քաղաքականության մասին (19-րդ դ. երկրորդ կես), եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, 214 էջ:

**1981**

14. Козмоян А. К., Рубаи в классической поэзии на фарси (X–XII вв.). Ер., изд. АН Арм. ССР, 1981, 111 с.

**1982**

15. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XI. Իրան, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 345 էջ:

16. Մովսիսյան Հ. Հ., Հայ գրողները պարսկերեն: Մատենագիտություն: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 62 էջ:

**1984**

17. Բայրուրդյան Վ. Ա., Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին, Երևան, 1984, էջ 55:

18. Стамболцян А. Г., Внутренняя политика правительства национальной буржуазии Ирана (1951–1953 гг.), Ер., изд. АН Арм. ССР, 1984, 136 с.

**1986**

19. Оганесян Н. О., Абгарян Е. В., Еганян Г. М., Кондакян Р. П., Сараджян П. А., Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ер., изд. АН Арм. ССР 1986, 229 с.

**1987**

20. Եզանյան Հ. Մ., Հոգևորականության դերը Իրանի հասարակական-քաղաքական կյանքում (1953–1978 թթ.), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 219:

21. Յուզբաշյան Կ. Մ., Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 110:

**1989**

22. Բայրուրդյան Վ. Ա., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, «Հայաստան հրատարակչություն», Երևան, 1989, էջ 359:

23. Յուզբաշյան Կ. Ն., Ավարայրի ճակատամարտից դեպի Նվարսակի պայմանադրությունը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, էջ 265:

24. Մովսիսյան Հ. Հ., Շեխյան Լ. Հ., Ժամանակակից պարսից գրականության պատմության ակնարկներ (1941–1978), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, էջ 331:

25. Асатрян Г. С., Отглагольные имена в среднеперсидском и парфянском (на материале турфанских текстов), Ер., изд. АН Арм. ССР, 1989, 127 с.

**1990**

26. Մարգարտաշար–(Բորայաթ). կազմեց, տողացի պարսկերենից թարգմանեց, առաջարանը գրեց և ծանոթագրեց Ա. Կոզմոյանը, Եր., Խորհրդային գրող հրատ., 1990, էջ 240:

**1991**

27. Asatrian G. S. and Vahman E. West Iranian Dialect Materials from the Collection of D. L. Loriner. Vol. II. Short Stories of the Baxtiaris. Texts, Translation, Notes and Glossary. Copenhagen, 1991, 144 p.

**1992**

28. Հայաստանի հարակից երկրների պատմություն (հեղինակային կրկնվի՝ Ա. Ա. Բոզոյան, Մ. Տ. Բոզոյան, Հ. Մ. Եզանյան, Ն. Հ. Հովհաննիսյան, Հ. Գ. Մարգարյան, Ա. Ա. Միլյունյան, Պ. Մ. Մուրադյան, Պ. Ա. Չորանյան, Ռ. Գ. Սահակյան, Գ. Խ. Մարգարյան, Ա. Վ. Քոչյան և ուրիշներ), Եր., «Լույս», 1992, էջ 239:

29. Ստեփանյան Ս. Խ., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում (XIX դարի վերջ XX դարի սկիզբ), Եր., 1992, էջ 174:

**1993**

30. Օմար Խայամ, Քառյակներ, պարսկերենից տողացի թարգմանեց, վերջաբանը և ծանոթագրությունը գրեց Ա. Կոզմոյանը, Եր., «Նաիրի», 1993, էջ 43:

**1995**

31. Ռուդաֆի Ղափղներ, ղզգայներ, խոհական–փիլիսոփայական քանաստեղծություններ բեյթեր ոտքայաթ, պարս. տողացի թարգմանեց, կազմեց, առաջարանը գրեց և ծանոթագրեց Ա. Կոզմոյանը, Եր., «Ապոլոն», 1995, էջ 93:

**1996**

32. Բայրուրդյան Վ. Ա., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան, 1996, էջ 247:

33. Բայրուրդյան Վ. Ա., Նաղշ –ն արամանն–ն Իրանի դար թեջարաթ–ն բեյնոմեյաի թա փայանն սաղն–ն XVII միլադի, Թեհրան, 1996, 211 էջ (պարսկերեն): Իրանի հայերի խաղացած դերը միջազգային առևտրում XVII դարում, Թեհրան, 1996, էջ 211:

**1997**

34. Կոզմոյան Ա. Կ., Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան (10–16–րդ դդ.), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1997, էջ 224:



**1999**

35. Բայրուրյան Վ. Ա., Իրանն այսօր (տեղեկատու), Եր., 1999, «Ջանգակ-97», էջ 336:

**2000**

36. Ներսեսով Մ. Յ., Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը քննադրից՝ Բ. Պ. Կոստիկյանի: Եր. «Ջանգակ-97», 2000, 360 էջ (հայերեն, անգլերեն և պարսկերեն լեզուներով):

37. Ստեփանյան Ա. Վ., Նոր Ջուղայի կենցաղային մշակույթը, Եր., «Ջանգակ-97», 2000, էջ 216:

**2002**

38. Khurshudian E. Sh., Zohrabian A., Sassanian Coins of Armenia – State Historical Museum of Armenia Department of Coins and Medals. Almaty, 2002, 173 p.

**2003**

39. Կոզմոյան Ա. Կ., Ղուրանը հայոց մեջ, Եր., «Մուղնի», 2003, էջ 64:

**2004**

40. Հովհաննիսյան Ն. Հ., Իրան: Այաթոլլահ Խոմենիի դարաշրջանը, Եր., «Ջանգակ-97», 2004, էջ 112:

41. Baibourtian V., International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004, 261 p.

42. Պարսից պոեզիայի ընտրանի՝ Սիլվա Կապուտիկյանի թարգմանությամբ: Պարսկերենից տողացի թարգմանեց, առաջարանը գրեց և ծանոթագրեց Ա. Կոզմոյանը, Եր., «Մուղնի», 2004, էջ 126:

**2005**

43. Բայրուրյան Վ. Ա., Իրանի պատմություն (ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր., «Ջանգակ-97», 2005, էջ 783:

44. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտակներ: Պրակ երրորդ (1652 1731), կազմեց Բ. Պ. Կոստիկյանը, Եր., «Ջանգակ-97», 2005, էջ 728 (հայերեն, անգլերեն և պարսկերեն լեզուներով):

**2007**

45. Բայրուրյան Վ. Ա., Նոր Ջուղա, ՀՀ ԳԱԱ հրատ, Եր., 2007, էջ 152:

**2008**

46. Բայրուրյան Վ. Ա., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, ՀՀ ԳԱԱ հրատ, Եր, 2008, էջ 421:

**2010**

47. Խորիկյան Հ., Աբեմնեյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Եր. հեղինակային հրատ. 2010, էջ 57:

**2011**

48. Իսկանդարյան Գ. Մ., Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942-1960 թթ., «Ջանգակ-97», 2010, էջ 237:

49. Մարտոյան Թ., «Կարմեյանների տարեգրությունը» որպես Իրանի 17-18-րդ դարերի պատմագիտական աղբյուր, Եր. 2011, «Լիմուջ», հրատ, էջ 143:

50. Բայրուրյան Վ. Ա., Օսմանյան կայսրության պատմություն, Եր, 2011, էջ 716:

**ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ. 20 ՏԱՐԻ**  
**ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

13 մարտի, 2012 թ.

**Խմբագիր՝ Վահան Բայրուրյան**  
**Պատասխանատու քարտուղար՝ Գոհար Իսկանդարյան**

Հրատարակչության տնօրեն՝	Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝	Արա Բաղդասարյան
Սրբագրիչ՝	Գոհար Կիրակոսյան
Համակարգչային ձևավորումը՝	Տաթևիկ Ալեքսանյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:

Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 7 տպ. մամուլ:



ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28  
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am  
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am